

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերձագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ՄԱՏԻՆԱՇԱՐ «ՀՐԱՋԳԱՆ», ԹԻԻ 3

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
«ՀԱՅԿԱՇԷՆ», ԳՐԱՏԱՆ

1923  
Կ. ՊՈԼԻՍ

891.99  
h-75

891.99

19 NOV 2011

h-75

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

# ԱՐՁԱԿ ԷՋԵՐ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ՄԱՏԵՆԱՇԱՐ “ՀՐԱԶԳԱՆ,, ԹԻԻ 3

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1922

“ՀԱՅԿԱՇԷՆ,, ԳՐԱՏԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

29 APR 2013

32.859

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԿՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

**Յ. Մ. ՍԷԹԵԱՆ**

Տ Պ Ա Ր Ա Ն

Կ Ա Ջ Մ Ա Տ ՈՒ Ն

Թ Ղ Թ Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

Կ. ՊՈԼԻՍ, Չափաֆերլար



24782-59

**Ե Ղ Ն Ի Կ Ը**

— «Մի անգամ իմ բարեկամ մի որսորդ մեր հանդի անտառուտ սարերից մի եղնիկ նւէր բերեց երեխաներիս համար:»

Այսպէս սկսեց ընկերս աշնանային մի երեկոյ, երբ նստած միասին նրա պատշգամուն, հիացած նայում էինք հեքեթական վերջալոյսով վառվռուն սարերին, որոնց վրայ մակաղած հոտերի նման մեղմօրօր հանգչում էին ոսկեգեղմն անտառուները:

— «Այդ մի մատաղ ու խարտեաշ եղնիկ էր, խորունկ, սեւ ու ջինջ աչքերով, որ ծածկւում էին երկայն, նուրբ թարթիչների տակ:

Երբ բռնում էի նրան՝ քնքուշ մարմինը կուչ էր գալիս գրկիս մէջ, եւ սիրտը վախից թրթռում էր այնպէս արագ, թուչունի նման:

Կամաց-կամաց սովորեց նա մեր վրայ. չէր փախչում, էր վախենում մեզնից, մանաւանդ շատ մտերմացել էր րախաներիս հետ. նրանց հետ միասին վազվզում էր պարտիզում, նրանց հետ ճաշում էր, նրանց հետ քնում, ու վիղ նրանց ծոցում քնում:

Մի բան ինձ շատ էր զարմացնում. եղնիկը թէեւ անբան ընտելացել էր մեզ, սովորել էր մեր տանն ու դռանը, բայց մէկ-մէկ մեզնից թաքուն բարձրանում էր այս պատըշգամը, եւ ուշագրաւ, լռիկ նայում էր հեռու, անտառներով փաթաթուած սարերին, ականջները լարած՝ խորասոյզ լսում էր անտառների խուլ եւ անդուլ շառաչին, որ երբեմն ուժեղանում էր, երբեմն բարականում, նայելով հովերի թափին :

Նայում էր նա անյապէս անթարթ, եւ անյապէս ինքնամոռաց, որ երբ պատահում էր՝ բարձրանում էի պատշգամը, նա ինձ բաւական միջոց չէր նկատում եւ երբ յանկարծ ուշքի էր գալիս, նետի պէս ծլկում էր մօտիցս . . .

Արդեօք գիտէ՞ր նա, որ ինքը այդ դողանջուն անտառների ազատ երեխան է եղել, որ իր մայրը այնտեղ է կաթ տուել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջիւրները խփում կաղնիներին. արդեօք գիտէ՞ր, որ այդ խուլ շառաչը անո՞ւշ-անո՞ւշ օրօրել է իրեն առաջին անգամ, եւ երազներ է բերել իրեն, սիրուն երազներ . . .

Խեղճ եղնիկ . . . կարօտ՝ իր սիրած գուրգուրող անտառներից եւ զանգակ աղբիւրներից, իր խարտեաշ մօրից եւ շնկշնկան հովերի հետ վազող ընկերներից՝ հիմա տանջւում, տառապում է մեզ մօտ, մտածում էի ես, եւ անյապէս սրտանց ցաւակցում էի նրան . . . Չէ՞ որ նա էլ մեզ պէս մտածող եւ զգալուն հոգի ունի . . .

Եւ շատ էի յարգում նրան, խնդրեմ չծիծաղես վրաս, անյապան, որ երբ նա բարձրանում էր պատշգամը, հեռացնում էի երեխաներիս, եւ թողնում էինք նրան մենակ իր քաղցր յուշերի հետ . . .

Երբ գրկում էի նրան, այդ նազելի էակին եւ նայում

էի լեռնային աղբիւրների նման վճիտ աչուկների մէջ՝ տեսնում էի այնտեղ մի թախծալի, երազուն կարօտ . . .

—

Մի գիշեր, — մի քամի գիշեր էր, — սարերից անսանձ փչում էր քամին, դուռն ու լուսամուտները ծեծում ու ծեծկում. պարզ լսում էր, որ այնտեղ, անտառում, դարեւոր կաղնիներն ու վայրի ընկուզենիները ճակատում էին հողմի դէմ, աղմկում ու գոռում. եւ քամին բերում էր անընդհատ՝ անտառի այդ լիակուրծք խշշոցն ու մոռունը. ու թւում էր թէ հէնց մեր դռան առջեւն է աղմկայոյզ, հողմածեծ անտառը :

Երախաներս վախից կուչ էին եկել. մինչդեռ եղնիկը դողում էր մի խենդ սարսուռով. աչքերը կայծակին էին տալիս. անթարթ նայում էր լուսամուտին եւ ամբողջովին լսելիք դարձած՝ ականջ էր դնում անտառի շառաչին, որ խօսում էր նրա հետ մայրենի լեզուով :

— «Անտառը կանչում է նրան, ընկերներու ազատ վազքն է տեսնում նա մթին թաւուտների մացառօտ ժայռերն ի վեր», մտածում էի ես :

Մի փոքր յետոյ աւելի սաստկացաւ քամին՝ փոթորիկ դարձած, մէկ էլ աղմուկով բացեցին լուսամուտի փեղկերը, եւ մի հուժկու շառաչ միանգամից ներս խուժեց. եղնիկը յանկարծակի մի ոստումով ցատկեց լուսամուտի գոգը՝ աչքերը սուգելով շառաչուն խաւարի մէջ. ես իսկոյն վրայ վազեցի բռնելու, սակայն նա մի ակնթարթի մէջ թռաւ լուսամուտից պարտէզը եւ ծածկեց խաւարի մէջ :

Դէ՞հ, հիմա՛ գնա ու գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում . . . :

## ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԷԱՆ

(Հայկական առասպել)

Թափառական Հրէան, որի ոտներն անէծքի օրից դադար չէին առել, վեր բարձրացրեց մտազբաղ աչքերը, որոնց վրայ արեւակէզ ճակատի խորունկ խորշոմների հանգոյցներն էին իջել:

Եւ տեսաւ զարմանքով, որ այն վաղեմի ծանօթ ծովը, որի շառաչուն ափերով ինքն անցել էր մի քանի անգամ իր դարեւոր Թափառումների անկայան ընթացքին, հիմա մի ծարաւուտ եւ տատասկոտ անապատ է դարձել:

Եւ տեսաւ, որ նախկին ծովի կանաչ ալիքների փոխարէն, որոնց վրայ նաւերն էին օրօրուում փետուրի պէս, հիմա աւազի դեղին ալիքներն են գալարուում անապատային առիւծի բաշերի պէս: Եւ նաւերի փոխարէն դանդաղ քայլում է կարաւանը խուլ ղօղանջերով:

Երկաթեղէն ոտներով մօտեցաւ նա կարաւանի պետին եւ խօսական ծայտով հարցրեց.

— Քանի՞ օր կայ, որ այս տեղ անապատ է գոյացել:

— Խեղճ ծերուկ, խելքդ թոցրել ես, — բարձրաձայն ծիծաղեց առաջնորդը:

— Ճիշդ եմ ասում, անծանօթ բարեկամս, անցած օրերը մի անգոր ծով կար այստեղ, իսկ հիմա՝ անջուր անապատ . . . :

Եւ նրա ահագնեցիկ ձայնը գալիս էր դարերի մռայլ խորքից:

— Քո աչքերից չի երեւում, թէ դու խելագար ես, բայց

ինչ անհասկանալի բաներ ես ասում. մեր պապերի պապերի պապերը անցել են այս տեղով, ու նրանցից էլ շատ առաջ շատերն են անցել. իսկ այս անապատն աշխարհի սկզբից կար ու կը մնայ . . . : Երազի մէջ ես, ծերուկ, երազի մէջ . . . :

Մի դաժան ծաղր կծկեց Հրէայի սեւաթուր շրթունքների անկիւններում. եւ նորից մտրակած անտեսանելի հարուածող բազուկից՝ քայլեց նա:

Անցան դարեր, նորից դարեր:

Թափառական Հրէայի հազար անգամ երկիրը չափող ոտքերը մի անգամ վերստին ուղղեցին դէպի անապատը. երբ մօտեցաւ այդ ծանօթ վայրի սահմաններին՝ տեսաւ, որ երէկւայ ամայի անապատում հիմա մի մարդաշատ քաղաք է եււում ու զեւում:

Մօտեցաւ քաղաքի մեծ դռանը եւ միամտօրէն հարցրեց դռնապանին.

— Ինչ շուտ շինեցիք այս քաղաքը:

Դռնապանը շատ տարօրինակ գտաւ այս հարցը:

— Ինչպէս թէ . . . շինեցինք, վաղուց, վաղուց գոյութիւն ունի այս քաղաքը. մեր պապերի պապերի պապերը չգիտեն անգամ թէ ո՞վ եւ ե՞րբ ձգեց այս քաղաքի հիմերը. այս քաղաքն այնքան հին է, որքան աշխարհը:

— Հրմ. — դժնդակ ծիծաղեց Հրէան, — երէկ ես անցայ այստեղով — անապատ էր միայն օձոտ, ժէւոտ անապատ, իսկ այսօր — քաղաք:

Դռնապանը խելագարի տեղ ընդունեց նրան եւ չպատասխանեց:

Մռայլներով լեցուն աչքերը մեծ Թափառականը նետեց քաղաքի վրայ. — փողոցներում եւ շուկաներում խոնարմ էին մարդիկ, կանայք եւ երախաներ:

Ոմանք աճապարում էին մտահոգ, ոմանք արեւի տակ անհոգ զուարճանում. իսկ երախաները զուարթ խաղ էին անում աղբիւրների շուրջը :

Կանայք՝ պճնւած գոհարներով եւ վարդերով, հրապուրում էին այրերին, եւ նրանց երազուն հայեացքները սիրոյ անվախճանութիւնն էին խոստանում :

Հրապարակների վրայ պերճախօսները որոտում էին յաւերժական ճշմարտի եւ գեղեցիկի մասին, մարդու տիեզերական արժէքի եւ նրա գերագոյն նպատակների մասին... :

Նորից մի դաժան ծաղր գալարեց՝ անապատի օձի պէս՝ նրա մթագին շրթունքների վրայ . — «Այն թուշող վայրկեանը, որ մարդիկ կեանք են անւանում, յաւերժական է թուում այս խեղճերին . . . քիւր անգամ խեղճ մարդիկ, գորտերի պէս իրենց ճահիճը տիեզերք են կարծում եւ չընչին կոկոռոցով աշխարհի անասան օրէնքներն են վարում, եւ անհունի անլոյծ գաղտնիքները կարդում, ո՛վ փրկարար պատրանք . . . անապատի վրայից սահող ամպի ստուերից աւելի անկայուն է ձեր հետքը ժամանակի մէջ, սնապարծ մարդիկ . . . տեսնենք վաղը ի՞նչ է լինելու . . . » :

Եւ վերստին մտրակւած անտեսանելի հարւածող բազուկից՝ քայլեց անդու դարերի Թափառականը :

— Անցան դարեր, նորից դարեր, եւ եկաւ վաղը :

Յիշեց նա այդ քաղաքը եւ ուզեց անցնիլ նրա մօտով . երբ հասաւ նրա սահմաններին՝ նկատեց որ քաղաքի տեղը հիմա փռւում է մի շքեղ դաշտավայր՝ ծաղկաւէտ եւ գարնանագեղ . գետակի ափին նորաբողբոջ աղջիկները պարում էին ու երգում :

Եւ մի փոքր հեռու հովիւը արածեցնում էր խաշների հօտը սրնգի դայլայլների տակ :

Մօտեցաւ հովիւին եւ հարցրեց .

— Ո՞ւր գնաց այստեղից քաղաքը :

— Ի՞նչ քաղաք, — ապշեց հովիւը :

— Անցած օրերը իսկ եւ իսկ այս կողմերն էի . մի մարդաշատ քաղաք էր եռում այստեղ, նրա մասին է խօսքս, ո՛ւր է նա :

Հովիւը քար կտրած նայում էր Հրէային :

— Ե՛րբ առաջ եկաւ այս դաշտը . — նորից հարցրեց նա :

— Ի՞նչ ես ասում, մա՛րդ Աստծու, խելքդ հօ չե՞ս կորցրել . այդ ի՞նչ սարսափելի բաներ ես ասում . մեր պապերի պապերի պապերը, եւ էլի առաջ, այստեղ իրենց հօտերն են արածեցրել . այս դաշտը աշխարհի սկզբից կար եւ կը մնայ . . .

Հինաւուրց Թափառականի մռայլ շրթունքները նորից գալարեցին, եւ արգահատանքի մի հայեացք, դաշոյնի պէս շողաց նրա ահեղ աչքերում :

— «Եղկելի՛ մարդիկ, երէկը նրանց համար գոյութիւն չունի, այսօրն է նրանց համար միակ իրականը եւ յաւերժականը . ո՛վ կենսատու պատրանք . . . երգում են եւ պարում, եւ չգիտեն, որ իրենց ոտների տակի երէկւայ գերեզմանը վաղը իրենց գերեզմանն է լինելու . . . » :

Եւ նորից մտրակւած անտեսանելի հարւածող բազուկից՝ քայլեց նա : Գզգզած եւ փրփրադէզ մազերը ալեկոծւում էին նրա դժնետեսիլ ճակատի վրայ : Քայլում էր եւ հոգու խորքում դառնագին խորհում մարդու միամտութեան, նրա գոյութեան ակնթարթի եւ չնչինութեան վրայ եւ նրա բախտի անհաստատութեան վրայ . . . :

## Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Շքեղ եւ մեծահարուստ մի դղեակ կնր ադամանդէ լեռներից բարձր, արծւի թեւերի վրայ :

Սլացիկ սօսիւններն ու ցարասիներն գիշեր ցերեկ սօսափում էին այնտեղ. նրանց մետաքսէ տերեւների վրայ մըշտամբունջ շատրուանների ցօղերն էին շողշողում :

Յակինթէ վարդերի եւ դրախտային ծաղիկների բոյրը ծովացել էր այնտեղ եւ մարմարեայ պարիսպներից դուրս՝ արեւակէզ լեռներն ու ձորերը թաթախել նեկտարի մէջ :

Հագարաբեզ թռչունների դայլայլները աղբիւրների պէս կայլակում էին ամէն մի թուփի եւ ծաղկի անութների տակից, ծառերի զմրուխտեայ սաղարթների ցանցից :

Արեւի ճաճանչները ոսկեղէն թիթեռների պէս թըրթռում էին ամենուրեք, ծիծաղում պայծառ ու անծայն, եւ հովասուն ստերների տակ թաքնում :

Գիշերները լուսնկայի շողերը արծաթեայ թելերով շրջադարձներ էին հիւսում հեքիաթների, եւ պարուրում չքնաղ դղեակը :

Առաւօտից մինչեւ առաւօտ, եւ երեկոյից մինչեւ երեկոյ այնտեղից լսում էր անհոգ ծիծաղի զարթ կարկաչիւնը՝ մտերմական համբոյրների դիւթական հնչիւնների հետ, եւ անուրջների կապոյտ առաքաստների ծփանքը՝ սրտաբուխ երգերի ոսկի ալիքների հետ :

Եւ մի օր, բացւեց դղեակի դուռը, դուրս ելաւ մի պատանի՝ սպառազէն, մրրկաբաշ նժոյգի վրայ :

Նրա յետեւից երկաթի նիզերը շառաչիւնով կնքեցին դուռը :

Գատանին վճիտ հայեացքը ձգեց շուրջը եւ խթանեց նժոյգը, սլացաւ լեռներով ու ձորերով, եւ ոտք դրեց մարդկային աշխարհը : Ինչպէս մի փետուր, ընկաւ նա հողմերի եւ հեղեղների բերանը :

Ամեն տեղ եղաւ, ամեն ինչ տեսաւ :

Եղաւ աշխարհի տէրերի ապարանքներում, խմեց աստղափրփուր գինին եւ գլուխը դրեց գեղեցիկ կնոջ կրծքին. արիւնտոտող համբոյրների տակ գոցեց աչքերը, եւ երբ զարթնեց՝ գլուխը չոր բարձի վրայ էր. եւ մի ուրիշն էր այրող համբոյրների տակ քուն մտնում այն գեղեցիկ կնոջ գրկում :

Եղաւ նա աղքատների խրճիթներում, ուր քաղցած ծընողները իրենց երեխաների բերնից քարի պէս հացն էին խլում :

Եղաւ կուրի դաշտերում, ուր մարդկային արիւնը հեղում էր գինու պէս եւ հարբեցնում էր սպանելու անյազ տենչով սպանողներին, որոնք եւ սպանողներն էին միանգամայն :

Եղաւ կաճառներում, ուր գիտունները մարդկային անզօր մտքով ճշմարտութեան վճիտ ջրերն էին պղտորում միայն :

Ջրկաճներին օգնելու համար կրեց նա շղթայ, ծեծ ու խոշտանգում մթին զնդաններում :

Ձեռք մեկնեց մեծատուններին, եւ կոշտացած ափի վերայ դրին անարգանքի թուքը :

Եւ նա յոգնած, յուսաբեկ՝ երերուն ծնկները քարշ տալով, գնաց, գնաց եւ ցուպին յենած՝ կանգնեց իր շքեղ դղեակի առջեւ :



Բախեց դուռը, բախեց, եւ բացող չեղաւ :

Բախեց ու նորից բախեց, եւ բացող չեղաւ :

Օրերն եղան տարիներ, եւ նորից բախեց եւ բացող չեղաւ :

Յոգնած եւ յուսաբեկ ընկաւ դուռն առջեւ մի քարի վրայ, խորշումս՝ հակատը սեղմեց չոր ծնկներին, մաշած ձեռքերը հիւսեց մրրկածեմ գլխի վրայ եւ սպասեց դուռն բացուելուն :

Եւ ասես, հեռաւոր երազների միջից՝ լսում էր նա անհոգ ծիծաղի զլարթ կարկաչունը մտերմական համբոյրների դիւթական հնչիւնների հետ . եւ անուրջների կապոյտ առազաստների ծփանքը սրտաբուլս երգերի ոսկի ալիքների հետ . . .

Սպասեց եւ նորից սպասեց, եւ բացող չեղաւ :


Յաւիտեան գոց էր դղեակի մուտքը նրա համար . . .

Ա՛խ, նա իմ մանկութիւնն էր, ա՛յնպէս շքեղ եւ ա՛յնպէս մեծահարուստ, ադամանդէ լեռներից բա՛րձր, արծրի թեւերի վրայ . . .

1912



Ջ Ի Ն Գ Ի Զ - Խ Ա Ն



Կարայ-Քորումի պարիսպների սուերները աշխարհներ են ծածկում, եւ աշխարհների աչքն ու ականջը դէպի Կարայ-Քորում են ուղղած :

Ազգերի արիւնով շաղախեց Ջինգիզ-խանը Կարայ - Քորումի պարիսպները, եւ ազգերի հազար, հազար ու բիւր գանգերով բուրգ ու աշտարակ շինեց Ջինգիզ-խանը :

Ոսկեկուռ Քէօշքում նստեր է խանը փղոսկրէ գահոյքի վրայ, զառամած գլուխը սպիտակ մազերի տակ, ինչպէս յաւերժական ձիւների տակ Տեան - Շանի ամպածրար գազաթը :

Սակայն նրա գահոյքի ոտները պատանդան են շինել մեծ Ովկիանոսը, մինչեւ բոցավառ ծովը Հնդու . Գորի-Շամօ մրրկաշունչ անապատից մինչեւ երկնասոյգ բարձրուքները Կաւկազի :

Մռայլ աչքերով, ինչպէս անդունդները Վրկանայ Մովի՛ փուլել է գահոյքի վրայ մեծ Մճնդօլը : Նա ձերացել է լեռները թունդ հանող ոտքերը հազիւ են շարժւում, ազգեր սասանող ձայնը մարել է . վագր ու առիւծ մէկտեղ սանձող բազուկը՝ թուլացել :

Մեծ Վէզիրը եւ պաշտօնականները ծնրադիր թաւապատ գորգերի վրայ, խանի պատանդանի ներքոյ, նստել են գլխիկոր՝ ականջ դարձած՝ սպասում են խանի հրամաններին :

— Է՛յ, Վէզիր, դո՛ւ ներքինապետ,— նւաղած ձայնով դիմում է խանը, ծանձնանում եմ ես, սաստիկ ծանձրանում . . .

կանայք բերէք, թո՛ղ պարեն, երգեն, մօտս լողանք անեն...  
Գինի՛ բերէք, է՛յ, գինի՛ բերէք, հարիւր տարւայ հրաբորբո՛ք  
գինի . . .

Կրնկի վրայ բացւում են երեւոտեայ դռները, եւ երգի  
ծիծաղի եւ բուրմունքի հետ խանի սէրայը ներս են կար-  
կաչում մատաղ եղնիկների բոյլեր—չքնաղ, մարմարիւրան  
կանայք, որոնց որսացել են բերել Գանդահարի սաղափէ  
ապարանքների միջից, պարսիկ աշխարհի վարդաստանների  
միջից:

Սէրայի հսկայ դահլիճում, խանի շուրջը, հոյլք-հոյլք  
պարում են հիւրի-փէրիները՝ մերկ եւ հոլանի. նրանց՝ ար-  
շալոյսների նման շքեղ. եւ շուշանների նման մաքուր ու  
քնքուշ մարմինները բուրում են Հնդստանի եւ Արաբստա-  
նի անուշ կնդրուկներով եւ իւղերով:

Բուռն եւ քնքուշ պարում են նրանք, գիշերների՝ պէս  
սեւաթօյր եւ արեւի պէս ոսկի մագերը լուսեղէն մէջքերի  
վրայ, փաթաթւում են կարօտի պէս նրանց նագելի պա-  
րանոցներով, եւ արբեցուցիչ բուրմունքով ողկո՛յզ - ողկո՛յզ  
կախ են ընկնում ձիւնափառ կրծքերի վրայ, ինչպէս սեւ  
եւ ոսկի ամպերը Կուէն-Լուհի ձիւների վրայ:

Դրախտի խնձորների պէս անուշաբոյր ստինքները  
թրթռում են լուսնկային ծոցերում, ինչպէս այն ծիրանի գի-  
նին բերեղեայ սկահների մէջ . . .

Ինչպէս հագարան-բլբուլներ Ձինմաչինի արքայական  
վարդարաններում, այնպէս երգում են փէրիները կարօտի  
եւ անուրջների երգերից, համբոյրների եւ սիրոյ գիշերների  
մասին, երգում են ու պարում, բուրում են ու կաքաւում,  
եւ երազանում խանի շուրջը. — եւ սիրոյ մոռացաբաշխ  
գիրկն են հրապուրում նրան:

Բայց լսում է Ջինգիզ-խանը եւ չի լսում, լսում է, բայց  
չի սրբում հանգած արիւնը նրան:

Չմրուխտէ եւ յակինթէ թասերի մէջ եռում է գինին՝  
երիտասարդ զինուորի արեան պէս. բորբոքում է նա, ում  
լեզւի վրայ մի կաթիլ է ծորում . . .

Եւ խամում է Ջինգիզ-խանը:

Ճենապակէ աւազանների վարդաջրերի մէջ լողանում  
են փէրիները. նրանց մագերի ողկոյզներից աղամանդի եւ  
մարգարիտի հատիկների պէս ջրերի կաթիլները ցայտում  
են վեր ու վար վազող շատրւանների հետ, եւ վարդաջրերի  
գոհարները բրբջալով, ծիծաղելով թռչում, ցատկոտոյում են  
հեռո՛ւ, ընկնում են Ջինգիզ-խանի հակատի վրայ եւ սառ-  
չում, սառոյց դառնում:

Նայում է խանը ոսկի ձկների հետ շողջողացող հիւրի-  
ների հրավառ մարմիններին, նայում է, բայց չի տեսնում,  
տեսնում է, բայց սառած սիրտը նրա չի ալեկոծւում:

Քնարի, սրնգի եւ ծնծղայի ներդաշնակութիւնը հիւսւե-  
լով եւ ոլորելով մարմարեայ սիւնների հետ՝ բարձրանում է  
վեր, փռւում է յակինթէ առաստաղին եւ թռչում է դուրս,  
երկինք, բայց չի հասնում խանի ականջին, բայց չի փոթոր-  
կում քարացած հոգին նրա:

Արեւաչեայ եւ ծովաչեայ փէրիների հայեացքների հուրն  
ու նետերը ճառագայթում են ամէն կողմ, տարափի պէս  
թափւում են խանի վրայ—համբոյրների եւ հրապոյրների  
ուստայն են հիւսում նրա շուրջը, բայց պողպատեայ վահան  
է դարձել խանի սիրտը. եւ ո՛չ մի նետ չի խոցում նրան,  
ո՛չ մի կրակ չի ջերմացնում նրան:

Չմրուխտէ եւ յակինթէ թասերի մէջ եռում է գինին՝  
երիտասարդ զինուորի բորբոքուն արեան պէս, բոցավառում  
է նա, ում լեզւի վրայ մի կաթիլ է ծորում:

նա արեւի աշխարհներից է բերւած, եւ արեւնուս է արեւի խանդավառ երազներով նրան, ով մի թաս միայն խմում է արեւի-զինուց :

Եւ խմում է Խանը. սակայն նրա հոգին սառոյց-սառ-նամանիք է, եւ արեւը չի հալում նրան:

— Թո՛ղ գայ ինձ մօտ Գիւրջիստանի սարերում որսած վիթը, թո՛ղ նա փայփայէ ինձ . . .

Եւ զեփիւռի պէս սահելով, գարնան պէս բուրելով վա-զում է մի գեղուհի, փարւում է Խանի ծնկերին, մանկան պէս թեթեւ, երազի պէս հեզ, նստում է նրա չորացած ծնկներին :

Խանը հաւաքում է ուժերը, կարկառում է կծկւած բազուկները, գրկում է լուսափթիթ աղջկան, թոյլ ու նւաղ սեղմում իր մարած կրծքին եւ հազիւ հազ կարողանում է անշարժ, անծայն մի համբոյր տալ Գիւրջիստանի բլուրների նման բարձր ու դալար, վարդի կոկոնների նման նորաբող-բող ստինքներին :

Եւ թուլացած վայր է թողնում ձեռները մեծ Խանը. ծնկները դողդոջում են փէրու քնքուշութեան տակ . . . Նեղանում է արքան, զայրանում է նա . . .

— Դո՛ւրս տարէք բոլորին, բոլորին, հարկաւոր չեն ինձ, ծանծրացնում են ինձ . . . բարկացած հրամայում է Խանը կերկերուն ձայնով :

Աւելի մռայլում են Խանի թորշոմած աչքերը . — «Ով կանանց է տիրում, նա, իրօք, աշխարհին է տիրում. իմ թագաւորութիւնը չարժէ երիտասարդ հովիւի կրակէ մի համբոյրին». այս միտքը օձի պէս սողաց նրա գլխով, թոյ-նով խայթեց նրա սիրտը, եւ գլուխը կախ ձգելով յոգնած, խորտակւած կրծքի վրայ՝ նիրհում է Խանը :

Ամենագոր է մեծ-Մօնղօլը, կէս-աշխարհի տէրն է նա,

մի հրամանով նրա կարող է աշխարհի միւս կէսն էլ պառ-կել նրա գահի տակ. նա կարող է մի քմահաճոյքով խոր-տակել Մսրայ պղնձէ դռները եւ ջընաղակերտ Բիւզանդիոնի ծուխը երկինք հասցնել . . . Սակայն նա անկարող է մի քըն-քուշ աղջիկ համբուրել անգամ . . .

— Վէզի՛ր, ծանծրանում եմ ես . . .

— Հրամայի՛ր, մեծ Խան, արքաների արեւ, քո կամ-քի առջեւ ամէն ինչ հյու է, մեծ Ովկիանոսից մինչեւ աշ-խարհը Ֆռանկների . . .

«Արքաների արեւ», շատ օտարոտի եւ ծաղրական թը-ւաց այս սովորական կոչումը Զինգիզ-Խանին, — «Բայց հանգած արեւ», մտքի մէջ այսպէս ուղղեց նա, «հանգած արեւ, որից չնչին կայծն անգամ գերազանց է» . . .

— Ի՞նչ, . . . մինչեւ Ֆռանկների աշխարհը . . . Վէզի՛ր, ես կամենում եմ որսի գնալ մինչեւ Ֆռանկների աշխարհը. նժո՛յգս բերէք, պատերազմի վաղեմի ընկերիս հարազատ ճետը. հաւաքեցէք թիկնապահներս բոլոր, զօրքերս բոլոր. ուզում եմ որսի գնալ՝ Խուարէզմի անծայր դաշտերում՝ առիւծ որսալով հասնել հեռո՛ւ, հեռո՛ւ Ֆռանկների աշ-խարհը, որ արիւնս տաքնայ, արիւնս եռայ . . . Ծո՛ւտ գը-նանք, սրարշաւ գնանք . . .

Ասաց եւ եղաւ :

Ոսկեկուռ Քէօշքի աշխարհաչափ հրապարակից հնչում է ահա ուժգին եւ որոտալից ռազմական շեփորը, եւ փո-թորկում է ծովի նման՝ մեծ քաղաքը. մի ակնթարթում դուրս են թռչում զինուոր ու զօրապետ, զինուում են ու զը-քահաւորում, նժոյգները դուրս են հանում ախոռներից, եւ շտապում են հաւաքել ապարանքի հրապարակում :

Ծածանում են հսկայ արծիւների թեւերի նման ոսկե-թել եւ արիւնավառ դրօշակները, որոնք ռազմի փառա-



24782.59

պանծ դաշտերում Խանի գլխի վերեւ այրել են Հնդաստանի արեւի տակ, եւ Թուրանի ահեղ հողմերի հետ շառաչել :

Ջորպպետների նժոյգները կրծում են պողպատէ սանձերը, վրնջում են ու դոհում սալալատակները, չորս կողմ կայծեր սփռելով :

Ջորքի նիզակների եւ մերկ սրերի խիտ անտառը արեւի հառազայթների տակ հուրհրում է :

Նախարարների բազուկների վրայ բազմած դուրս է գալիս Խանը՝ զինւած գոհարակուռ զէնքերով . խրխնջում է ու ծառանում նրա մրրկածին նժոյգը, որի հրեղէն հայրը կրծքով Ձինու հազարամեայ պարիսպներն է խորտակել եւ հզօր սմբակներով էլքրուսի պողպատէ կողերից ժայռեր է պոկել . . .

Նախարարները հեծցնում են Խանին նժոյգի վրայ. դողդոջ ձեռքերով բռնում է նա ոսկէ սանձը, եւ նժոյգը տեսնելով իր տիրոջը, եռանդազին թրթռում է եւ ոտքը թափով սալաքարին հարւածում :

Ցնցւում է Խանը, օրօրւում է Խանը, դողում է նա, սանձը ընկնում է ձեռքից :

— Իջեցրէ՛ք ինձ ձիուց, չեմ ուզում, — հրամայում է Խանը :

Լսւում է ռազմական շեփորը, եւ հրապարակը ամայանում :

Հզօր է Ձինգիգ-Խանը . նա կարող է հրամայել մի վայրկեանում խալիֆաների Բաղդադը Տիգրիսի փրփրաբաշ ալիքների տակ ծածկել, Արաբստանի անապատների ծովաժածան աւազը մինչեւ արեւի ակը բարձրացնել . նրա հրամանով կարող են Ֆուանկների աշխարհը հողի տակ թաղել . . . Սակայն նա անզօր է մի նժոյգի սանձահարել :

Հիւանդ է Խանը, մահամերձ հիւանդ . նա պառկած է մետաքսէ մահիճի մէջ :

— Էյ, վէզիր, — հազիւ շնջում է Խանը, — մահը մօտենում է . հրամայում եմ, շրջապատեցէք քաղաքը՝ զօրքով, զինւած. պարիսպները, դարպասները, բուրգերն ու աշտարակները, բոլորը հսկեցէք, որ մահը ներս չտղայ . պալատս ամեն կողմերից, տանիքից, դռներից, պատուհաններից հսկեցէք արթուն, որ մահը ներս չտողոսկի . դարան մտէք, որ եթէ մահը գայ՝ բռնէք, սպաննէք . . .

Ասաց եւ եղաւ :

— Վէզիր, սուրս տուր ձեռքս, որ Մահը գայ, սիրտը խրեմ նրա . . .

Կատարում են հրամանը :

— Ձեմ կարող վերցնել սուրս, ծանր է, դաշոյնս տուր . . .

Եւ կատարում են հրամանը :

— Վէզիր, թեւս չի շարժւում, ո՞վ է բռնել իմ թեւերս :  
= Ո՛չ ոք, Տէր իմ, ո՞վ կը յանդգնի բռնել աշխարհի տիրող բազուկները :

— Վէզիր, մութն է, աչքերս չեն տեսնում, ո՞վ հանգցրեց ջահերը :


= Ո՛չ ոք, Տէր իմ, ո՞վ կարող է խիզախել հանգցնել տիեզերակալի ապարանքի ջահերը :

— Վէզիր, շունչ չկայ, ո՞վ է նստել իմ կրծքիս եւ շունչս խլում, իսկոյն կախեցէք այդ յանդուգին . . .

= Տէր իմ, ո՞վ կարող է համարձակել քեզ մօտենալ . . . ոչ ո՞ք չկայ . . . պատասխանում է վէզիրը :

Քարէ լուծիւնը հնչում է ապարանքը :

— Էծս եմ, Մահն եմ. ձեռքերդ բռնել, խաւարել աչքերդ, կրծքիդ նստել :



Հ ժողովրդին ինչպէս եկար, նա ազգակ, ստահակ, — վերջին ուժերը հաւաքած գոչում է Խանը, Բայց ձեռները թուլացան բոլորովին եւ դառնայր վարարնկաւ :

Վէզիր, ինչպէս եկաւ, ինչպէս վաղար, դաւանաւորութիւն, կարգաւոր, զգոմաստղայա . ծաւմիք իրողորոս — ան հեռւից չեմ եկել, ապոււմէ, Մահը, ես միշտ բռնէ չնէի, քեզնից անբաժանները երիտասարդացիք ու առից, որ էի ինձ յաղթում, բայց էս մարտերով սեփեր մաշեցի : հիմա յաղթահարած էս դո՛ւք, վերջին խօսքը արաւ եւ գնանք . . .

Վէզիր, ճշմարտութեամբ ինչպէս թեմք, աղբիւրներն ու գետերը, ծովերն ու ովկիանոսները թռչնաւոր ընկէք, որ ինձ հետ մեռնին ամենքէս, որ ամենքէս ամենքէս, զսեցնանի հրամանը, որովհետեւ Մահը բռնել էր նրա լեզուն :

— «Այդ իմ իրաւունքն է, որ քանզի Մահը մանի վրայ, այդ ինչպէս էր. դու քոնն, այսպէս գնանք . . .»

Ապաստեց ինքնը եւ մահովն լսելի լծայնով շնորհաց —

— Վէզիր, իմ տապանիս վրայ այսպէս գրիր «Քին գիշարներ տիրեց աշխարհին, բայց աշխարհը մի փոշի-հատիկ է մահուան առջեւ . Մահն է աշխարհների միակ տէրը, նա է ամենազօրք արեգակի մէջ, նա է անմահ ճշմարտութիւնը մի միայն» . . .

1907 թ. ցեղով եւ յետոսմ է ինչ, լայն յմտց, զիք է — . . . միջոցմալ, իւր գէրմայի միոյմ, Նոյմ սչմտց . . . յամմոսն բնգ յիմոցմոսն է իրողայ ինչ, եւ զէ՛ — : զցիք է Նոմաստաուայա . . . լայն գն ին : զցմաղայա է Նոցմն զմիմոյ իղաթ : ինչպայ, լմնոց իղմցմոն Նմ մմաՄ, Նմ սմ, — : յետոսմ իղմցմոյ, իղմց

### Ա Հ Մ Է Դ Ի Ո Ւ Ղ Տ Ը

Ահմէդը հինգ ուղտ ետեւը ձգած գնում էր քաղաք : Արեւը սաստիկ այրում էր, իսկ ծարաւը մարդու ջրթուները պատառ-պատառ էր անում :

Ահմէդի բախտիցն էր, որ հէնց կիզիչ կէս-օրին հանդիպեց մի աղբիւրի, որ հանապարհի ափին ուրախ ու պայծառ քթքում էր ծառերի զով սոււերի տակ :

Ահմէդը ուղտերը բաշեց աղբիւրի գուռների վրայ, լաւ ջրեց, ինքն էլ մի կուշտ խմեց, յետոյ երկար ու մէկ փուլեց սոււերի հովին :

Ո՛չ արթուն էր, ո՛չ քնած . մի հաճելի թմբիր զով սոււերների հետ իջել էր նրա յոգնած անդամների վրայ :

Երբ կէս-օրը կտորեց՝ Ահմէդը ուշքի եկաւ, նայեց տեսաւ՝ ուղտերի մէկը չկայ . կանգնեց քարերի գլխին, դիտեց չորս դին — բան չէր երեւում . միայն բաւական մտիկում, մի գիւղ ծառերի միջից հերմակին էր տալիս :

Շտապով ոտքի հանեց ուղտերը, գնաց գիւղը : Մի պառու կին պատահեց նրան գիւղի ծայրին :

— Նանի, — ասաց Ահմէդը, — ուղտս կորել է, չե՞ս տեսել, աչքիդ չե՞ ընկել . է՛սպէս-է՛սպէս մի ուղտ :

— Ես բո ուղտի դարձն եմ . — զայրացած ասաց պառուը . — իմ կտորի՞ն արլորն է կորել, ման կու գամ, ման կու գամ, չեմ գտնի . բո ուղտը աչքի՞ն կ'երեւայ . արի՛ առաջ-առաջ արլորս ման գանք գտնենք, յետոյ բո ուղտը :

Ահմէդը գլուխը ծած տալով մտաւ գիւղը, ուղտերը

պահ տուաւ գիւղի տանուտէրին ու ինքը զնաց կորուստը փնտռելու :

Գիւղից դուրս տեսաւ մի մարդ . պարկով ցորենը դրել է գետին . պարկի մի կողքը պատուել է, ցորենը բուռ-բուռ թափել է ճամբի երկայնքով . խեղճ մարդը մէկ՝ ցորենն է հաւաքում, լցնում պարկը , մէկ՝ մատնելով գետինն է քրքրում, հողն է մաղմղում :

— Այ մարդ, ուղտս կորել է, էստեղով չի՞ անցել, տեսած չունի՞ս, էսպէս-էսպէս մի ուղտ :

— Ես իմ գլուխս եմ մոլորել .— նեղսրտած ասաց մարդը, — երեխաներիս ապրուստը հող դարձաւ . ասեղս եմ կորցրել , ասեղս, որ պարկս կարեմ, երթամ տուն . քո ուղտդ աչքիս կ'երեւայ . արի առաջ-առաջ ասեղս փնտռենք զրոնենք , յետոյ քո ուղտը :

— «Նենթ են էս մարդիկը», փնթփնթաց Ահմէդն ու առաջ զնաց :

Ում որ դիմեց , նոյն պատասխանն էր ստանում, թէ ի՞նչ է, բան ու գործ չունէինք քո ուղտին պիտի ա՞ջք պահէինք :

Ահմէդ վշտացած մարդկանցից եւ յոյսը կտրած՝ զիւղ վերադարձաւ . մի ծառի տակ նստաւ, զլուխն առաւ ափերի մէջ եւ տխուր-տրտում միտք էր անում . քունը վրայ հասաւ եւ յոգնաբեկ Ահմէդը աչքերը գոցեց . քունն ու երազ տեսները մէկ եղաւ . տեսաւ, որ՝ իր մայրն եկաւ , Ահմէդի գլուխը շոյեց եւ ասաց . —

— Որդիս , մի՛ տխրիր . ուղտդ կորած չէ . միայն այս աշխարհիս բանն այնպէս է , որ առաջ ուրիշի կորուստը պիտի փնտռես , որ ուրիշն էլ քո կորուստը փնտռէ . մի՛ մեղաբերիր մարդկանց . ամէն մէկի համար իրեն արջուն ու ասեղը քո ուղտի չափ է» :

Ահմէդը զարթնեց եւ վազեց պառաւի մօտ :

— Նանի , արթորդ գտա՞ր, — հարցուց Ահմէդը .

— Ձէ՛, որդի . չէ՛ :

— Արի, միասին փնտռենք . — ասաց Ահմէդը :

Եւ երկուսով ընկան գիւղի երդիքներն ու կալերը . մինչեւ ուշ երեկոյ որոնում էին կորած արջուն . յանկարծ պառաւը սրտապատառ գոչեց .

— Ահա՛ արջորս, կտրիճ արջորս, պատի տակ նստել է :

Ահմէդը վազեց դէպի արջորս , սա էլ վախեցած՝ թեւերը թափ տալով վազեց դէպի դաշտերը . Ահմէդն էլ ետեւից վա-արջորսը առջեւից, արջորսը վազելով , Ահմէդն էլ ետեւից վազելով , վազելով . . . յանկարծ մէկ էլ աչքի առջեւը — իր ուղտը , հէնց իր ուղտը, որ կանաչի մէջ նստած հանգիստ որոճ էր անում : Ահմէդի ուրախութեանը սահման չըկար , մէկ ձեռքին արջորս , միւս ձեռքին ուղտի պարուսա-նը — խնդումներես մտաւ գիւղ :

1912

### ԻՆՉՈՒՄՆ Է ՍՓՈՓԱՆՔԸ

Եղաւ որ՝ մի այրի կնոջ մի հատիկ որդին մեռաւ, թողնելով ողջ ընտանիքը մեծ սգի եւ ծայր-աղքատութեան մէջ։ Վշտահար մայրը սեւեր հագաւ եւ գնաց նստաւ որդու թարմ գերեզմանի սնարքին, լացեց անմխիթար ու արիւն-արցունքով։

Առաւօտից մինչեւ երեկոյ, երեկոյից մինչեւ ուշ-գիշեր, անօթի-ծարաւ նստել էր նա ծանր վշտի տակ փշուր-փշուր եղած. միայն երբեմն-երբեմն վեր էր կենում անթեղը նորոգելու, որից բարակ ծուխը ոլոր-ոլոր, հիւսւելով նրա հեծեծանքների հետ՝ բարձրանում էր վեր, ցրւում էր գիւղի վրայ, եւ մտնում ամէն մի խրճիթ...

— Խեղճ կին, ասում էին գիւղացիները իրար, Ի՛նչ կըսկիծի հանդիպեց...

Եւ հաւաքւեցին գիւղի փորձած ծերունիները, եկան գերեզմանատուն վշտաբեկ մօր մօտ եւ ասացին նրան.

— Հերի՛ք է լաս, ա՛յ խեղճ կին, լացով կորուստդ յետ չի դառնայ. աշխարհիս օրէնքն է — ծնել եմք, պիտի մեռնինք. ո՛վ ողջ մնայ, թող նա պարծենայ. մենք մահինն ենք, մահը՝ մերը. պէտք է հաշուենք աշխարհիս կամքին. տո՛ւն դարձիր, որք թոռնուկներդ քո ձեռքին են նայում. գնա՛, խնամիր նրանց, պա՛րտքդ կատարիր, թո՛ղ հանգիստ քնի հանգուցեալը, եւ երանի՛ նրան, որ շուտ ազատեց այս դառն աշխարհից...

Այսպիսի խօսքեր ասացին փորձած ծերունիները՝ սառն ու կնճռոտ ճակատներով. բայց սգաւոր մայրը գլուխը չբարձրացրեց, եւ աւելի դառն ու անսփոփ լացեց...

Եւ հաւաքւեցին գիւղի հարուստները, եկան սրտաբեկ մօր մօտ եւ ասացին նրան.

— Հերի՛ք է լաս, ա՛յ խեղճ կին, մեռնողը մեռնում է, ապրողը պիտի ապրի. որքուկներդ ապրել են ուզում, տո՛ւն դարձիր, վառիր օճախդ, հաւաքիր շուրջդ թոռնիկներիդ, պահի՛ր, մեծացրու, հօր տեղը կը բռնեն ժամանակով. մենք էլ քո դուռ ու դրացին ենք, օտար չենք. քո որբերն էլ մերն են, երդուում ենք ողջ գիւղի առջեւ, որ մեր որդոց պէս կը նայենք նրանց, մարդ կը դարձնենք... մխիթար-ւիր, տուն դարձիր։

Բայց սգաւոր մայրը չլսեց նրանց. գլուխը չբարձրացրեց. եւ նորից աւելի անյոյս ու սրտամորմոք՝ լալիս էր ու լալիս։

Այդ միջոցին մի ճամբորդ էր անցնում գիւղի միջով. լսեց այս սրտաքամ լացը, սիրտը լցւեց վշտով. եւ հարցումով ձօտեցաւ գիւղացիներին, որ հաւաքւել էին թշւառ մօր շուրջը։

Ապա անցորդը խոնարհւեց գետին, գլուխը դրեց յուսահատ կնոջ ծնկների վրայ, եւ դառն ու խորունկ լացեց։

Այդ ժամանակ որդեկորոյս մայրը գլուխը վեր բարձրացրեց, սրբեց արիւնավառ աչքերը, եւ նրան այնպէս եկաւ, որպէս թէ մէկը կիսեց իր ուսերը փշրող ծանր բեռը, եւ սիոփանքի մի շող փայլեց նրա սեւ ճակատին։

Ոտքի կանգնեց եւ յուսադրւած քայլեց դէպ իր հանգած օճախը...

## ԵՐԳԻ ՀՐԱՊՈՅՐԸ

(ԵՐԱԶ)

Մեզնից հազարաւոր տարիներ առաջ, մեզնից շատ ու շատ հեռու, եօթը ծովերի միւս ափում կար մի աշխարհ:

Այնտեղ ծաղիկներ կային, չքնաղ ու բիւրազան ծաղիկներ, թիթեռների պէս՝ փուլած ու թրթռուն՝ ժայռերի ու դաշտերի վրայ. եւ նրանց անուշ հոտով լցել էին այդ աշխարհի սարերն ու ձորերը:

Այնտեղ աղբիւրներ կային, պայծառ ու կարկաջուն աղբիւրներ՝ մանուկների պէս, որ թռչկոտում էին քարից քար ծաղիկները համբուրելով:

Բայց այնտեղ մարդիկ չար էին ու անզուժ:

Մի որբ ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ. գիշերը տեղ չունէր գլուխը դնելու եւ հաց չունէր ուտելու: Նա մենակ էր, ինչպէս մի թռչուն ամայի ժայռերի մէջ:

Եւ նա մեծացաւ բոլորի աչքի առջեւ՝ անտես ու անյայտ. կերակրւում էր դաշտի բոյսերով եւ պատսպարւում էր անձաւների մէջ:

Բայց բոլոր մարդկանցից ծածուկ՝ իր մատներով շօշափում էր ու զննում մարդկանց սրտերը, եւ տեսնում էր, որ քարից էին այդ սրտերը, քար ու ապառաժից:

Ու երբ պատանի դարձաւ, թողեց այդ քարասիրտ աշխարհը եւ համբայ ընկաւ մի ուրիշ, մի լաւ աշխարհ գրտնելու համար:

Հասաւ մի ծովափ, եւ երբ ափի աւազների վրայ շրջում էր՝ տեսաւ ցամաքին, մի շատ գեղեցիկ, մի շողողուն ձուկ՝ հոգեկարքի մէջ թալիկ-թալիկ գալիս:

Պատանին գրկեց ձուկը եւ քնքշութեամբ տարաւ բաց թողեց ծովի մէջ:

Ձուկը երբ ուշքի եկաւ, դարձաւ ասաց մարդու լեզուով.

— Բարի՛ տղայ, ինչ որ սիրտդ կ'ուզէ, ասա՛, ես կը կատարեմ քո արած լաւութեան փոխարէն:

Պատանին մի փոքր մտածելուց յետոյ՝ ասաց.

— Ինձ այնպիսի մի հնա՛ր տուր, որ մարդու էկրծքի տակ քարը իսկական սիրտ դարձնեմ:

— Դու սէր ես ուզում, հրաշալի՛ տղայ, շատ լաւ. կըտտի՛ր ծովափի եղէգներից մէկը, սրինգ շինիր եւ գնա՛ մարդկանց մէջ երգիր: Եւ երբ տեսնես, որ նրանց աչքերը արցունքով լցեցին, իմացի՛ր, որ քարը սիրտ դարձաւ:

Այսպէս խրատեց ձուկը եւ փաթաթելով ալիքների հետ՝ սուզեց ծովի խորքում:

Պատանին իսկոյն կտրեց եղէգնը, սրինգ շինեց եւ սուզեց: Ա՛յնպէս քաղցր, ա՛յնպէս հոգեգրաւ դուրս հոսեցին հնչիւնները սրնգի փողից որ, բոլոր թռչունները լուռ կեցան լսելու համար:

Ապա շտապեց մարդկանց մօտ, մտաւ մարդաշատ քաղաքը, կանգնեց հրապարակում եւ սրինգը նուագեց:

Քնքուշ ու գեղեցիկ — ուղղակի սրտի խորքերից դուրս ցայտեցին դիւթական անուշ հնչիւնները:

Նա երգում էր արցունքով թրջած հացը աղքատների ու չարքաշների, ցուրտ անտուն գիշերները մերկ ու տնանկների:

Նա երգում էր փակ դռներն ու քար-սրտերը մարդկանց անտէր, անտէրունջ մենակութիւնը լքուած որբերի:

Եւ փուլեցին նրա երգերը հրապարակի վրայ, մտան ա-



մէն մի խրճիթ ու ապարանք, փշրեցին քարեղէն սրտերը :  
Ամէն մի սիրտ խայթւում էր իր անգթութեամբ եւ բռնկւում  
էր ծովի չափ սիրով, որ ծովի պէս յուզւում էր եւ ամերեց  
դուրս թռչում:

Եւ ամէն մի մարդ ուզում էր հրապարակ վագել, սիրով  
ու կարօտով գրկել մի ուրիշ անծանօթ մարդու, գրկել,  
համբուրել նրան, եւ մեռնիլ նրա համար:

Եւ ահա՛ մարդիկ դուրս թռան տներից, վագեցին հրա-  
պարակ, շրջապատեցին պատանուն, եւ առաջին անգամ  
նկատեցին, որ աղքատ է նա ու մենակ. գրկեցին ու համ-  
բուրեցին նրան, եւ առաջին անգամ իրենց կենսքում վըշ-  
տահար հեկեկացին . . .

Այդ օրուանից աշխարհ եկաւ Երգը. ու երգի միջոցով  
հալւեցին քար-սրտերը. եւ այդ օրուանից սէրը վշտի հետ  
անբաժան՝ բոյն դրեց մարդկանց սրտերի մէջ . . .

1904.

### ԵՐԿՈՒ ԱՐԻԵՍՏԱԳԷՏ

Միեւնոյն քաղաքում ապրում էին երկու քանդակա-  
գործ: Նրանից ամէն մէկի հոգում, ինչպէս արեւը երկնքի  
խորքում, բոցավառւում էր գեղեցկի կատարելատիպը:

Եւ նրանցից ամէն մէկը հզնում էր իր հոգու այդ ան-  
ծեւ, անմարմին գեղեցկութիւնը՝ դրսեւորել, հանել հոգու  
անհունից, ձեւ ու մարմին տալ նրան, դարձնել ըմբռնելի,  
շօշափելի:

Եւ ուժգնապէս տնկում էին նրանք իրենց ներաշխար-  
հի կատարելատիպ գեղեցկիկը իրացնել-առարկայացնել, ան-  
մահացնել յաւերժօրէն:

Եւ նրանցից ամէն մէկը վեր առաւ մարմարինի զան-  
գեւծը, եւ աշխատեց նրա վրայ. մէկն աշխատում էր գեղեր  
եւ ցերեկ, ցերեկ եւ գեղեր, հզնելով եւ տառապելով, լուռ  
եւ մտախոհ, իսկ միւսը՝ ուրախ եւ զւարթ երգը շրթուներին,  
մանկան պէս խաղաղով մարմարինի հետ:

Մեծ ամբոխը, որ խռնւում է շուկաներում եւ հրապա-  
րականերում, որ հացից յետոյ գեղեցկութիւն է որոնում հրճ-  
ւելու համար՝ լռիկ եւ հեռաքրքիր դեգերում էր անխոնջ  
մեծ արեւատագետների տան շուրջը՝ գոնէ մի անգամ տես-  
նելու այն վսեմական գեղեցկութեան մի ճաճանչը, որ բըղ-  
խում է նրաց տոեղծագործ հոգու անհունից, ինչպէս ա-  
րեւը տիեզերական մռայլների անդունդներից:

Եւ հասաւ օրը, երբ առաջին արեւատագէտը աւարտեց  
եր երկը, եւ շղարշների ներքոյ պարտւրած նրա քանդա-  
կածուն հրապարակ տարեց:

Ամբոխը ծով էր կապել հրապարակում եւ ալիք-ալիք կանգնել . բացին շղարշները, եւ արեւի ոսկեհուռ սլաքներին տակ շողշողաց շուշանափայլ—մի չքնադազեղ կոյսի անդրի՝ եւ ամբոխը հոգեզմայլ եւ յափշտակած՝ ծունր իջաւ գեղեցկի առջեւ, երկրպագեց նրա կատարելատիպին, ներբողներ երգեց արւեստագէտին :

Իսկ ինքը ծուլւած ամբոխի մէջ, նրա շարքերում, նրա հետ ծնրադիր երկրպագում էր իր ստեղծագործութիւնը, գոհունակ եւ հիացած իր անրջական գեղեցկի մարմնացումով :

Եւ խօսում էր ինքն իր սրտի հետ — «Իմ հոգում կատարեալ գեղեցիկն էր բոցավառւում. եւ ես կարողացայ արտայայտել բոլորը, ամբողջը . եւ իմ սրբութեան սրբութիւնը բարձրացրի ամբոխի առջեւ, իմ սրբութիւնը, որին եւ ես պաշտում եմ» :

Հասաւ եւ այն օրը, երբ միւս արւեստագէտը, որ ստեղծագործում էր երգով ու խաղով, աւարտեց իր երկը . եւ շղարշների ներքոյ պարուրւած նրա քանդակածոն հրապարակ տարւեց : Բացին շղարշները եւ արեւի ոսկեհուռ սլաքների տակ շողշողաց շուշանափայլ մարմարիոնը — մի հիացական, գերահրաշ կոյսի անդրի :

Ամբոխը որ անշշուկ՝ ծով էր կապել հրապարակում եւ ալիք-ալիք կանգնել, երբ տեսաւ անդրին, մի մարդու պէս գետին խոնարհեց, երկրպագեց եւ ծովի նման շառաչեց.—

— «Ահա՛ իսկական գեղեցիկը, միակ կատարեալը՝ անմահ եւ յաւերժական. փա՛ռք եւ սքանչացում մեծ արւեստագէտին. նա տւեց մեզ մեծ գեղեցկութիւնը» :

Այդ միջոցին մեծ արւեստագէտը, որ կանգնել էր անդրի մօտ՝ մուսյլ աչքերով եւ մթին կնճիռներով խորհում

էր իր հոգու ովկիանում.—

«Իմ մէջ տիեզերական գեղեցիկն է ապրում եւ իմ հոգում գեղեցկութեան արեւներն են բոցավառւում, որոնցից ես մի նսեմ շողք միայն կարողացայ խլել արտայայտելու, մարմնացնելու համար, բայց տիեզերքը մնաց իմ մէջ նորից անձեռնմխելի. իմ մէջ մեծ լուրթիւնն է ծաւալւում, եւ ես մի նսեմ հնչիւն միայն կարողացայ պոկել այդ մեծ լուրթիւնից, բայց նա՛ բոլոր-բովանդակ մնաց համր ու անխօս իմ մէջ. արդեօք կարո՞ղ եմ հոգուս բոլոր արեւները արտաշխարհ հանել, մեծ լուրթեանը լեզու տալ, եւ արդեօք ամբոխը պիտի հասկանա՞յ. . .»

Եւ նա մուսյլը աչքերին՝ վեր առաւ մուրճը անգրին փշրելու համար . սակայն շրջապատ-մարդիկ բռնեցին նրա բազուկը . եւ ամբոխն աղաղակեց .

— «Մեծ արւեստագէտ, նւիրիր այն մեզ, խնայիր մեզ. նա մեր գեղեցկի աստածն է այսուհետ . մենք պաշտում ենք նրան . . .»

Եւ արւեստագէտը նորից խորհեց իր հոգու ովկիանում . —

«Ա՛յն, ինչ որ տւի աղքատ ամբոխին — դա փշրանքն էր հոգուս հարստութեան. եւ այն, ինչ որ թափեց իմ գեղեցկութեան տիեզերական բաժակից, նա ընկաւ ամբոխի վրայ եւ ամբոխացաւ. ուրեմն այդ թո՞ղ նրան լինի, ինձ նա պէտք չէ՛, ես բարձր եմ նրանից. նա կատարեալը չէ՛. նա ես չեմ . . .»

Ապա հեռացաւ հպարտ ու մեծակ, մեկուսացաւ եւ զւարթագին սուզեց իր հոգու անհունի մէջ՝ ստեղծագործելու բուռն տենչով, որ մեծ լուրթեանը լեզու տայ եւ գեղեցիկի կատարելութեանը մարմին գզեցնէ՝ իրականացնելու իր հոգին բոլոր յաւիտեանների համար :

## ԱՆՅԱՂԹ ԽԱԼԻՓԱՆ

Հեքիաթագեղ Բաղդատում, խալիֆաների գոհարակուճ գահի վրայ նստել է մի երիտասարդ խալիֆա :

Թո՛ղ երեք անգամ օրհնւած լինի նրա մուացւած անունը :

Հարուն-ալ-Ռաշիտի յաղթական սուրը, որի շողքից դողում էին ժողովուրդները Տարսուսեան լեռներից մինչև Մարայ դարբասները, — նա ձեռք չառաւ :

Ազատ թողեց իշխանութեան սանձերը եւ յայտարարեց բոլոր հպատակներին .

— «Թո՛ղ ապրի ամէն մարդ, ինչպէս ուզում է, միայն թէ թողնի, որ ուրիշն էլ ապրի» :

Եւ հաւաքեց իր ոսկեղէն քէօշքում պետութեան մէջ ապրող ընտիր երգիչներին եւ նուագածուներին .

— «Թո՛ղ երգեն եւ նւագեն, եւ հեքիաթներ հիւսեն» . — ասաց նա :

Եւ խալիֆան գիշեր ու ցերեկ լսում էր երգիչներին, եւ նրա հոգին երազի թեւերով սաւառնում էր շքեղ հեքիաթների մէջ :

Իսկ ժողովուրդը ապրում էր գոհ եւ բախտաւոր, աշխատում էր եւ օրհնում թագաւորի կեանքը :

Եւ բուրումնաւէտ տարիները՝ արշալոյսների պէս ոսկեվառուելով՝ սահում էին Բաղդադի վրայից :

Եւ մի օր հեւասպառ ներս ընկաւ սահմանապահ իշխանի մօտից մի սուրհանդակ եւ գուժեց .

— Մե՛ծ արքայ, թշնամին ներս խուժեց հարաւից եւ զրաւեց քո պետութեան մի ամբողջ նահանգ :

Հուժիւն տիրեց :

— Նրանք չեն կարող զրաւել իմ պետութեան մի բուն հողն անգամ . — հանգիստ պատասխանեց խալիֆան . — Շարունակեցէ՛ք նուագել :

Ու դիմեց նա երաժիշտներին :

Մի քանի օրից յետոյ եկաւ նորից մի գուժաբեր .

— Մե՛ծ խալիֆա, թշնամին արշաւեց հիւսիսից եւ տիրեց մի ամբողջ նահանգի . . .

— Սո՛ւտ ես ասում, — որոտաց խալիֆան, — ոչ ո՛ք չի կարող ոտ կոխել եմ պետութեան սահմանները . . . Նւագեցէ՛ք աւելի եռանդազին :

Եւ նուագում էին երաժիշտները եւ հիւսում էին զրամբուխտայ հէքեաթներ. եւ խալիֆայի հոգին երազի թեւերով սաւառնում էր դիւթիչ հէքեաթների մէջ :

Մի քանի օրից յետոյ եկաւ նորից մի գուժական .

— Տէ՛ր Արքայ, արեւելքից մի իշխան եկաւ ահագին բանակով եւ զրաւեց մի քանի նահանգ . նա պատերազմ է յայտարարել քո պետութեան դէմ, եւ յաղթանակով արշաւում է Բաղդադի վրայ . . .

Իջաւ խորին լուռ իւն. նախարարները խոժոռ կանգնած սպասում էին մարտական հրամանի . դուրսը, Քէօշքի պարիսպների տակ աղմկում էր ամբոխը եւ պատերազմ պահանջում :

Մինչդեռ անյողդողդ հանգստութեամբ ասաց խալիֆան .

— Նւագեցէ՛ք, մի՛ դադարէք. երբ դուք դադարէք, այն ժամանակ է որ կը նւաճել իմ պետութիւնը . . . Նւագեցէ՛ք ձեր մարգարտահիւս երգերը. երբ ես լսում եմ մի

չքնաղ երգ՝ իմ պետութեան սահմանները լայնանում են, մեծանում են եւ փռւում-տիրում անեզր հեռուները, մինչեւ աշխարհի ծայրերը. եւ ոչ ոք չի կարող մտնել իմ հզօր պետութեան անբաւ, անառիկ սահմանները. նւագեցէ՛ք, յաւէ՛րժ նուագեցէ՛ք...

Իսկ յաջորդ օրը ապստամբ Բաղդադը զահրնկէց ըրաւ Խալիֆային եւ փոխարէն զահր նստեցրեց նրա եղբօրը, որը արիւնով եւ յաղթանակներով ծածկեց պետութեան սահմանները:

Սակայն յաւերժապէս օրհնւած լինի անյաղթ Խալիֆայի մոռացւած անունը...

1909

## ԱՄԵՆԱՊԻՏԱՆԻ ԲԱՆԸ

Ժամանակով Արեւելքի մի հրաշագեղ աշխարհում արդարամիտ եւ խելացի մի թագաւոր է եղել: Նա ունեցել է երեք որդի:

Եղաւ որ այդ թագաւորը ծերացաւ եւ կառավարութեան սանձը կամեցաւ դեռ ողջ-օրով յանձնել իր ժառանգներից նրան, որն աւելի ընդունակ կը լինի այդ դժուարին գործին:

Ուստի մի օր կանչեց որդիներին եւ ասաց:

— Սիրելի՛ որդիներ, տեսնում էք՝ որ ձեր հայրը ծերացել է ու էլ չի կարող երկիրը կառավարել: Ես վաղուց իջած կը լինէի իմ գահից, եթէ կատարուած տեսնէի այն միտքը, որ երկար տարիներ պաշարել է հոգիս: Եւ հիմա ձեզնից, ով որ իմաստուն կներպով լուծէ այդ իմ միտքը, նա կը ստանայ իմ թագը, նա կը կառավարէ իմ ժողովուրդը:

— Ապրած կենայ մեր սիրելի հայրը, սուրբ է մեզ համար նրա վեհ կամքը. այդ ինչ մեծ միտք է, որ չէ կարողացել լուծել նրա իմաստուն հոգին:

— Ահա՛ տեսնո՞ւմ էք այդ ահագին եւ մեծածաւալ շտեմարանը, որ վաղուց շինել եմ: Իմ փափաքս էր այդ լցնէի այնպիսի մի բանով, որ ամենապիտանին լինէր աշխարհիս. երեսին եւ որով կարողանայի բախտաւոր դարձնել իմ ժողովուրդը: Այդ շտեմարանը՝ դեռ մնում է դատարկ:

Եւ հիմա, ո՞վ որ ձեզնից կարողանայ՝ այդ շտեմարանը իր բոլոր անկիւններով, ծայրէ ծայր, լցնել աշխարհի այդ ամենապիտանի բանով, թո՛ղ նա արժանի լինի զահին:

«Առէ՛ք զանձերիցս ինչքան որ կ'ուզէք եւ առանձին-առանձին ուղի ընկէ՛ք քաղաքէ քաղաք, աշխարհէ աշխարհ, գտէ՛ք այդ բանը եւ լցրէ՛ք իմ շտեմարանը :

Ձեզ եօթն անգամ քառասուն օր միջոց եմ տալիս :»

Որդիները համբուրեցին հօր ձեռքը եւ ճանապարհ ընկան :

Ամբողջ եօթն անգամ քառասուն օր նրանք շրջեցան քաղաքէ քաղաք, աշխարհէ աշխարհ. տեսան ուրիշ-ուրիշ մարդիկ, ուրիշ-ուրիշ բարքեր, ու ժամանակին եկան կանգնեցին հօր առջեւ :

— Բարով էք եկել, անգին որդիներս, գտե՞լ էք բերել՝ ինչ որ ամենապիտանի բանն է աշխարհում :

— Այո՛, գտել ենք, սիրելի հայր. — պատասխանեցին որդիները :

Եւ հայրը իսկոյն վեր առաւ որդիներին եւ գնացին շտեմարանի դուռը. այնտեղ հաւաքուած էին բոլոր պալատականները եւ շա՛տ ժողովուրդ :

Թագաւորը բացեց դուռը եւ կանչեց մեծ որդուն :

— Ինչո՞վ կը լցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որն աշխարհում ամենապիտանին լինի :

Եւ մեծ որդին հանեց գրպանից մի բուռն հացահատիկ՝ պարզելով դէպի հայրը՝ ասաց .

— Հացով կը լցնեմ այս ահագին շտեմարանը, թանկագին հայր :

Ի՞նչ է աշխարհում ամենապիտանի բանը, քան հացը. ո՞վ կարող է առանց հացի ապրիլ : Շա՛տ թափառեցի,

շա՛տ բան տեսայ, — բայց հացից անհրաժեշտ ոչինչ չգտայ :»

Այն ժամանակ հայրը կանչեց միջնակ որդուն .

— Ինչո՞վ կը լցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որն աշխարհում ամենապիտանին լինի :

Եւ միջնակ որդին հանեց գրպանից մի բուռն հող, պարզելով դէպի հայրը՝ ասաց .

— Հողով կը լցնեմ այս ահագին շտեմարանը. թանկագին հայր, ի՞նչն է աշխարհում ամենապիտանի բանը, քան հողը : Առանց հողի հաց չկայ. առանց հողի ո՞վ կարող է ապրիլ : Շա՛տ թափառեցի, շատ բան տեսայ, — Բայց հողից անհրաժեշտ ոչինչ չգտայ :

Ապա հայրը կանչեց կրտսեր որդուն :

— Ինչո՞վ կը լցնես այս ահագին շտեմարանս, սիրելի որդեակ, ի՞նչ բանով, որն աշխարհում ամենապիտանին լինի :

Այդ միջոցին կրտսեր որդին հաստատ քայլերով մօտեցաւ շտեմարանին, անցաւ շէմքը, գրպանից հանեց մի փոքրիկ մոմ, կայծքարին խփեց հրահանը, կայծ հանեց վառեց աբեթը, յետոյ մոմը : Բոլորը կարծոււմ էին թէ նա ուզում է լոյսի լուսով լաւ զննել շտեմարանը, նրա ահագնութիւնը :

— Դէ՛հ ասա, որդի, ինչո՞վ կը լցնես, — անհամբեր ծայնով հարցրեց հայրը :

— Լոյսով կը լցնեմ այս ահագին շտեմարանը, իմաստուն հայր, լոյսով միայն : Շատ թափառեցի, շա՛տ աշխարհներ տեսայ, բայց լոյսից անհրաժեշտ ոչ մի բան չգտայ : Լոյսն է ամենապիտանի բանը աշխարհում : Առանց լոյսի հողը հաց չի ծնի, առանց լոյսի հողի վրայ կեանք չէր լինի :

Շա՛տ թափառեցի, շա՛տ աշխարհներ տեսայ եւ գտայ,

որ գիտութեան լոյսն է ամենապիտանի բանը. եւ միայն գիտութեան լոյսով կարելի է կառավարել աշխարհը» :

—Ապրիւս,—գոչեց ուրախացած հայրը,—քեզ է արժանի գահն ու գայիստնը, քանի որ լոյսով եւ գիտութեամբ պիտի լցնես թագաւորութիւնդ եւ մարդկանց հոգիները :

—Ապրա՛ծ կենայ մեր երիտասարդ լուսաւոր թագաւորը,—գոչեցին ոգեւորուած պալատականներն ու ժողովուրդը ամբողջ :

Եւ հայրը գրկեց որդուն, փռեց նրա ուսերի վրայ շողշողուն ծիրանին եւ նստեցրեց գահի վրայ իրեն փոխանակ :

1905

## Ա.ԶԳ.Ա.ՅԻՆ ԵՐԳԸ

(Հասուած)

... Աշնան մի պայծառ առաւօտ էր. Արարատեան դաշտի հրաշագեղ աշունը . փոշոտ ցանկերի միջից փայլում էին խաղողի ոսկեղէն ողկոյզները, նուռն ու խնձորները, ասես, հրեղէն գնդակներ լինէին. յուռթի այգիներից լիութեան անուշ բուրմունքն էր խնկում. վերեւ, բաց-կապոյտում, հաւքերի շղթան էր ձգւում, ներքեւ ցողաթուրմ արահետներով հայ գեղջուկի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձած աշնան հազար ու մէկ բերքերով :

Երկու ընկերով գնում էինք հինաւուրց Արմաւիրի բլրի տակով. մեր գլխի վրայ ծփում էր մեհենական սօսիներու խորհրդաւոր սօսափը . երկուսս էլ լուռ էինք, տարւած մեր տեսիլներով :

Մեր ցուպերը՝ հովիւների պէս, մէջքերիս լայնքով դրած, արմուկներիս մէջ, քայլում էինք Երասխի հին հունով դէպի մի գիւղ Երասխի ձախ ափին :

Սքանչելիք է Արարատեան դաշտը :

Մասիսը ուղղակի դիմացներս էր, այնպէս պարզ ու վճիտ էր, որ նրա ոտքերից մինչեւ զագաթը մէկ-մէկ կարելի էր դիտել: Մի հսկայ սպիտակաբաշ առիւծի է նման նա, նստած յետի ոտքերի վրայ, ալեւոր գլուխը անհունի մէջ, հանգիստ եւ անվրդով :

Աշնան քաղցր ու մեղմ արեւը Մասիսի վերեւ վար, եւ

Արարատեան երկրի լայնքին ու երկայնքին իր տարածուն ծիրանին էր փուել :

Մտանք զհւղը :

Մեր առաքելութիւնը կատարելուց յետոյ, յաջորդ օրը, մեկնելուց առաջ զնացինք զհւղական գաղտնի դպրոցը այցի . ուսուցիչի հետ արդէն ծանօթացել էինք . նա նոյն զհւղից մի կրակոտ երիտասարդ էր :

Գետի ափին, հաստաբուն ընկուզենու չորս բոլորքը, հասարակ նստարանների վրայ շարել էին ամէն հասակի աշակերտներ, ութ-տասը տարեկան մանուկներից սկսած մինչեւ քառասուն տարեկան չափահասները : Օրը Կիրակի էր, ազատ էին զհւղացիները այգիների աշխատանքից, եւ այդ պատճառով դպրոցը լիքն էր աշակերտներով, ինչպէս բացատրեց մեզ ուսուցիչը :

Չորս դասարանից, այսինքն չորս կարգից, էր կազմւած այս բացօթեայ դպրոցը : Եւանդուն ուսուցիչը պտոյտ-պտոյտ էր անում ընկուզենու շուրջը. մերթ հարաւային դասարանումն էր պարապում, մերթ՝ հիւսիսային, մերթ՝ արեւելեան, մերթ՝ արեւմտեան. մէկ տեղ «Այբ-բեն» էին կարդում, միւս տեղում «Մայրենի լեզու», երրորդ տեղում Պալասանեանի «Հայոց Պատմութիւն»ից էին դաս պատասխանում, չորրորդում «Դաւիթ-Բէկ» էին կարդում :

Երբ դասաժամը վերջացաւ ու աշակերտները պիտի ցրէին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչից, որ աշակերտները մի երգ ասեն : Ուսուցիչը պատասխանեց՝ թէ ինքը դժբախտաբար «բաղաձայն» է, եւ դրա համար էլ երգ չի սորվեցրել. սակայն, աւելացրեց, որ աշակերտների միջից երգողներ կարող են լինել, եւ առաջարկեց նրանց, թէ

ո՛վ կարող է, թո՛ղ երգէ : Փոքրերը սիրտ չարին, մեծերն էլ քաշեցին . . .

— Բայց լաւ կը լինի բոլորը գոնէ մի ընդհանուր ազգային երգ զիտենան. օրինակ, «Մեր Հայրենիքը» կամ «Մայր Արաքսին», որ շատ տեղին է, հէ՛նց ափերին էք, — կըլտամբանքի մի նուրբ խաղով ասաց ընկերս :

Ուսուցիչը թեթեւ կարմրեց, ապա մէկ էլ գլուխը եւանդուն թափահարելով դարձաւ աշակերտներին :

— Հապա՛, սիրելիներս, ամէնքդ մէ՛կ շարեցէք այստեղ, — եւ յետոյ մեզ, — Ի՞նչպէս չէ, գիտեն, եւ լաւը զիտեն :

Ու ձեռքի քանակը թափով վեր բարձրացնելով՝ գոչեց. — Բոլորդ միասին ինձ հե՛տ երգեցէք «Այբ-Բեն-Գիւմ» :

Եւ քանակի հաւասար բախումներին ներդաշնակ՝ բոլորը միասին սկսեցին բարձր եւ եղանակաւոր ձայնով հեգել.

Այբ, բեն, գիւմ,

Դա՛, եչ, զա,

է, բբ, բօ . . .

Այսպէս մինչեւ վերջը, քառասուն-յիսուն կրծքից բըխած այս հուժկու, բազմահնչուն եւ միահամուռ ձայնը, որ ինքնին Հայոց լեզուն է, երասխի շառաչի հետ փուելով Արարատեան աշխարհի վրայ՝ սլանում էր ազատ-Մասիսն ի վեր :

Ամէնքի երեսին պայծառ ժպիտ կար. ուսուցիչը շատ ոգեւորուած էր :

— Ահա՛ ձեզ մի ընդհանուր ազգային երգ, որ ամէն Հայ անպատճառ պէտք է զիտենայ. ահա՛ չորս-հինգ տարի է ես այդ երգն եմ սորվեցրել, ուրիշ երգ չեմ ճանաչում. . . բոցալառ շրթունքներով շնչասպառ ասաց ուսուցիչը եւ սրբեց քրտնած ճակատը :

— Շատ հիշդ էք ասում, եւ կեցցէ՛ք, իսկապէս որ ան-

նման էր.— ոչ-նուազ ոգեւորութեամբ պատասխանեցինք մենք :

Ապա մեր շնորհակալութիւնը յայտնելով, ամուր սեղմեցինք սրամիտ ուսուցիչի ձեռքը, եւ ուրախ ու թեթեւ շարունակեցինք մեր ուղին :

Մի պահ գտնուեմ էինք այդ տարօրինակ երգի ազդեցութեան տակ. ընկերս խզեց լուծիւնը.—

— Համաձայն չե՞ս որ քանի Հայր կ'ապրի, Հայոց «այբբեն»ը չի՞ մեռնի :

— Այո՛, — ասացի ես, — բայց ես հակառակին աւելի համաձայն եմ.— այն որ, քանի քանի Հայոց «այբբեն»ը կ'ապրի, Հայր չի՞ մեռնի . . .

— Դրան նոյնպէս համաձայն եմ, — սրտաբուխ ծայնով պատասխանեց սիրելի ընկերս :

1913

## ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏԸ

Ծերունի մի դերվիշ՝ ճակատն արեւառ, եկաւ եզիպտական անապատը, որ մեծ Սֆինքսից հարցումներ անէ՝ երջանկութեան խորհուրդը իմանալու համար :

Անապատի դեղին լուծեան մէջ բազմել էր հինաւուրց սֆինքսը՝ անդորր եւ անքթիթ. նրա անթարթ աչքերը յաւերժութեան խորքերից նայում էին խորհրդաւոր հեռուները :

Եկաւ դերվիշը, արծանացաւ սֆինքսի առջեւ, եղէգնի երկարուն ցուպը խրեց այրուղ աւազի մէջ. խոհուն աչքերը մոռալ ճակատի տակից յառեց նրա աչքերին, եւ ասաց.—

— Եկել եմ մօտդ համայն աշխարհի բոլոր ծայրերից . բոլոր ծայրերից հարցումն եմ արել իմանալու թէ՛ ի՞նչ է կեանքի երջանկութիւնը, որն է նրա իմաստը . . . Եւ մնացել եմ անպատասխան :

Գալիս եմ այժմ նւիրական Սինայի ժայռեղէն գագաթից, ուր Մովսէսը պատգամներ առաւ. հարցումն եմ արել անխօս բարձունքից . . . Եւ մնացել եմ անպատասխան :

Քայլել եմ Նեղոսն ի վեր, տատասկները խոցել են սրբունքս եւ արեւը կիզել է ալեհեր ճակատս . եւ հասել եմ քո դռանդ : Ա՛րդ, բա՛ց քո շրթունքը՝ յաւիտեան զոցւած աշխարհի համար, եւ քո իմաստուն, քո անվրդով աչքերով, ինչ որ տեսել ես դարերի շեղում, ասա՛, յայտնի՛ր, հարցնում եմ՝ ի՞նչն է մարդկային կեանքի երջանկութիւնը :

Մարդը խանձարուրից մինչեւ գերեզման անպարտելի յոյսերով ձգտում է երջանկութեան, սակայն առանց իմա-



նալու՝ թէ ի՞նչ է նա. ասա՛, յայտնի՛ր ինձ, եւ ես կը մըտնեմ խորհիլից խորհիլ, ապարանքից ապարանք. եւ հարաւին, նոյնպէս հիւսիսին, եւ արեւելքին, նոյնպէս արեւմուտքին բարձրաբարբառ կը պատգամեմ քո յայտնութիւնը երջանկութեան իմաստի մասին . . . »

Եւ լուծիւնը մեծ անապատի ծերուկ դերվիշի հարցումից յետոյ նորից ծանրացաւ, եւ հինաւուրց Սֆինքսը նորից նայում էր անթարթ՝ անեզր հեռուն : Անցան օրեր, անցան գիշերներ, եւ դերվիշը, անբուն ու կանգուն արծաւնացած նրա առջեւ, ակնապիշ սպասում էր պատասխանի, եւ պատասխան չկար :

Եւ երբ անցան օրեր ու գիշերներ, դերվիշը դարձեալ հարցում առաւ եւ նորից լուծիւնը մեծ անապատի ծերուկ դերվիշի հարցումից յետոյ թանձրացաւ եւ ծանրացաւ :

Ճերմակ ալիքները բարկ հովին տւած՝ նորից հարցում արաւ դերվիշը եւ նրա աղաչող ձայնը հնչում էր ամբողջ մարդկութեան բիւրաւոր հոգիների խորքից :

Եւ երբ լսեց դերվիշը, Սֆինքսը աչքերը բեւեռեց դերվիշի աչքերին, եւ ահա՛ շարժւեցին նրա յաւերժալուռ շըրթունքները, եւ անապատի ծայնով պատասխանեց նա. —

«Ո՛վ մարդ, արիւնի ծնունդ եւ կրքի ծարաւ, քո անմիտ ոգին անյազ տարփում է յաւէրժ գրգիւռի : Երջանկութեան իմաստը դու անկարող ես ըմբռնել. քո զգացող գոյութիւնը չարժէ իր ձգտումին . եւ ո՛չ մի նպատակ չարժէ, որ նրան ըզձառ :

Սակայն ես ասում եմ քեզ եւ յաւիտեան լուռ, զնա՛, եւ այսուհետ մի՛ վրդովիր իմ երջանկաւէտ անդորրը :

Գնա՛ եւ պատգամիր աշխարհին հանուր, հարաւին, նոյնպէս հիւսիսին, արեւելքին. նոյնպէս արեւմուտքին՝ երջանկութեան իմաստը — Զպէտք է զգալ, չպէտք է խորհիլ,


չպէտք է կամենալ, այլ միայն քարանա՛լ. քարանա՛լ, քարանա՛լ . . . »

Եւ նորից քարացան հինաւուրց սֆինքսի շըրթունքները. եւ նա՛ յաւերժօրէն անխուով եւ անվրդով սեւեռեց իր անթիթ աչքերը դէպի անձայրածիր հեռուները. եւ նորից խորասուզեց ծով-հանգստի մէջ :

Եւ անապատի անհուն լուծիւնը թանձրացաւ եւ ծանրացաւ նորից . . .

1910

## ՄԻ ՍՈՒՍԱԿԻ ՄԱՆՔ



(Մի Պարսկաստանցուց լսած)

«—Ես տեսել եմ մի դէպք, որ յիշողութեանս մէջ մի այնպիսի՝ անթառամ թարմութեամբ է ապրում, որ ասես թէ՛ հէնց հիմա աչքերիս առջեւը կատարած լինէր: Եւ ամէն անգամ յիշելիս սիրտս լցում է միշտ նոյն խորին յուզումով, ինչպէս այն օրը, թէեւ արդէն եօթ-ութ տարի է անցել:

Մայիսեան մի վաշ առաւօտ էր. լուսաբացի ճերմակ լոյսերի մէջ թրթռում էր պարտէզը. եւ վարդերի թերթերի վրայ ցօղերը գունատ էին մարգարիտներու պէս՝ աղօտ, փայլագուրկ:

Վարդենու թփերի վրայ կանգնել էին հինգ սոխակ. մէկը մէջտեղը եւ չորսը շուրջը:

Փոփոխակի, հերթով երգում էին շրջանի չորս սոխակները: Նրանք արուններն էին, որ երգում էին մէջտեղ նրստած մարիին հրապուրելու համար:

Այդ իսկական մի մրցահանդէս էր: Արուններից իւրաքանչիւրը ճգնում էր իր երգով գերազանցել միւսներին: Եւ ամէնքն էլ մէկը միւսից գեղեցիկ երգեցին:

Մարին ուշադիր լսեց իւրաքանչիւրին, բայց, երեւի, նրանցից ո՛չ մէկը չգրաւեց նրա սիրտը եւ նա վարանումի մէջ նայում էր մէկ-մէկ ամէնքին. անշուշտ դժուար է չհաւանածին սէր տալ:

Այդ միջոցին մօտակայ նռնու ճիւղքերի միջից մի դայլայիկ բարձրացաւ. մարին գլուխը ուղղեց այն կողմը. — Մի փոքրիկ սոխակ էր երգողը՝ նռնու կարմիր ծաղիկներով ծածկւած:

Ես շատ եմ լսել սոխակի երգեր. լսել ու հիացել. բայց այսպիսի մի երգ կեանքիս մէջ առաջին անգամ էի լսում. ի՛նչպիսի ելեւէջներ, ի՛նչպիսի մեղմ ու սուր հնչիւններ, հազա՛ր-հազա՛ր դայլայիկներ ու նրբին երանգներ:

Այս գեղգեղանքը սիրավառ սրտի, հրեղէն արցունքների եւ անծայր կարօտի մի ամբողջ հէքեաթ էր, մի դիւթական հէքեաթ, հազարան ծաղիկների բոյրերով ներդաշնակւած, որ ծփում էր շուրջս եւ շուրջս փոխարկել էր երագի, եւ հէքեաթը՝ իրականի:

Արդեօ՞ք նման մի սոխակի երգը չի լսած եղել պարսիկ աշխարհի առաջին մեծ երաժիշտը, որ սոխակի դայլայիկներից ստեղծեց Եօթն-Գահը եւ հիւսեց անմահ Ռասթը:

Երագի մէջ սուգած լսում էի ես, եւ մէկ էլ այն տեսայ, որ մարին մի հարբած ոստումով թռաւ երգիչի մօտ, կանգնեց նրա առջեւ ու կտուցը քնքշօրէն թաքցրեց նրա թեւերի տակ:

Քիչ յետոյ լուց երգիչ-սոխակը. ապա նրանք նռնու կարմիր ծաղիկների մէջ կտուց կտուցի տալով փայփայում էին իրար մի այնպիսի աշխարհամոռաց երջանկութեան մէջ, որ նոյնիսկ չնկատեցին թէ ի՛նչպէս այն չորս արու սոխակները գլխիկոր, տխուր-տխուր հեռացան այն տեղից:

Չանցաւ մի պահ, նորից սկսեց երգել սոխակը, լաղթական երգիչը. եւ այս անգամ աւելի հզօր, եւ աւելի բարձր ամբողջ հուր ու բոց, ամբողջ խանդ ու ոգի. ամէն մի հրնչիւնի մէջ՝ սրտից մի կտոր:

Անհուն երջանկութեան եւ պայծառ ուրախութեան բո-

ցեղէն զինու մի շատրւան էր նրա երգը, որ կայլակում էր շողշողալով դէպի վերեւ, դէպի վերեւ . . .

Եւ յանկարծ, ասես, սրի մի հարուածով երգը կտրուեց. եւ երգիչը գլխիվայր ընկաւ նռննու տակ :

Ես վազեցի դէպի նա :  
 Խեղճը փուել էր գետնին եւ արիւնը անընդհատ հոսում էր քնքուշ բերանից. աչքերը կխախտուի՝ հանգչել էին արդէն. իսկ մարին տխուր ծվուններ արծակելով մուրճր մուրճր դառնում էր սիրու համար կեանքը տւած երգչի շուրջը . . .

1913

## ՄԻՐԱՀԱՐ ՔԱՄԻՆ

Մի օր մեղմաշունչ մի քամի Նուբիական բարձունքներից վար սահելով անցաւ Փարաւոնների բուրգերի վէս ճակատների վրայով, իջաւ ոսկէալիք Նեղոսի ափերը, եւ մի վայելչակազմ ու դեռատի արմաւենու ոտների տակ փոււեց հելիհեւ . . .

— Իմ հրաշագեղ, իմ աննման թագուհի, ես քեզ սիրում եմ. ես՝ աշխարհի անսանձ եւ ըմբոստ ոգին՝ անա ճակատների ոտնների ոտակ մարում եմ . . . Երբ հորիզոններից հորիզոններ էի անցնում, սրբազան Նեղոսի մէջ տեսայ չքնաղ պատկերդ, տեսայ եւ սիրեցի . . . Բա՛ց Նուբիական գիրկդ ինձ համար . . .

Եւ արմաւենին արհամարհելով լուռ էր :

— Մի՞թէ գու՞թ չունիս, դո՛ւ որ ա՛յդպէս քնքուշ ես եւ գեղեցիկ, մի՞թէ կը թողնես մեռնիմ շէմքիդ առջեւ . . .

Հեծեծեց քամին եւ մեղմով գրկեց նրա նուրբ իրանը եւ ուզեց համբուրել, բայց արմաւենին զայրացած հրեց նրան եւ ասաց.

— Ի՞նչ ես ծանձրացնում ինձ, անպատկա՛ռ քամի, դու ո՞վ ես որ քեզ սիրեմ. իմ սէրը քեզ համար չէ. գնա՛ կորիք դո՛ւ, անտուն, անհայր, թափառական . . . Ես որ արքայական պարտէզների երազն եմ, ի՛նչպէս կարող եմ սի մոլորաշրջիկի իմ սէրը տալ . . .

— Բայց ես քեզ սիրում եմ բոլոր ծովերի ուժով եւ խորքով. — հառաչեց քամին:

Դու ո՞վ ես որ, մի՞թէ այն չես, որ գիշեր-ցորեկ վայում ես աւերակների մէջ եւ ամայի ուղիների վրայ ունայն դեգերում. ամէն դուռ փակ է քո առջեւ. դու նախանձից տների ճրագներն ես մարում, որովհետեւ տուն չունիս թաւշեայ տերեւներն ես փոշոտում ու վանում ցան ու ցիւր, որովհետեւ չար ես ու խանդոտ, մերկ ես ու աղքատ, զնա՛ հեռացիր ինձնից . . .

— Ի՛մ թագուհիս, մի՞թէ ինձ չես ճանաչում, — ասաց քամին. — ես աշխարհի հզօր, անյաղթ ոգին եմ. ես նա՛ եմ, որ շառաչելով Հիմալայեան երկնասոյգ ժայռերի վրայ, մի թափով թռչում եմ քերելով պարթեւական Դեմաւենտի հակառը պողպատեայ եւ մրրկելով Արարատեան գոհարակերտ գագաթին՝ հասնում եմ մինչեւ բարձունքները Ատլասի:

Ես նա՛ եմ, որ ղօղանջելով Քաշմիրի գմբուխտեայ հովիտներում՝ սլանում եմ իրար խճճելու հսկայական Ամազոնի նախաստեղծ եւ անթափանց անտառները, ինչպէս կոյսը խաղում է իր դեղձան մագերի հետ:

Ես նա՛ եմ, որ գալարելով ու ոլորելով յորձանուտ անդունդները Ատլանդիկի, մինչեւ հրեղէն աստղերն եմ թեւակոխում. ես նա՛ եմ, որ անծայրածիր Սահարայում աւազի բարձրաբերձ լեռներ եմ շինում, նորից քանդելու համար. ես նա՛ եմ, որ քաղաքների նախամայր Մեմփիսը աւազի դեղին հեղեղների տակ ծածկեցի . . .

— Ես սարսափում եմ քեզնից, դո՛ւ դաժան ես, դո՛ւ վայրագ ես. — դողդոջուն ասաց արմաւենին . . . Ես Նեղոսն եմ սիրում միմիայն. Նեղոսը քեզնից հզօր է, բայց եւ գթոտ. նա գիշերները ինձ մեղմանուշ օրօր է մրմնջում եւ նինջս հիւսում չքնաղ երագներով, որբերում է հեռաւոր աշխարհների մարմարեղէն լեռնագահերից . . . զնա այս տեղից. — աղաչեց արմաւենին:

— Բայց մի՛ վախենար, ի՛մ նագելիս, որովհետեւ երբ

սիրում եմ, աշխարհի ամենահեզ, ամենաբարի ոգին եմ դառնում. մի՞թէ դեռ ինձ չես ճանաչում. ես նա՛ եմ, որ իմ քնքուշ թեւերի վրայ դրախտի բուրմունքներն եմ տարածում աշխարհէ աշխարհ. ես նա՛ եմ, որ սրտայոյզ քնարի նուրբ լարերն եմ թրթռացնում եւ նրա գեղգեղանքը հասցնում սիրատոյժը հոգիներին. ես նա՛ եմ, որ դալարագեղ անտառների անհուն լուռթիւնն եմ օրօրում, աղբիւրների մարգարիտների մէջ լալիս ու քրքրում . . . Ես նա՛ եմ, որ երկնասլաց արծիւների թեւերն եմ շարժում եւ Նումիդական առիւծների բաշերը հիւսում. ես նա՛ եմ, որ արշալոյսից մինչեւ արշալոյս մրայօն կոյսերի գիշերագեղ մագերն եմ շոյում եւ աստղերի երագները բերում նրանց. եւ ես նա՛ եմ, իմ թագուհիս, որ մշտամրմունջ խօսում եմ արքայական Մեմփոնի արձանի հետ. եւ ես ահա՛ ոտներեդ տակ հիմա սէր եմ աղերսում: Գթա՛ ինձ, արձակիր շքեղ վարսերդ վրաս, ես յոգնած եմ ու տառապած. թո՛ղ համբուրեմ քեզ եւ երանութեան մէջ մոռանամ վշտերս ու խոնջէնքս դարեւոր եւ թափառումներս անկայան . . .

— Ես քեզ չեմ սիրում, չեմ սիրում. — բարկացաւ արմաւենին, — ես քեզ ասացի, որ Նեղոսն եմ սիրում. նա հզօր է եւ քնքուշ, սիրտը խորն է նրա եւ գթով լի. տե՛ս, ի՛նչպէս փայփայում է նա իմ դէմքը եւ միշտ պահում իր սրտի վրայ. տե՛ս, ի՛նչ գեղեցիկ է նա՛ վեհ եւ հանգիստ. երկնքի ադամանդեայ աչքերը մինչեւ լոյս նրան են նայում հիացած. արքայափառ արեւը նրա հայելու մէջն է փայլում — հուրհրում:

Ես մի՛այն, մի՛այն, նրան եմ սիրում, նրա ոսկեշուրթ ալիքները համբուրում են ինձ եւ զովացնում իմ կարօտակէզ հոգին. առաւօտից մինչեւ առաւօտ մրմնջում է նա ինձ պարիկների դիւթական երգերը եւ պատմում միշտ հրաշալի հէքեաթներ:

Ահա կանչում է նա ինձ. իմ մագերի քաղցրաբոյր ստեղծը պիտի իջնի նրա այրւած ճակատի վրայ. մի՛ այն եւ մի՛ այն նրա համար են բողբոջում իմ սիրավառ համբոյրները: Կորի՛ր, հեռացիր, ո՛վ դու անտուն, պարծենկոտ քամի:

Այսպէս ասաց արմաւենին եւ վարսերը կախեց Նեղոսի վրայ, որի ալիքները թռչում էին վեր, դէպի արմաւենու սիրաբորոք շրթունքները:

— Դո՛ւ որ ինձ չես սիրում եւ արհամարհում ես ինձ, հիմա տես, թէ ո՞վ եմ ես. — քո տէրն եմ ես, ո՛վ դու անմիտ, գոռոզ արմաւենի, քո տէրն եմ ես . . .

Եւ մոնչաց քամին, գալարեց, գայրացաւ քամին, Նեղոսի անշարժ ջրերը վայրագ խանդով խառնեց-պղտորեց. դուրս թափեց ափերից. շառաչեցին ծառերն ու ծառատունկները բոյոր, եւ գետնին փռւեցին. եւ հողի սիւները ամպերի հետ խառնեցին. դողաց, դողդողաց արմաւենին, իսկ սիրահար քամին գրկեց նրան ամուր ու հզօր բազուկներով, պոկեց արմատից, սեղմեց իր գայրացած եւ սիրատուչոր կրծքին, եւ տարաւ հեռո՛ւ, հեռո՛ւ, դէպի անապատները այրւող, դէպի ծովերը շափիւղեայ, դէպի լեռնագագաթները ձիւնափառ . . .

1907

## ՍԳԱՒՈՐ ԱՐԱԳԻԼԸ

Մեր պարտէզի քարծր բարտիի վրայ, ուր ծառը երեք մեծ ճիւղերի էր բաժանւում, երկու արագիւլ, այր ու կին, իրենց բոյնն էին հիւսել՝ մի ամուր եւ մեծ բոյն. այնպէս որ արագիւլները իրենց ձագուկներով հանգիստ տեղաւորում էին այնտեղ:

Ամէն գարուն, ճնծաղիկների երեւալուն պէս, գալիս էին արագիւլները, այր ու կին. հսկայ թեւերը գիւղի վրայ ծափ տալով, եւ ուրախ-ուրախ լա՛կ-լա՛կ անելով, գալիս հանգչում էին իրենց վաղեմի բոյնի վրայ:

Մի քիչ հանգստանալուց յետոյ սկսում էին աշխատիլ. թռչում էին շիւղ, տաշեղ, փետուր գտնում-բերում, ու բոյնը կարկատում:

Անցնում էր մի ժամանակ, ու մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագեր, բոյնի միջեց գլուխները օրորում էին ու մանուկ ձայնով լա՛կ-լակ անում:

Մեր՝ երեխաներիս՝ աչքը չէր հեռանում նրանցից. ուշի-ուշով դիտում էինք արագիւլների ամէն մի շարժումը. մէկ տեսնում էինք, թէ ինչպէս ծնողները փոխնիփոխ դաշտն էին գնում, սնունդ հարում ու բերում-կերակրում ձագերին, մէկ՝ տեսնում էինք, թէ ինչպէս հայր ու մայրը ձագերին թեւերի վրայ առած թռչել էին սորվեցնում, ճիշդ այն կերպ, ինչ կերպ մեր մեծերը մեզ լող էին սորվեցնում գետի խորին տեղերում:

Մի տարի մեծ դժբախտութիւն պատահեց: Հայր-արագիւր կանգնել էր բոյնի եզրին, հսկում էր նորածին ծագերին. իսկ մայր-արագիւր գնացել էր ճահիճը կերակրելու կամ կեր բերելու:

Քաղաքից որսորդներն էին եկել. այդ անգութները կրակեցին հրացանները եւ սպաննեցին խեղճ մօրը:

Օրն եկաւ ճաշի դարձաւ, մայրը չեկաւ. սպասեց հայր-արագիւրը, սպասեց, նորից չեկաւ. երեկոյեան մօտ թռաւ ճահիճը փնտռելու մայր-արագիւրին:

Տեսնելու բան էր, թէ ինչպէս խեղճը թեւակոտոր ընկաւ կնոջ դիակի վրայ, լալագին ծայնով լա՛կ-լա՛կ արեց, վեր ու վար թռաւ, թեւերով մէկ իրեն գլխին էր խփում, մէկ չոր գետնին... Մութը որ իջաւ՝ թեւերը քարշ տալով հասաւ բոյնը, որք ծագերին ծւարեց թեւերի տակ, եւ լռեց: Այնուհետ մենք էլ չէինք լսում նրա ծայնը:

Առաւօտ վաղ թռչում էր բոյնին մօտիկ դաշտերը. գետափերը, աչքը միշտ պահելով բոյնի վրայ. պարէն էր հաւաքում, բերում ծագերին տալիս:

Զագերը երբ թեւաւորւեցին. հայրը զատ-զատ վեր էր առնում նրանց եւ թռչիլ էր սորվեցնում: Զագերը թռչում էին գնում դաշտը, եւ ապա ուրախ-ուրախ դառնում բոյնը, տխուր հօր շուրջը ծափ տալիս, նրան ուրախացնում: Եկաւ աշունը, եւ նրանք միասին թռան գնացին:

Գարնանը մեր արագիւր դարձաւ եկաւ մէն-մենակ: Բոյնը դիտելուց յետոյ գնաց կանգնեց, ճահիճը, կանգնեց կնոջ զարկաժ տեղի վրայ, կանգնեց, կանգնեց, եւ նորից եկաւ բոյնը:

Եւ ամէն օր գնում էր նա այնտեղ. մի ոտքի վրայ ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծռած, գլուխը թեւերի տակը:

Տեսնում էինք յաճախ, թէ ինչպէս մի արագիւր, մի անժանօթ նորը. մօտենում էր նրա բոյնին, նրա հետ լա՛կ-լա՛կով խօսում, ու դժկամ հեռանում:

Երբեմն էլ այդ եկւոր արագիւրները փորձում էին նրատիւ բոյնի մէջ, նրա կողքին. կտուցները քնքշօրէն քսում էին նրա պարանոցով, փետուրների մէջ, բայց նա մերժում էր եւ ուժով բոյնից հեռացնում նրանց:

Մի անգամ, մի արագիւր ուղիղ երեք օր դարբաս արաւ մեր արագիւրին. քանի մեր արագիւրը վանում էր նրան, սա նոյնքան յամառութեամբ գալիս էր նորից, թեւերը փռում մերինի վրայ. գլուխը թաքցնում մերինի թեւերին տակ: Բայց մեր արագիւր սիրտը կոտրած էր, նոր սէր չէր ուզում:

Լուսնկայ զիշերներին յաճախ տեսնում էինք նրան մեռած թափառելիս դաշտերում ու լսում էինք նրա տխուր լա՛կ-լա՛կը:

Այսպէ՛ս, երեք թէ չորս տարի ապրեց նա տխուր ու սգաւոր, ապրեց մենակ ու կատարեալ այրի:

Ամէն գարուն գալիս էր ու ամէն աշուն գնում, մի աշուն էլ գնաց եւ գարունը բացուեց, չերեւաց. սպասեցինք, սպասեցինք — չեկա՛ւ ու չեկա՛ւ:

Բոյնը մնաց, մնա՛ց, ինքնիրեն քանդեց: Ո՞վ գիտէ արդեօք, ո՞ւր թաղեց իր վշտահար սիրտը մեր սգաւոր, մեր մենաւոր արագիւրը:

## ՕՄԱՐ ԽՍՅԱՄԻ ՎԷՃՐ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ

Օմար Խայամը, Խորասանի վշտահար բանաստեղծը, ոսկեղէն նարգիսներու մէջ նստած՝ աշխարհի ունայնութիւնը մոռանալու համար, կաւէ գաւաթից զինի էր խմում:

Այդ միջոցին բարձրացաւ յանկարծ մի սատանի-բամի, որ իր պոչի վրայ ցցւած՝ պտոյտ-պտոյտ գալով, խելագարի պէս այս ու այն կողմն էր վազվզում, ձեռքն ընկածը քրշում, ջարդում, կտորում...

Մէկ էլ, թշնամու պէս արշաւեց խեղճ Խայամի վրայ, անտես փէշերով տւեց վայր ձգեց զինու գաւաթը, կտորեց կաւէ գաւաթը, զինին թափեց հողի վրայ:

Յետոյ խելառ ու չար բամին՝ թեւերը թափահարելով, սինլքորի նման սուլելով, շշուացնելով փախաւ թռաւ հեռուները:

Խայամը մէկ՝ զայրացած նայում էր հեռացող բամու ետեւից, մէկ՝ ափսոսանքով նայում էր կենսաբաշխ կարմիր հեղուկին, որ ծարաւ գետինը ծծեց մի վայրկենում թունդ հարբեցողի պէս:

Ապա աչքերը ձգեց կապուտակ երկնքին եւ այսպէս ասաց Օմար Խայամը, Խորասանի վարդերի տխուր բլբուլը.—

Իմ վառ գինու գաւաթն հողէ

Դու կոտորեցիր, Ասուա՛ծ իմ.

Ուրախութեան դուռն իմ առջեւ

Դու գոցեցիր, Ասուա՛ծ իմ:

Թո՛ղ բերանս լրցւի հողով,

Որ խրմեց իմ գինին.

Ի՞նչ արեցիր, մի՞թէ դուն էլ

Թունդ հարբած ես, Ասուա՛ծ իմ . . .

Եւ Աստծուն լսելի եղաւ Խայամի տրտունջն ու յանդիմանութիւնը. բարկացաւ Աստուած, սաստիկ բարկացաւ, որ մի հողեղէն յանդգնում է այսպիսի բերան բանալ:

Եւ պատժեց Աստուած Խայամին. բանաստեղծի բերանը ծռւեց, լեզուն կարկամեց. էլ չէր կարող խօսիլ Խայամը, ունայնութեան քաղցրախօս բլբուլը:

Երբ անցաւ մի քիչ ժամանակ՝ զգաստացաւ Խայամը, տեսաւ ծանր պատիժը. զղջաց եւ դարձաւ այսպէս թոթովեց դէպի Աստուած.—

Աշխարհիս մէջ մեղք չգործած

Ո՞վ կայ, ասա, Ասուա՛ծ իմ,

Եւ նա, որը չի մեղանշում,

Ի՞նչպէս կ'ապրի, Աստուա՛ծ իմ:

Թէ վաս անեմ, թէ վաս խօսիմ,

Դուն էլ ինձ վաս պատիժ տա.

Ուրեմն ի՞նչ է իմ եւ քո մէջ

Տարբերութիւնն, Ասուա՛ծ իմ . . .

Եւ Աստծուն նորից լսելի եղաւ Խայամի զղջումն ու իմաստալից խօսքը. զարմացաւ, թէ ի՞նչպէս մի հողեղէն կարող է այդպէս խելացի խօսիլ. ամաչեց ինքն իր մէջ, եւ ներեց բանաստեղծին, վերստին շնորհելով նրան ե՛ւ ծիրանի գինի, ե՛ւ աւելի իմաստուն լեզու:

1909

## ԱՐԵՒԻ ՄՕՏ



Մի որբ երեխայ՝ ցնցոտիներ հագած՝ կուչ էր եկել հարուստ տների պատերի տակ: Մէջքը յենել էր մի հարուստ տան պատին եւ մեկնել էր ձեռքը դէպի մարդիկ:

Նոր էր բացել գարունը, մօտաւոր սարերը կանանչին էին տալիս եւ գարնան անուշ արեւը բարի աչքերով նայում էր ամէնքին:

Մայթերով անց ու դարձ էին անում մարդիկ, եւ ո՛չ մի մարդ չէր նայում, չէր ուզում նայել խեղճ ու որբ երեխային:

Երբ արեւը կամաց-կամաց թեքում էր մօտաւոր կանանչ սարերի ետեւը — սկսեց փչել մի ցուրտ քամի, եւ երեխան դողում էր՝ խեղճ ու անտուն:

— Ա՛խ, կարմիր արեւ, բարի արեւ, դուն էիր ինձ միայն տաքացնում, հիմա ո՛ւր ես գնում, թողնում ես ինձ մենակ՝ այս ցրտին ու խաւարին. ես մայր չունիմ, ես տուն չունիմ, ո՛ւր գնամ, ո՛ւմ մօտ գնամ... Վե՛ր առ, տար ինձ քեզ հետ, անո՛ւշ արեւ...

Լալիս էր երեխան լուռ ու մունջ, եւ արցունքները զբլոր-զլոր սահում էին նրա գունատ երեսից: Իսկ մարդիկ տուն էին դառնում, եւ ո՛չ ոք չէր լսում ու տեսնում նրան, ո՛չ ոք չէր ուզում լսել ու տեսնել նրան...

Արեւը սահեց անցաւ սարի միւս կողմը, եւ ել չեքեւաց:

— Բարի արեւ, ես գիտեմ, դու գնացիր քո մօր մօտ... Ես գիտեմ ձեր տունը, այս սարի ետեւն է. ես կու գամ, կու գամ քեզ մօտ, հիմա՛, հիմա՛:

Եւ խեղճ երեխան դողալով՝ հարուստ տների պատերը բռնելով, գնաց, գնաց, քաղաքից դուրս ելաւ: Հասաւ մօտաւոր սարին. դժւար էր վերելքը. քարեր ու քարեր, ոտքը դիպչում էր քարերին, խիստ ցաւում. բայց նա ուշ չդարձնելով բարձրանում էր անընդհատ:

Մութը իջաւ եւ կանանչ սարը սեւերով ծածկեց: Սարի գլխին փալիւում էին աստղերը կանչող, գուրգուրող նրբագանների պէս:

Փչում էր սառը, խիստ քամին, որ ձորերի մէջ ու բարակների գլխին վայում էր. երբեմն թռչում էին սեւ թեւերով գիշերահաւերը, որոնք որսի էին դուրս եկել:

Երեխան անվախ եւ հաստատուն քայլերով գնում էր վերեւ, բարձր, միշտ բարձր. եւ յանկարծ լսեց շների հաչոց, մի քիչ լետոյ էլ լսեց մի ձայն խաւարի միջից.

— Ո՞վ ես, ո՛ւր ես գնում.

— Ճամբորդ տղայ եմ, արեւի մօտ եմ գնում, ասա՛, ո՛ւր է արեւի տունը, հեռո՞ւ է, թէ մօտիկ:

Ճրագը ձեռին մօտ եկաւ մի մարդ. եւ քնքուշ ձայնով ասաց.

— Դու յոգնած կը լինիս, քաղցած ու ծարա՛ւ, գնանք ինձ մօտ: Ի՛նչ անգութ են քո հայրն ու մայրը, որ այս մըթանը քեզ ցրտի ու քամու բերանն են ձգել:

— Ես հայր ու մայր չունիմ, որբ եմ ու անտէր...

— Գնա՛նք, տղաս, գնանք ինձ մօտ.— ասաց բարի անծանօթը եւ երեխայի ձեռքից բռնելով տուն տարաւ:



Նրա տունը մի խեղճ խրճիթ էր, օջախի շուրջը նստել էին բարի մարդու կիներն ու երեք փոքր երեխաները: Նրա խրճիթին կից մի մեծ բակում որոճում էին ոչխարները: Նա հովիւ էր, սարի հովիւ:

— Սիրելի՛ երեխաներս, ձեզ եղբայր եմ բերել, թո՛ղ չլինիք երեք եղբայր, լինիք չորս. երեքին հաց տուող ձեռքը չորսին էլ կը տայ: Սիրեցէ՛ք իրար. եկէ՛ք համբուրեցէք ձեր նոր եղբորը:

Ամէնից առաջ հովիւի կինը զրկեց երեխային եւ մօր պէս ջերմ-ջերմ համբուրեց. յետոյ երեխաները եկան եւ եղբօր պէս համբուրեցին նրան:

Երեխան ուրախութիւնից լաց էր լինում. եւ նորից լալիս:

Յետոյ սեղան նստան ուրախ զւարթ. մայրը նրանց համար անկողին շինեց եւ ամէնքին քնեցրեց իր կողքին. երեխան շատ յոգնած էր. իսկոյն աչքերը խփեց եւ անո՛ւշ անո՛ւշ քնեց:

Երազի մէջ ուրախ ժպտում էր երեխան, որպէս թէ ինքը արեւի մօտն է արդէն, զրկել է նրան ամուր ու պառկել է նրա զրկում տաք ու երջանիկ:

Մէկ էլ սրտի հրճւանքից վեր թռաւ եւ տեսաւ, որ արեւի փոխարէն զրկել է իր նոր եղբայրներին եւ ամուր բռնել է մօր ձեռքը: Եւ նա աչքովին տեսաւ, որ արեւը հէնց այս տան մէջն է, որ ինքը ուղիղ հէնց արեւի գլուխն է...

1905



## ՀՕՐՍ ԳՈՒԹԱՆԸ



(Մի վասպուրականցու պատմած)

Խօսքս այն օրերի մասին է, երբ Սուլթան Համիդ զինեց ու բաց թողեց Քրդերին, որ կողոպտեն ու սպանեն հայ շինականին:

Մեր գիւղի եւ հարեւան հայ գիւղերի լեռները լցւել էին այդ արիւնարբու խմբերով: Մի բուռն հայ անձնէր կտրիճներ ճակատ-ճակատի կուռում էին նրանց դէմ. Քրդերը մեր քաջերի դիակների վրայով միայն պիտի կարողանային մօտենալ հայ գիւղերին:

Կռիւր օրեր տեսեց: Վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ անընդհատ լսում էինք հրացանների ճարճատիւնը. ե՞րբ պիտի վերջանար այս կռիւր. ո՞վ գիտէ: Քրդերի վրայ աւելանում էին նոր խմբեր. թէեւ մեր կտրիճների թիւն էլ էր աճում, բայց թշնամու հետ համեմատելով՝ շատ չնչին էր:

Գիւղերում մնացել էին միայն ծերերը, պառաւները եւ երեխաները. երիտասարդ կիները թէեւ չէին կուռում, բայց օր ու գիշեր, անքուն. ոտքի վրայ՝ հաց էին տանում կուռողներին, վիրաւորներին լնամում, զէնքերը սրբում:

Խեղճ ծերունիները եկեղեցու պատի տակ նստած՝ աղօթք էին մըմնջում, եւ գլուխները կախ՝ խորհում. խորհում, իսկ պառաւները ցամաքած աչքերը քամելով տան հոգար քաշում:

Երեխաներս էլ շատ տխուր էինք, ասենք, լաւ չէինք հասկանում, թէ ի՞նչ է կատարում եւ ի՞նչ է սպասում մեզ. սակայն զիւղի խորին տխրութիւնը մեզ էլ էր համակել. մենք երդեքների վրայ լուռ նստած՝ դիտում էինք կռիւը, եւ կամ կռիւ էինք խաղում. բաժանելով երկու խմբի՝ հայ եւ քուրդ. հայ խումբը միշտ յաղթող էր դուրս գալիս.

Ինձ մի բան միայն շատ զարմացք է պատճառում, եղբայրներս կռիւ վայրումն էին. մայրս ամբողջ օրը արցունք էր թափում, իսկ հայրս մեր հին գութանը հանել էր դուրս, եւ մի անվերջանալի, միօրինակ երգ շրթունքից կախ՝ սուր ուրագով տաշում-տաշտում էր գութանը, հին փայտերը հանում, նորը՝ դնում. միայն երբեմն, երբեմն, երբ աւելի էր ուժեղանում հրացանների ճարճատիւնը, գլուխը վեր էր բարձրացնում, ավրը աչքերին հովանի արած՝ նայում էր լեռը, կռիւ վայրերը, եւ ապա քրտինքը սրբելով եւ նոյն երգը կցելով, շարունակում էր աշխատանքը:

Մի անգամ մայրս սրտնեղած ասաց հօրս.

— Այ մարդ, ի՞նչ քար սիրտ ունիս, տղերքդ լեռը՝ մահի բերան. ողջ գիւղը սգի մէջ, ընկերներդ հաւաքել զիւղի մասին են մտածում,— դու ելել գութանն ես շինում, ու դեռ սիրտ էլ ունես՝ երգում ես. ո՞ւմ համար ես շինում, հարցնող լինի. վաղը վայրենի Քուրդը կուգայ, քեզ էլ կը սպանի, մեզ է՛լ. ու գութանը կը տանի:

— Է՛հ, կնիկ, ի՞նչ ես ասում, մեզ կը սպանեն, հօ՛ գութանն էլ չեն սպանի. ես կը շինեմ. հօ՛ չեմ քանդում. աշխարհը գութանի վրայ է հիմնուած, ողջ մնացինք, գութանը մեզ հարկաւոր է ու հարկաւոր, մեռանք, ով որ տանի, կարելի է արդար աշխատանքի սէր զարթնի մէջը, ինք էլ ողորմիս տայ, ի՞նչ իմանաս աշխարհքիս բանը . . .

Մայրս գլուխը շարժեց եւ հեռացաւ:

## ԵՐԶԱՆԻԿ ԽՐՃԻԹԸ

Վճիտ գետակի վրայ մի փոքրիկ ջրաղաց կար:

Ջրաղացի դռան առջեւ, կանաչ ուռենու տակ, թիկն էր տւել ջրաղացպանը եւ չիբուխը գոհ ծխում. կողքին նրստել էր կինը, իսկ իրենց զթոտ հայեացքի տակ մի սիրուն մանուկ, նրանց երեխան, խաղ էր անում:

Մեղմիկ սօսափում էր ուռենին եւ անշուք ջրաղացը անո՛ւշ մտմտալով հին օրերից մի հին հէքեաթ էր պատմում:

Ինչպէս եղաւ, մի օր այդ սիրուն մանուկը վազելով թիթեռնիկների յետեւից, հեռացաւ ջրաղացից. ընկաւ մացառների մէջ, անցաւ ձորակից ձորակ, կորցրեց ջրաղացի շաւիղը, ու մոլորած գնա՛ց, գնա՛ց, հասաւ մեծ հանապարհին, նստեց եզերքին ու լաց եղաւ:

Եկաւ մի կարաւան. մի հարուստ ուղեւոր անսաւ լացող մանուկին, խղճաց, վեր առաւ եւ իր հետը տարաւ:

Տարաւ իր տունը, եւ որովհետեւ զաւակ չունէր, որդեգրեց նրան:

Մանուկը մեծացաւ, դարձաւ մի շնորհալի երիտասարդ: Ամէնքը սիրում էին նրան եւ ուրախանում նրա վրայ, բայց նա տխուր էր, միշտ տխուր:

Երբ երեկոները մենակ նստում էր իրենց շքեղ պատշգամում, որի շուրջը խնկում էր պարտէզը հազարաբոյր ծա-

ղիկներով, հովասուն ծառերով եւ կարկաչուն շատրւաններով նրա հոգին սլանում էր մի ուրիշ վայր, որ հեռաւոր երազի պէս մէկ երեւում էր, մէկ չքանում . . .

Երեւում էր մի խեղճ ջրաղաց զմրուխտեայ գետակին վրայ, որ օր ու գիշեր մանկութեան պէս սիրուն մի հին հէքեաթ էր պատմում, տեսնում էր երկու հարազատ դէմքեր՝ նստած կանանչ ուռնու տակ. մէկը մտքի մէջ կորած՝ չիբուխ էր ծխում, միւսը արցունքոտ աչքերով նայում էր հեռուն . . .

— Ինչո՞ւ ես տխուր, ի՞մ որդի,— հարցնում էր հարուստ հայրը,— ի՞նչ է պակաս. թէ սէր ունիս մի աղջկայ, յայտնի՛ր. թէ չէ, ի՞նչ կայ . . . ի՞նչ կայ ուրիշ . . .

Եւ խնջոյք էր սարքել քարի հայրը որդուն ուրախացնելու համար. դահլիճները լուսազարդուած էին ջահերով, նազելի աղջիկները պատել էին երիտասարդի շուրջը, խօսում ու ծիծաղում:

Եւ երիտասարդը զգոյշ դուրս ելաւ դահլիճներից, անյայտացաւ խաւարների մէջ, ու էլ չվերադարձաւ:

Նա գնաց շրջնց, թափառեց շատ ու շատ տեղեր, հարց ու փորձ արաւ, եւ մի օր վերջալոյսի շողերի տակ տեսաւ վճիտ գետակի վրայ մի փոքրիկ ջրաղաց: Տեսաւ՝ ջրաղացին կռակը տել է մի հին խրճիթ, որի բուխերիկից անդորր ծուխն էր ելնում:

Մտեցաւ խրճիթին, կամացուկ նայեց լուսամտից ներս. — նստել էր մի ալեւոր մարդ եւ մտախոհ՝ չիբուխ էր ծխում, մի երեւուն պառաւ ցամաքած ձեռներով սեղանն էր փռում. երբ նրանք հացի նստան, պառաւը վեր առաւ մի կտոր հաց եւ ասաց.

— Այս էլ որդուս բաժինը . . .

— Այ կին, այս քանի տարի է, միշտ էլ որդուդ բաժինն ես պահում, ու առաւօտ անձանօթ անցորդներին տալիս . . . Աւա՛ղ, մեր որդին էլ չի գայ . . .

— Այ մարդ, Աստուած գիտէ, մեր որդին հիմի ու՞մ պատի տակ կուչ է եկել. ուրիշի մօր ձեռքին է նայում. կարելի է՝ այն մօր տղան էլ հեռու տեղ է ու ես նրան իմ որդուս բաժինն եմ տալիս. ի՞նչ իմանաս, կարելի է այն մայրն էլ իմ որդուս իրենի բաժինն է տալիս . . .

Այդ միջոցին կրակի պէս ներս ընկաւ որդին, գրկեց մօրն ու հօրը, եւ համբուրեց, համբուրեց լալազին:

— Ա՛ա՛, մեր որդին,— բացականչեցին ձերունիները եւ գրկերի մէջ առան իրենց կորած, կարօտցած որդուն եւ լաց եղան, ուրախ լաց եղան:

Օճախի մէջ կարմիր կրակը ուրախ-զուարթ թելին էր տալիս, պայծառ ու տաք ժպիտով լցնում երջանիկ խրճիթը:

Ջրաղացը անու՛շ անու՛շ մտմտալով մանուկ օրերից մի հէքեաթ էր պատմում՝ մանկութեան պէս սիրուն, մանկութեան պէս ոսկի՛ . . .

1913



## Յ Ե Ղ Ի Հ Ո Ք Ի Ն

(Աւանաօեռի պատմած)



Երբ արտից այնքան հեռու, որ հազիւ լսուում էր նոյն-  
խակ լուռ գիշերին նրա խոր շառաչը՝ անապատում կային  
իրար մօտ մի քանի խղճուկ տաղաւարներ:

Հայրենի յաւէրժ ողբալի սպանդից զերծած՝ մի քանի  
տասնեակ Հայեր էին ծւարել նրանց ներքեւ — ծերեր,  
կանայք եւ մանուկներ:

Ցնցոտիներով էր ծածկւած նրանց ոսկրացած մեր-  
կութիւնը, եւ նրանց հայեացքների մէջ մշտական սարսափն  
էր սառած, ինչպէս կախաղանի տակից հրաշքով ազատւած  
մահապարտների աչքերն են լինում:

Ժպիտ եւ ուրախութիւն սպանւած էին նրանց աչքերի  
մէջ. միայն անմեռանելի յոյսի մի կայծ կար, որ տակաւին  
կեանքի նշոյլ էր տալիս նրանց բիբերին:

Երկնքից հրաշէկ արեւը կրակ էր մաղում, եւ առաւօտը  
կիզող էր, ինչպէս միջօրէին:

Հեռու՝ դեղնաւուն, ծաւալուն հողերի վրայ հորիզոն-  
ներն էին իջնում պղինձէ պատերի պէս:

Մերերն ու պառաւները՝ հիւանդ ու դալուկ՝ կուշ էին  
գալիս տաղաւարների մի անկիւնում, գոց աչքերով՝ իրենց  
երդիքների անդորր ծուխն ու պարտէզների ծաղկած ծա-  
ռերը վերապրելով: Եւ քանդուում էր ու հատնում նրանց  
չարչարած հոգին...

Ցերեկները վայրի Բեդուիներն էին գալիս գաղտագողի՝  
յածում եւ հոտւըտում տաղաւարների շուրջը, առեւան-  
գելու համար վայրագ Թիւքերի աչքից հողոպրած գեղեցիկ  
աղջիկները, իսկ գիշերները անապատի մեռելային լուսթեան  
մէջ բորենիներն էին ոռնում արեան եւ դիակի անյագ ծա-  
րաւից:

Եւ մարդ ու զազան միասին նորանոր սոսկումներով  
յօշոտում էին ցաւագին բեկորները մի զոհուած ցեղի:

Գիշերները՝ մետաքսեայ սեւ վերակապերի պէս փա-  
ղաքուշ ու քնքուշ՝ անդորրում էին թէեւ այդ թշուառների  
հուր ու զարհուրանք տեսած աչքերը, սակայն բրբրում էին  
նրանց հոգիները կարմիր, ահաւոր տեսիլներով...

Առաւօտ էր: Վաղահաս պառաւած կանայք սոււերի մէջ  
նստած՝ չորացած մատներով կար էին անում շրջակայ  
Արքաներից հազար խնդրանքով ձեռք բերած աշխատանքներ,  
որոնցով իրենց հարազատների չոր հացն էին վաստակում:

Անխոնջ, անդուլ կարում էին նրանք, իրենց ցմլւած  
սրտերի մէջ սեւ արցունք թափելով:

Տաղաւարների առջեւ, մանուկները՝ պստիկ աղջիկներ  
ու մանչեր, մանկութեան երագով տարւած՝ մոռանալով  
իրենց խղճալի օրը, խաղ էին անում, նոյնիսկ երբեմն ու-  
րախ ճիչ արձակելով:

—Տղա՛ք, դասի՛ եկէք,—հնչեց տաղաւարներից մայրերի  
ծայրը:

Եւ երեխաները ցրւեցին տաղաւարները: Երկու երե-  
խայ՝ եղբայրներ՝ ձեռք ձեռքի բռնած, մտան տաղաւար-  
ներից մէկի մէջ: Մեծը տասներկու տարեկան կը լինէր.  
փոքրը եօթ-ութ: Երկուսով էլ վազ տուին ընկան մայրա-  
կան գիրկը:

Չարաբախտ կինը նահատակութեան ճանապարհի վրայ կորցրել էր իր ամուսինը եւ երկու զաւակ. ամուսնուն եւ պատանի որդուն շատերի հետ միասին, անդարձ տարել էին թիւրք ոստիկանները. իսկ ծաղկափթիթ աղջկան յափշտակել էին Քիւրտերը:

Մայրը գորովագին համբուրելով երեխաներին, ասաց կրտսերին.

— Աղւո՛ր գառնուկս, հիմա ես կը գրեմ, դուն պիտի կարդաս. տեսնեմ, գիրերը լաւ մը կը ճանչնաս. վերջն ալ ասոր նման պիտի գրես. եթէ լաւ կարդաս, քեզի արմաւ կու տամ:

Եւ մայրը ցուցամատով գրեց աւագի վրայ.

— « Աստու՛ած պահէ հայրիկս, քոյրիկս, աղբարիկս »:

Երեխան հեգելով կարդաց գրածը:

— Ապրի՛ս, աչքիս լուսիկը. մայրը նորից համբուրելով փոքրիկին, մի քանի չորացած արմաւ տուաւ:

— Հիմակ ալ դուն նստէ գրէ:

Երեխան արմաւը ուտելով, սկսեց փոքրիկ մատիկով գծեր քաշել աւագի մէջ:

Մայրը դիմելով մեծ որդուն՝ ասաց.

— Իմ սիրունիկ Վազգէնս, տեսնեմ ի՛նչ գրեր ես:

Մանուկը մի քանի բան էր գրել աւագի վրայ. մայրը աչքերը լարելով կարդաց.

— « Այլազգը տարաւ հայրիկս, քոյրիկս, աղբարիկս. կ'ըսեն որ սպաննած են. ես չեմ հաւտար. երբ տուն դառնանք, անոնք հոն ողջ-առողջ պիտի գտնենք » :

— Հարկա՛ւ, սիրելիս, հարկա՞ւ...

Եւ արցունքը զսպելով համբուրեց երեխային եւ չկարողանալով դասը շարունակել, երկուսին արմաւի հետ մի կտոր սեւ հաց տալով ասաց.

— Հիմ՛ա զացէք, դուրսը խաղցէք. իրիկունը, Վազգէնիկս, քեզի Աւետարանէն դաս պիտի տամ. անանկ լաւ պիտի սորվիս որ, ընկերներդ զարմանան. ու երբ տուն երթանք, հայրիկդ պիտի տեսնէ, որ պարապ չես անցուցած հոս ատենդ. շա՛տ պիտի ուրախանայ:

Երեխաները զուարթ դուրս թռան:

Մայրը նրանց ետեւից փղձկաց դառնագին. ապա արցունքները սրբելով լացակմած մրմնջաց.

— « Այո՛ երբ մեր ազատած հայրենիքը դառնանք, անոնք բոլոր ուրիշներու հետ, ամենքն ալ, յարութիւն առած հոն պիտի գտնենք, անշու՛շտ »:

Ականատեսը աւելցրեց .

— Խեղճ հայ մայրերից մի քանին հետները միմիայն Աւետարան ունէին. թղթի ո՛չ մի կտոր: Անապատի աւագները յաճախ դարձան հայ մարտիրոսուած մանուկների համար գիրք ու տետրակ. եւ աւելի յաճախ՝ պատանք ու գերեզման, անխաչ եւ յաւիտեան կորած ու անյայտ...

1922

## ԲՈՒԴԴՆ

Երբ Սաքիա-Մունին Բուդդհա դարձաւ, երբ լսեց տիեզերքի խորիմաստ բարբառը, որով նրա հոգում յայտնագործւեցին մարդկութեանը մինչ այդ օրը անյայտ՝ տանջանքի եւ փրկութեան մեծ ճշմարտութիւնները — այն ժամանակ իջաւ Հիմալայի մայրիներով նիրհուն արտեւանունքներից մինչեւ Բենարէս՝ բանանների եւ բալասանների քաղաքը:

Դեղին բղամիդով փաթթուած՝ տիեզերական իմաստութեամբ անդորր աչքերով ողջունում էր ճանապարհի անցորդ-դարձողներին՝ աւետարանելով ամէնքին.

— «Ես գնում եմ ճշմարտութեան թագաւորութիւնը հիմնելու. ես թմբկահարելու եմ կոչւած Անակգբին, Անամհին այս աշխարհի խաւարի միջից»:

Բենարէսի հոյակապ դարպասների առջեւ, նա դիմեց ժողովրդին.

— «Լայն բացուած են Մեծ Անամհի դռները նրանց համար, ով ականջ ունի լսելու»:»

Եւ ամբոխը նորից հրհուաց, եւ բարձրացաւ մեծ ժխոր:

Բենարէսի շքեղ եւ մեծ հրապարակներում՝ խոնուող ամբոխի առջեւ՝ նա բարոզեց տանջանքի եւ փրկութեան «Չորս Մեծ ճշմարտութիւնները»...

Բայց ամբոխը նորից հրհուաց, եւ բարձրացաւ նորից մեծ ժխոր:

Եւ իմաստունը նորից դարձաւ դէպի ժողովուրդը կա-

րեկցական հայեացքով եւ յայտարարեց տանջանքի եւ փրկութեան «Ութստեղեան ճշմարտութիւնը»:

Եւ սակայն ամբոխը աւելի ժխոր բարձրացրեց եւ հրհուաց անհեթեթ:

Բայց Սաքիա-Մունին, որի վարդապետութեան սկիզբը փառաւոր է, միջուկը՝ իմաստուն եւ վերջը՝ փրկարար — աւելի եւս կարեկցական զգացումով լցւած դէպի ամբոխի անհաւատութիւնը, — նորից դիմեց նրան՝ թշուառութեան եւ տանջանքի այդ տգէտ ժառանգին:

Նա բացեց ժողովրդի առջեւ ճանապարհները դէպի Նիրվանան, որի յաւերժական երանաւէտ անդորրը ըմպելու համար պիտի փշրել այն «Տասն շղթաները»՝ որոնք կապում-կաշկանդում են մարդուն տանջանքի եւ ցաւերի գոյութեան հետ, արտասուելի եւ անխորհուրդ կեանքի հետ:

Եւ ամբոխը այս անգամ աւելի ուժգին եւ խօլական հրհուաց: Ծաղրական ծամածռութիւններով ծափ զարկեցին եւ խուժուժ գոռացին — «Սրբայորդին ցնորել է: արքայորդին ցնորել է»: զորգոռացին ամէն կողմից, ամէն բերան, եւ արհամարհանքով նեխած արմաւներ էին նետում դէպի Կատարեալը:

Եւ երբ գիշերն իջաւ, եւ ամբոխը ծաղրից յոգնած՝ հեռացաւ Չարի եւ Ստի հրապարակներից — Բուդդհան մնաց մեն-մենակ հրապարակի մէջ կանգնած:

Մտախոհ նայեց նիրհի մէջ թաղւած քաղաքին, կարեկցաբար շարժեց իմաստուն գլուխը եւ հեռացաւ:

Սակայն քաղաքի դարպասների մօտ մարդիկ նորից դառնապէս ծաղրեցին նրան:

Բուդդհան այս անգամ զայրացաւ. զայրացաւ մարդկանց չարութեան վրայ, բայց առաւել զայրացաւ նրանց

տգիտութեան վրայ, որը «Տասը շղթաների» նախապատ-  
ճառն է, եւ ամենամեծ յանցանքը աշխարհում...

Ու հեռացաւ դարպասներից, իմաստուն ուղիներով  
միշտ քայլող ոտքերից թօթափեց անգիտութեան մէջ տա-  
ռապող քաղաքի փողոցն աշխարհի չորս հողմերի առջեւ եւ  
բարձրացաւ նորից Հիմալայ...

Տիեզերական անգոր խորհուրդների մէջ սուզելու օրից  
մինչեւ այսօր Բուդդիստն չէր զայրացած. սակայն այսօր  
սաստիկ զայրացաւ :

Նրա մեծ հոգին, որ լի էր միայն սիրով եւ զթով՝ այ-  
սօր յանկարծ միանգամից լցւեց տիեզերական ահագին զայ-  
րոյթով :

Եւ նա իր ճգնափայրում, գլխաբաց, տարածելով ձեռ-  
քերը, կանգնեց Հիմալայն ի վեր, երկնքի դէմ-յանդիման եւ  
ասաց .

— «Ո՛վ Ագնի, ո՛վ Ինդրա, ո՛վ Տրիմուրտի, հին Աստ-  
ուածներ.

Ո՛վ Անակիգրն, ո՛վ Մեծն Անմահ, լսեցէ՛ք իմ աղօթքը.

Չար են մարդիկ, չար է նրանց կամքը. ագահ են դէպի  
կեղծիքն ու սուտը, պապակող են տուփանքի եւ արեան, եւ  
անյագ են չարութեամբ եւ անգիտութեամբ:

Խաւարն են տենչում նրանք, եւ ոճիրն են սիրում. ճշ-  
մարտութիւնը արհամարհում են եւ մեծ արդարութեան  
ուղին ցեխոտում: Գթութիւն եւ սէր չունին, գիշեր եւ ցերեկ  
եղեռն են նիւթում:

Աղաչում եմ ձեզ, ոչնչացրէ՛ք բոլոր մարդկանց. ուրիշ  
ելք չկայ նրանց իսկ փրկութեան համար, որովհետեւ նրանք

խուլ են դէպի ճշմարտութիւնները եւ դաշոյն են սրում  
իրար հանդէպ:

Ի՞նչ է երկիրը — ցեխէ մի անօթ, որ լիքն է մարդկան-  
ցով, օձերով, եւ որդերով, կենդանիներով եւ այլ զազան-  
ներով, որոնք անդուլ եւ անդադար յօշոտում են իրար, պա-  
տառոտում իրար: Ո՛վ կը լսէ նրանցից փրկութեան բար-  
բառը, սիրոյ խօսքը, զթութեան պատգամը:

Նրանք գոհ են իրենց զազրելի, պազշոտ եւ եղեռնային  
գոյութեամբ, եւ ո՛վ կ'անսայ փշրել «Տասն շղթաները»: —  
Ո՛չ ոք, ո՛չ ոք :

Ուրեմն, լսեցէ՛ք իմ խնդիրը, Մեծ Աստուածներ, փշրե-  
ցէ՛ք ցեխէ այդ անօթը...

Տիեզերական ո՛վ մեծ Բրուտ, խորտակի՛ր այս արիւնա-  
զանգ եւ վաւաշ-գարշանքի ցեխէ անօթը, որ շինել ես քո  
Անուշադրութեան կամ գուցէ Բարկացման ժամին...

Աղաչում եմ, կատարեցէ՛ք իմ աղերսանքը, եթէ ես ձեր  
ընտրեալն եմ, ձեր մունետիկը: Ուրիշ ելք չկայ մարդկութեան  
փրկութեան համար: Երբ նրանք չուզեցին լսել ինձ՝ ձեր  
պատգամախօսին, եւ արհամարհեցին մեծ ճշմարտութիւն-  
ները, ապա ուրեմն ինչ՞ով կարող են ազատել-փրկել այն  
տառապանքներից, տուփալի ցանկութիւններից, ոճիրներից  
եւ եղեռներից, որոնք՝ յաւերժապէս՝ երկրի ստեղծման օրից  
վախճանը մինչեւ՝ անմեկին, անխուսափելի շողկալած են  
մարդկութեան եւ համայն արարածների եղկելի գոյութեան  
հետ:

Եւ ուրեմն թո՛ղ չէանայ, թո՛ղ ոչնչանայ տանջանքի այս  
հիւլէն — երկիրը նողկալի»:

Հողմը ունայնութիւն էր հեծեծում ծառերի սաղարթ-  
ների միջով եւ քաշքշում էր Բուդդիստի քղանցքները. իսկ նա

անուշադիր դէպի շուրջը՝ նայում էր երկինք՝ գլխաբաց եւ բազկատարած:

Ամայացել էր նրա շուրջը. նրա բարեկամ եղնիկներն ու այծեամները, ցիններն ու արծիւները, որոնք տարիներից ի վեր սովոր էին նրան, եւ որի անօթից բընծի հաշն էին ուտում — այսօր՝ նկատելով իրենց բարեկամի զայրացկոտ հայեացքը՝ հեռու էին գնացել . . .

Միայն հողմն էր իր հուժկու թեւերը թափահարում Բուդդհայի շուրջը եւ չարահնիօրէն քաշքշում նրա քղանցքները:

Այդ միջոցին երկու ճնճողուկ, ծլւլւլով պտոյտ տւեցին Բուդդհայի շուրջը եւ եկան նստան նրա աջ ափի մէջ: Նըրանցից մէկը գնաց շիւղ եւ խոտ բերեց, տւաւ միւսին. նորից գնաց շիւղ եւ խոտ բերելու, իսկ ափում մնացած ճնճողուկը Բուդդհայի մատների արանքում իրար էր կպցնում շիւղն ու խոտը: Նա բոյն էր շինում:

Բուդդհան մտքերի մէջ խորասուզւած՝ հազիւ թէ նկատեց նրանց արարքը:

Աշխարհի կործանման ահեղ ժամին սպասելով մտասուց՝ անցան օր ու գիշերներ. եւ երբ Բուդդհան ուշքի եկաւ՝ տեսաւ որ ճնճողուկները իր ափում բոյն են շինել, ձեր կան եւ նրանց վրայ փոքրիկ ճնճողուկը թուխս է նստել. իսկ արուն անընդհատ գնում էր գալիս եւ կտուցի մէջ որդեր ու մրջնակներ էր բերում իր կնոջ համար:

— «Յիմարներ, — բմծիծաղեց Բուդդհան, — տուփանքի մէջ անգիտացած՝ չգիտեն թէ ի՞նչ ոճիր են գործում:

Եւ ուզեց ափից վայր թօթափել բոյնը:

— «Մ՛նչու եմ խղճում, չէ՞ որ սրանք չեն ըմբռնելու փրկութեան խօսքը, եւ յաւերժապէս, միշտ նորոգող սերունդներով դատապարտւած են տառապանքի. չէ՞ որ

կործանումը միակ ելքն է հնարաւոր, չէ՞ որ կործանման մէջն է իսկական կարեկցութիւնը:»

Սակայն խղճաց ճնճողուկներին, չաւերեց բոյնը, եւ թողեց իր ափի մէջ, եւ երբեմն ուշք էր դարձնում որ չինի թէ ձերը ափից վայր գլորւին . . ., եւ խնամքով, ամուր ու հաստատ բռնում էր իր ափը:

Եւ ցասկոտ խոհերի մէջ խորասուզւած, աչքը աւերման տենչալի ժամին ծովացած՝ անցան օրեր ու գիշերներ. ո՞րքան, այդ նկատեց Բուդդհան, սակայն, երբ հայեացքը նետեց իր ափին — տեսաւ, որ ձերից արդէն երեք հատ փոքրիկ աղւամազ ձագեր են դուրս եկել եւ օրօրելով նւազ վզիկները՝ հազիւ ծլւլւում են:

Ծնողները որդեր ու մօեղներ էին բերում եւ կտուցով քնքշօրէն ու խնամքով դնում էին ձագերի բերանը:

Բուդդհան նայեց թոյլ ու նւազ ձագերին եւ խղճահարւեց:

— «Ուրեմն ես պահպանում եմ նրանց, որոնք նոյնպէս չարագործ են, յօշոտում են որդեր եւ մօեղներ: Ի՞նչ — կարեկցմ՛լ: Չէ՞ որ հաստատուն է, իմ կամքից անկախ՝ Կարմայի ահեղ օրէնքը — հատուցումն ամէն գործերի եւ արարքների. ով չարիք է գործում, նրան հետեւում է տանջանքը, պատիժը, ինչպէս սայլի անիւը հետեւում է լծւած գրաստին:

«Տիեզերքում ամենուրեք տիրում է մշտնջենաւոր, անողորք արդարութիւնը, եւ նրա ամենատեսաչէց վատ արարքներդ ծածկելու համար չես կարող պատսպարել ո՛չ ծովի անդունդներում. ոչ լեռների խորին վիհերում, եւ ո՛չ անսահմանութեան անհասանելի ծայրերում:

«Ինքը՝ մեծն Մանուն՝ վարդապետը սիրոյ, տւաւ եւ օրէնքը պատժի. նա ինքն ասաց՝ — Պատիժը հզօր իշխան է,



ճարտար կառավարիչ, օրէնքի իմաստուն գործադրող. պատիժն է կառավարում մարդկային ցեղը: Նա արթուն է, երբ ամէնը քնած են: Պատիժը ինքը — արդարութիւնն է: «Ուրեմն, թո՛ղ գայ պատիժը, ո՛վ Ազնի: Քո ահեղ հրով հալած պղինձ հեղեղի՛ր աշխարհի վրայ. թո՛ղ ոչնչանան մարդն ու ամէն շնչաւոր իրենց չարով եւ ստով:

«Մ'նդրա, կործանի՛ր քո երկնային վրանի շքեղ խոյակները, ջնջի՛ր, խորտակի՛ր ամէն ինչ»:

Սակայն այդ վայրկեանին նրա զայրացած հոգու մրուայի միջով անցաւ կարեկցութեան մի շող, եւ նա իր ցասկոտ աղօթքի վերջում անլսելի շնչաց.

«Ո՛վ Անսկիզբն, կործանի՛ր այս աշխարհը, սակայն խնայի՛ր այս երեք ձագերին. սրանց սիրոյն խնայի՛ր եւ ծնողքներին»:

Եւ նորից զայրացած հայեացքը ձգած երկինք՝ սպասում էր կործանման ահեղ ժամին, սակայն եւ յաճախակի ուշք էր դարձնում ձագերի վրայ, որոնք շարժում էին օդի մէջ եւ կարող էին վայր ընկնել:

Անցան նորից օրեր եւ գիշերներ, եւ Բուդդհան մի օր նկատեց, որ ձագերը արդէն թեւաւորել են, բայց դեռ այնքան թոյլ են եւ քնքուշ են թեւերը, որ հազիւ կարողանում են թռչել մինչեւ Բուդդհայի ուսերի եւ գլխի վրայ եւ նորից դէպի օդը:

Ձագերը թռչում էին եւ ուրախ ծլւում, որ կարող էին թռչել: Ակամայ մի ժպիտ անցաւ Բուդդհայի խոժոռ դէմքի վրայով. նրան թուաց, թէ այսպիսի սիրուն ձագեր դեռ մինչեւ օրս չէր տեսել:

Եւ երբ նորից ուզում էր կրկնել իր ցասկոտ, աշխարհաւեր աղօթքը, այդ միջոցին մի փրկարար միտք փայլեց նրա հոգում...

«Ես, որ խղճում էի իմ ախում բոյն դրած, այնտեղ ծնած եւ սնած այս արարածներին, միթէ մեր երկիրն էլ այդպիսի մի թռչնի բոյն չէ Անսկիզբն Անմահի աստուածային անսահման օդին մէջ. եւ ես՝ որ մարդկային հիւլէական խղճովս ողորմում եմ այս թռչնիկներին եւ, տեսնելով նրանց չարիքն ու եղեռնը, ներում եմ եւ խնամում, չէ՞ որ Անսկիզբն էլ իր մեծ գեր-տիեզերական սիրով եւ գթով խղճում է մարդկանց եւ արարածներին ու, տեսնելով եւ ներելով նրանց յանցանքները՝ փրկութեան պատգամն է ուղարկում նրանց — երանական Ներվանայի ուղին...»

«Ո՛վ Անսկիզբն Անմահ, ների՛ր իմ կարճամտութիւնը, խնայի՛ր բոլորին, խղճա՛ բոլորին — բոլոր մարդկանց, բոլոր արարածներին. մի՛ լսիր ինձ, թող ապրին ամէնքը — մի՛ կործանի՛ր մեզ, մի՛ աւերի՛ր մեր բոյնը — աշխարհը քո անսահմանութեան մատների միջին...»

Եւ երբ՝ օրեր ու գիշերներ յետոյ — ձագերը այնքան մեծացան, որ իսպառ թողեցին իրենց բոյնը եւ թռան հեռուները արեւը երգելու — միայն այն ժամանակ Բուդդհան վար իջեցրեց իր բազուկները:

Եւ օրհներգելով Անսկիզբն Անմահին՝ վեր առաւ իր ցուպը եւ նորից իջաւ մարդկանց մէջ, հշմարտութեան բարբառը պատգամելու եւ փրկութեան «Օրէնքի Անիւը» գորելու աշխարհի մէջ...

## ԲՕՂԴԻԽԱՆԸ

Երկնային Պետութեան տէրը — Բօղդիխանը՝ Ծին-Շի-  
Խօանգ-Տի, երկնքի պէս հպարտ եւ բարձրամիտ՝ նստել էր  
փղոսկրէ գահոյքի վրայ՝ մուսլ եւ դաժան :

Նրա աչքերի մէջ մրրկում էր զայրացկոտ Ծովը Դեղին,  
որ ճանկուում է ափերը Չինու : Եւ նրա խոժոռ ճակատի  
վրայ կնճիւնները Շամօ-Գոքի անապատի օձերի պէս գալար-  
ւում էին :

Բազմել էր մտատանջ եւ դժնետեսիլ, ինչպէս ամպը  
մթազին, որ շանթ ու որոտ ունի կրծքում խտացած :

Նրա գահոյքի պատուանդանի ներքեւ — յատակի վրայ  
գետնատարած՝ անյոյս ճակատները մարմարէ սալաքարերին  
սեղմած՝ ընկել էին Չինական աշխարհի բոլոր ակնյայտնի  
գիտունները եւ իմաստունները — չորս հարիւր յիսուն աղի-  
ծածան զանկեր... Ու ամէնքը սեղմած էին յատակին,  
ինչպէս մրրկի առջեւ արտերը գետնատարած...

Եւ որոտաց Բօղդիխանը.

— Արդեօք այրե՞ց, մոխիր ու ծուխ դարձա՞ւ ոգիների  
աշտարակին վրայ յոխորտացող աստղադիտարանը :

— Այո՛, երկնքի եւ երկրի տէր, այրեցին, մոխիր ու  
ծուխ դարձան աշտարակն ու դիտարանը քո աստուածային  
հրամանի համաձայն, — ահաբեկ պատասխանեց մեծ նա-  
խարարապետը՝ ճակատը մինչեւ յատակը բախելով :

Նորից որոտաց Բօղդիխանը.

— Արդեօք այրեցի՞ն, մոխիր ու ծուխ դարձա՞ն այն

գրքերը, մագաղաթներն ու մատեանները, որոնք գտնոււմ  
են իմ գալիսօսնի ներքոյ, որոնք ճգնոււմ են տիեզերական  
գաղտնիքներն ու պատճառներ գտնել, բայց որոնք խա-  
բոււմ են ու մոլորեցնում մարդկային ոգին :

— Այո, երկնքի արեւ, երկրի երկինք, աստուածների  
որդի, ամէն ժամ հաւաքոււմ են եւ այրոււմ քո երկնա-  
փայլութեան ապարանքի հրապարակի վրայ՝ քո ամենա-  
կարող կամքի համաձայն, — պատասխանեց մեծ նախարա-  
րապետը՝ ճակատը յատակին քերելով :

— Հիմա դո՛ւք ինձ ասացէք, ո՛վ գիտուններդ եւ իմաս-  
տուններդ, — դարձաւ Բօղդիխանը նրանց, — դուք, որ քր-  
քրոււմ էք երկինքն ու երկիրը, մարդկային հոգին ու կեն-  
դանու հոգին, եւ ամենայն ինչ, ասացէ՛ք, ի՞նչու համար է  
ապրում մարդը, ի՞նչ է կեանքի նպատակը, ո՞ւր ենք գնում,  
ի՞նչ է նիւթը, ի՞նչ է ուժը, եւ ինչո՞ւ են դրանք. պատաս-  
խանեցէք ինձ : Ասացէք ինձ, ի՞նչ է աշխարհը, ինչո՞ւ  
ստեղծուեց տիեզերքը, ասացէ՛ք, ե՞րբ է նրա սկիզբն ու  
վախճանը, ի՞նչ է նա, եւ վերջապէս ի՞նչ է ժամանակն ու  
տարածութիւնը, եւ ի՞նչու են դրանք...

Տիրեց անապատական ծանր լուռութիւն :

— Այդ դու մեզինք բիւր անգամ լաւ գիտես, ո՛վ մեծդ  
Բօղդիխան, դու արքաների արծիւ. դու որ երկնքի որդին  
ես եւ արեւից իջած՝ մեզինք լա՛ւ գիտես. — երկիւղազին  
պատասխանեց գիտուններից աւագը — մի զառամեալ գրուխ...

— Հարցի՛ս պատասխանիր, ծերուկ, ապա թէ ո՛չ...  
Եթէ չգիտէք, ապա ինչո՞ւ էք գրում եւ կանառներում կո-  
կորդ պատուում. ասա՛, պատասխանիր...

— Տէ՛ր իմ ամենահօգօր... մենք կարող ենք պատաս-  
խանել, բացատրել, եթէ հասնելի է քո երկնային ականջնե-  
րին, շա՛տ բաներ. բայց թէ «ի՞նչ է, եւ ինչո՞ւ համար է» —

չենք կարող. այնքան մեծ է, սոսկավիթխար, անպարունակ եւ անպարփակ տիեզերքը — անծիր եւ անհուն, որ մենք նման ենք այն անծին, որը կանգնած անծիր ովկիանի ափին՝ մի կաթիլ միայն վերցրած նրանից, քննում է այդ կաթիլը՝ ամբողջական Ովկիանը հասկանալու համար. անզոր է մարդը, — ընկերը տիղմում սողացող որդերի. . .

«Ամենայն երեւոյթ, ամենայն առարկայ իր պատճառը ունի, եւ իր հետեւանքը. մենք կանգնած ենք պատճառների սանդուխքի մի անյայտ աստիճանի վրայ. երբ պատճառները քրքրելով մենք իջնում ենք աստիճան աստիճան դէպի խորախոր անդունդները տիեզերքի, մեր միտքը հալչում է ու ցնդում, ինչպէս անծրեւի կաթիլը կիզող արեւի առջեւ. . . Ոչ ոք չի կարող իջնել մինչեւ առաջին աստիճանը, որովհետեւ նա չկայ. . .»

«Աստուածների մեծ շառաւիղ, այն բոլորը, ինչ մենք տեսնում ենք, զգում ենք, շոշափում ենք կամ լսում՝ ծնունդ են տիեզերական մայր պատճառի, մայրը բոլոր պատճառների. պատճառականութեան շղթայի մի օղակն է միայն մեր ձեռքում, իսկ միւս անհամար, անթիւ օղակների շղթան թաղուած է անհունութեան մէջ. ոչ ոք չի կարող հասնել առաջին օղակին, որովհետեւ նա չկայ. . .»

— Ինչի՞ս է պէտք նա, ինչ որ ես տեսնում եմ, լսում ու շոշափում, երեխան իսկ գիտէ եւ հասկանում է իրերը, այնպէս, ինչպէս ինքն է զգում եւ երեւակայում. տիեզերական բովանդակութիւնը ինձ չէ հետաքրքիր, ես ուզում եմ գիտնալ — իմանալ էութիւնը նրա, ինչ է նա, պատճառը նրա. ժամանակն ու տարածութիւնն եմ ես ուզում հասկանալ, պատասխանեցէ՛ք ինձ կամ — մեռէ՛ք բոլորդ. . .»

Ամպրոպի նման որոտաց Բողոքիխանը եւ բոլոր — բովանդակ ապարանքը դրդաց . եւ դաժան աչքերի ծովերը դեղին՝ փոթորկեցին մոլեգին. . .

Լուտասի թերթերի պէս դողացին-դողողացին գիտուններն ու իմաստունները բոլոր. . .

— Երկնքի որդի, ամենաբարի ոգի, տէր մեր մահին ու կեանքին, սուրբ է քո կամքը, եւ քո տենչը դէպի իմացականութիւնը՝ նուիրական. բայց ինքը Մեծն Սաքիա-Մունի-Բուդրհան, Հիմալայը խոկման. ինքը Մեծն Կօն-Ֆուցին տը, Ոսկի աստղը Արեաց աշխարհի, ինքը Մեծն Կօն-Ֆուցին ու մեծն Լաօ-Օին, որոնց բերանով ինքը՝ ժամանակի եւ տարածութեան, յաւէրժութեան եւ անսահմանութեան Աստուածն էր բարբառում, — նրանք նոյնիսկ անկարող եղան բարձրացնել տիեզերական անհասանելի զաղտնիքների վարագոյրի ամենադուզնեայ ծալքն անգամ. . .

Ինչպէս Դեղին Ծովի մրրկածեծ ջրերը կրծում են մագլցում Չինու ափերը ժայռոտ՝ ազատութիւն գտնելու համար կաշկանդող ու խեղդող եգերքներից, այնպէս էլ մռնչում էր Բողոքիխանը՝ անոյս եւ մտաւանջ. . .

— Դուք ամէնքդ պիտի մեռնիք, եթէ չմեկնէք ինձ ժամանակի եւ տարածութեան պատճառը, էութիւնը, նպատակը. . .

Չայրոյթից եւ յուսահատութիւնից ըմբոստացած՝ ծառացաւ աւագ իմաստունը, խփեց զաւազանը մարմարեայ յատակին, թօթեց ալեհեր բաշը եւ խրոխտացաւ Բողոքիխանի հակատն ի վեր :

— Ստրուկների տէր. . . անհուն է, անծայր, անսկիզբ, անվերջ, անափ, անըմբռնելի տիեզերքը իր ժամանակով եւ տարածութիւններով. անհամար աստղեր եւ արեւներ եւ ժիր-կաթիլներ են ծնւում ու մեռնում ինչպէս վայրկենական երեւոյթներ յաւերժութեան մէջ, ինչպէս մանր խխունջներ ովկիանի մէջ. տիեզերքը լեցուն է արեւների բոյլերով, աստղերի հոյլերով, ծիր-կաթիլի անծայր կարաւաններով եւ

մուրակները երամներով, ինչպէս արքայի հսկայական շտեմարանները բրինձի հատիկներով, փեթակները մեղուներով եւ լեռները հոտերով եւ դաշտերը երամներով նժոյգների...

Եթէ արքան ստրուկների կարողանայ գտնել եւ նստիլ հրեղէն նժոյգը թեւաւոր, որը եթէ կարողանայ լոյսից եւ մտքից արագ՝ մի հազարերորդական վայրկեանում հասնել արեւին եւ անցնել այն կողմը եւ այդ թափով անհամար, անհամար, անհամար դարեր արշաւէ տիեզերական տարածութիւնների միջով՝ այն ժամանակ մի մազ անգամ առաջ գնացած չի լինի իր գահոյքի մօտից... Այդքան ահագին եւ անըմբռնելի է տիեզերքը:

Այլեւս մենք ոչինչ չենք կարող ասել, սպանիլ մեզ՝ դու որ երկնքի որդին ես, դու պիտի գիտենաս այն, ինչ որ մենք չենք կարող գիտենալ...

— Ես գիտեմ, այո՛, միայն ես գիտեմ, — մռնչեց Բողդիխանը, — ես գիտեմ, որովհետեւ ես եմ ստեղծել ամէն ինչ, եւ տիեզերքը՝ ժամանակն ու տարածութիւնը. ոչինչ չկայ՝ ո՛չ արեւ, ո՛չ աստղեր, ո՛չ չար եւ բարի, ո՛չ ուժ եւ նիւթ, ո՛չ մարդ եւ անասուն, — ու միայն ես կամ, ես գոյութիւն ունիմ, եւ այդ ամէնը ես եմ ստեղծել — մարդկային ոգին, եւս եմ Աստուածը տիեզերաշէն...

Ոչինչ չկայ՝ իրօք եւ իսկապէս՝ կայ միայն իմ միտքը եւ կամքը, ես մտածում եմ ու կամենում — եւ ահա ստեղծում է տիեզերքը:

Ահա կը սպանեմ ես ձեզ, կը սպանեմ ձեր ոգին — կը մեռնի, կը սպանւի ձեզ շրջապատող, ձեզ թւացող բոլոր բովանդակ տիեզերքը...

Տարէ՛ք սրանց ամէնին գլխատման հրապարակը... ,  
եւ նախարարապետը ահաբեկ՝ գլուխ իջեցրեց դժնեայ

եւ ժանտաղէմ Բողդիխանի առջեւ, եւ բոլոր գիտուններին ու իմաստուններին դուրս տարան գլխատելու:

Միւս օր Բողդիխանի հրամանով ներս սողաց նախարարապետը եւ յայտնեց որ ամէնքը գլխատւած են արդէն...

Այն ժամանակ շանթերով փայլատակեցին Բողդիխանի մուայլ աչքերը, եւ նա հրամայեց.

— Հրովարտակեցէք մեծ պարիսպներից մինչեւ դարպասները երկնածրար Հիմալայի եւ մինչեւ ափերը Մեծ-Ովկիանի, որ այսուհետեւ չպիտի գրւի ոչ մի գիրք երկնային պետութեան սահմաններում, չպիտի մտածւի «ինչի՞ եւ ինչո՞ւ» ի մասին, չպիտի խորհուի կեանքի նպատակի, նիւթի եւ ուժի մասին, չպիտի քննեն տիեզերական գաղտնիքները, չպիտի հարցւի պատճառների մասին, իրերի սկիզբի եւ վախճանի մասին, եւ մանաւանդ ո՛չ մի շշուկ, ո՛չ մի միտք ժամանակի եւ տարածութեան մասին — երբեք, երբեք...

Հրովարտակեցէք աշխարհէ աշխարհ, որ Բողդիխանը սպանեց Ոգին եւ Միտքը, որովհետեւ Ոգին մղում է դէպի անյուսութիւն, Միտքը՝ դէպի մահ. կորչեն Միտքն ու Ոգին. կեցցէ՛ Կեանքը՝ անգիտակ եւ անմիտ. թո՛ղ ապրի իմ ժողովուրդը առանց Ոգու եւ Մտքի, անգիտութեան մէջ ուրախ եւ երջանիկ. թո՛ղ ահի եւ արեւի կենսաբոյր համբոյրների տակ սրիէ եւ զւարճանայ...

Երեկոյեան պալատականները գտան Բողդիխանին իր գահոյքի վրայ մեռած՝ դաշոյնը սեփական ձեռքով իր սրտի մէջ խրած...  
—

1907

### ՖԱԹԻՆՆ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ՄԵՆԻՍՏԵՐ

(ՊԱՏՄԱՆԱՆ ԳԱՑԿԵՐ)

Սուլթան Մեհմէդ, կէսօրից յետոյ նստել էր Սէրայի մեծ դահլիճում, գահի վրայ, վեհափառ սարքը գլխին : Ձախ ափի մէջ բռնել էր մօրուքը եւ ցուցամատը դրել էր բարակ, երկարուն, սուր թի վրայ. խորագնին հայեացքով նայում էր իր ոտների ներքեւ Սպահանի թանկարժէք գորգերի վրայ ծունր դրած մեծ-վէզիրին, Սէր-Ասկեարին, դեֆդերտարին, Միւնէնիմ-Բաշին եւ Հէքիմ-Բաշին :

Մեծ-վէզիր Մահմուտ փաշայի խորագէտ հայեացքը կարդում էր Սուլթանի դէմքը, որ միշտ անթափանցելի կերպով ծածկում էր նրա հոգեկան կացութիւնը : Սուլթանը յուզուած էր վէզիրի հաղորդած լուրերի պատճառով :

« — Փոյթ չէ, ես կարող եմ, եթէ ուզենամ, գեալուր վեհտիկցիներին հանել խոզ ձենովացիների դէմ. սակայն հիմա բարեկամ պիտի ցոյց տալ, որ յետոյ յարմար ժամանակին լաւ հարւածել, այսպէս» : Դու դեֆդերտար, — դիմեց Սուլթանը պետական գանձապետին, — ամենաընտիր նւէրներ ուղարկիր շուտով իմ անունից վեհտիկի եւ ձենովայի իշխանապետներին, իբրեւ նշան բարեկամութեան :

Դեֆդէրտարը խորին գլուխ տուց մինչեւ գետին :

— Դո՛ւ, Սադրագամ, հարցրեց Սուլթանը մեծ-վէզիրին, — ուրիշ ի՞նչ լուրեր ունիս :

— Բոյուկ Սուլթան, մահառ Հունիադին Բելլըադի մէջ ահագին թուով ասկեար է հաւաքել, իսկ Առնաուդները Իսկէնդեր-Բէգը յարձակել է քո պետութեան սահմանների

վրայ, եւ քո հաւատարիմ ծառաներից շատերին չարաչար սպանել, մնացածներին գերի վարել... — պատասխանեց վէզիրը վախվախով :

Սուլթանի երեսի վրայ ոչ մի մկան չի շարժեցաւ :

— Աշխարհասասան մեծ Փադիշահ, Իսլամի Վահան, քո քաջ բանակները վրէժի կրակով բռնկւած՝ քո մէկ հրամանին են սպասում կուռի դաշտ թռչելու՝ մեռցնելու եւ մեռնելու քո փառքի համար... — սիրտ առած բերան բացեց զինուորական նախարարը՝ Սէր-Ասկեարը :

Սուլթանի դէմքի վրայ նորից ոչ մի մկան չի շարժեցաւ :

— Ալլահի սիրելի, հակատագրի ընտրեալ, յաւիտեանս Պաթիհ Սուլթան, — կարճատեւ լուռութիւնը խզեց պալատական աստղագէտ՝ Միւնէնիմ-Բաշին. — երկնքի աստղերը քո ձեռնարկի համար շա՛տ բախտաւոր ելք են գուշակում. ժամանակն է անյաղթ սուրդ մերկացնելու :

Մեծ վէզիրը, Սէր-Ասկեարը, Միւնէնիմ-Բաշին խօսք մէկ էին արած Սուլթանին համոզելու, որ գեալուրների դէմ պատերազմ հռչակէ :

Սուլթանը մի փոքր հայեացք նետեց վէզիրի վրայ. սա վայրկեանը յարմար համարեց նորից խօսելու :

— Ի՞նչ է մտածում մեր հոգու եւ մարմնի Տէրը, Կրայների, Շահին Շահերի, Սուլթանների Սուլթանը : Ի՞նչ է մտածում քո իմաստուն հանճարը պատերազմ յայտարարելու մասին, դու, նոր ժամանակների մեծ Սողոմոն արքայ... :

— Ե՛ս... ես ի՞նչ եմ մտածում — այդ միայն ես զիտեմ. եթէ սեփական մօրուքիս մազն անգամ զիտենայ իմ մտքերը, արմատից կը պոկեմ այն... տիրաբար ասաց Սուլթանը եւ լռեց :

Վէզիրը լռեց, տեսնելով որ այլևս անհնար է Սուլթանի դիտաւորութիւնը իմանալ, թէ արդեօք ուզո՞ւմ է նա պա-

տերազմ թէ ոչ գիտէր, որ Սուլթանի գաղտնապահութիւնը անսահման է, յիշելով, որ Սուլթանը մի անգամ ասաց թէ՛ յաջողութեան հոգին գաղտնիք պահելն է եւ մի վճիռ՝ լաւ խորհելուց յետոյ կայծակի պէս արագ գործ դնելը :

Սակայն Սէր - ասկերը փորձ արեց զրգուել նրա գայրոյթը:—

—Մեծ դազի Փաղիշահ, դու որ մինչեւ այժմ տասը թագաւորութեան եւ տիրել եւ հարիւր եօթանասուն բաղաք գրաւել, հիմա յանդգնում է վլախ Վոյփոտ Դրակուլը՝ այդ գեափուր վլախը աններելի, անհանդուրժելի լրբութիւն է գործել քո հաւատարիմ ծառաների դէմ. քո ուղարկած պատգամաւորներին, որոնք մեր սրբազան օրէնքի համաձայն չեն հանել նրա առջեւ իրենց սարըքները, հրամայել է գլուխնին բանալ, իսկ երբ մերոնք մերժել են, այն ժամանակ այդ շունը ասել է, — թող այդպէս լինի. հրամայելով դահիճներին որ բեւեռեն սարըքները մերոնց գլուխին վրայ: Եւ դահիճները ահագին գամեր են խփել ծառաներիդ գանգերի մէջ եւ այդպիսով սոսկալի տանջանքների մէջ նահատակել . . . Անհանդուրժելի է այս. անհանդուրժելի . . .

Սուլթանը այս սարսափելի դէպքի վրայ բարձր եւ ուրախ ծիծաղեց, եւ նորից ծիծաղեց. նրան շատ զւարճալի ու սրամիտ թւաց Դրակուլի այս եղեռնական արարքը: Ապա ծիծաղից հանգստանալով, ասաց սենեկապետին, որ իր առջեւ բերեն միւս սենեակում սպասող բանաստեղծներին եւ Շենտիլ Բեյլինին, վենետիկցի այս նշանաւոր նկարիչին, որ վաղուց հետէ Պօլսումն էր ապրում Սուլթանի հրաւէրի համաձայն՝ նկարելու համար թէ՛ գեղարուեստասէր փաղիշահին եւ թէ՛ այլ պատկերներ:

Մինչ նրանց գալը՝ հարցրեց Սուլթանը Հէքիմ-բաշուն.

—Ի՞նչ արդիւնք ունեցաւ տասնեւչորս մանկաւիկները փորերի բացումը:

Մի-երկու օր առաջ մի պառաւ կին զանգատել էր, թէ Սուլթանի մանկաւիկները փախցրել են իր ձեռքից մի վարունգ. հարցաքննութեանը մանկաւիկները մերժեցին պառաւի մեղադրանքը. ապա Սուլթանը հրամայեց նրանց փորերը ճեղքել, ապացուցելու համար թէ ո՞վ է կերել վարունգը:

—Մեծափառ փաղիշահ, արդարամիտ Սուլթան, ես Խստանքօլ-Ղաղիսիի ներկայութեանը Ձեր հրամանի համեմատ, բացեցի մէկ—մէկ բոլոր պատանիների փորերը եւ տեսայ, որ իրօք նրանցից մէկը կերած է վարունգը:

—Շատ ուրախ եմ, — ասաց զոհունակութեամբ Սուլթանը. հշմարտութիւնը երեւան եկաւ, արդարութիւնը հաստատուեց:

Ներս մտան եւ խոնարհ գլուխ տալով ծնկի եկան բանաստեղծ - փիլիսոփայ Սինան, որ Սուլթանի գրադարանապետն էր, բանաստեղծ Համդի, եւ բանաստեղծ Շէհդի, որ 4000 ոտանաւոր տունի մէջ երգել էր Յաթիհի յաղթանակներն ու փառայեղ գործերը. նրանց հետ էր եւ նկարիչ Բեյլինին:

Սուլթանը սիրալիբ ողջունեց նրանց. նա իր արքայական հովանաւորութիւնը տարածում էր բանաստեղծների եւ փիլիսոփաների վրայ, եւ սիրում էր նրանց հետ խօսել բարձրագոյն նիւթերի մասին: Ինքը եւս գրում էր պարսկերէն լեզուով գազէլներ՝ Աւնի կեղծանունով:

Սուլթանը գահի բարձի տակից հանեց մի գիրք, որ զարգարւած էր պարսկական մանրանկարներով, եւ ասաց.

— Համդի, կարդացի իմ սիրելի Ջամիի «Իւտուֆ եւ Զուլէյլան»։ շատ գեղեցիկ է. կ'ուզեմ, որ այն եւս թարգմանեմ մեր ժողովրդի համար, այնպէս կատարեալ, ինչպէս թարգմանեցիր Նիզամիի «Լէյլա—Մէջնումը»:

Համդին անսահման ուրախութեամբ ճակատը հպեց գորգին իր յօժարութիւնը յայտնելով:

— Դո՛ւ, դեֆդերդար, ուղարկեցի՞ր Քերաթ սիրելի Ջամիին իմ տարեկան նւէր ոսկին:

Դեֆդերդարը մինչեւ գետին գլուխ տւեց:

— Դո՛ւ, Սինան, — դիմեց Սուլթանը նրան, — սիրո՞ւմ ես Շամիին:

— Աստուածընտիր փառիշահ, քո սիրած բանաստեղծին ի՞նչպէս կարելի է, որ ես չսիրեմ. նա Պարսիկների եօթը մեծերից մէկն է:

— Այո՛, բայց ես ամենից շատ հիացած եմ Զէյլալէ-դէ-Ն-Ռիւմիի վրայ. նրա իմաստութիւնը անհուն է: Ուռումնների Ապլատուն փիլիսոփան նրա չափ խորագէտ չէ:

— Այո՛, մեծ փառիշահ, իսկական աստուածայինը Զէյլալէ-դէ-Ն-Ռիւմին է, քան թէ Ապլատունը, որ գեաւորների պաշտելին է. չէ՞ որ Ռիւմիի իմաստութեան համաձայն մարդկային կեանքի, նրա հոգու նպատակն է, որ վերջը լուծուի իր նախադրիւրի մէջ—Աստծու մէջ, այն ծովի մէջ, որից երբեմն դուրս է հոսել, որ ապա հետեւողական աստիճաններով դառնայ հող, բոյս, անասուն, մարդ, ապա հրեշտակ, եւ վերջը Աստծուն հասնի...

— Դու, Շէհդի, — դարձաւ Շէհդի բանաստեղծին, երէկ ստացայ Զէյնէր խանումի դիւանը, որ ինձ է նւիրել. սիրուն գագէլներ կան, բայց ես աւելի սիրում եմ Միհրի խանումի գագէլները. ի՞նչպիսի քաղցրութեամբ գովում է նա իր սիրածին, նրա գեղեցկութիւնը աստուածութեան է

հասցնում, — Դեֆդերդար, վաղը իմ անունից նւէրներ ուղարկիր շէյր խանումներին, Դեհլի, Բաղդադի դիպակներ, միւսլէներ ու սաւայիներ, ինչ որ հաճելի է կանանց:

— Շա՛տ ճշմարիտ է նկատել աշխարհի աջը, արեւ — Սուլթանը, — ասաց Շէհդին, — որ երբ կարդում ես Միհրի խանումի գագէլները, թւում է թէ Նեզիմի դէրվիշն է երգողը, որ պաշտում էր գեղեցիկը, եւ իր սիրածի մէջ աստուածութիւնն էր անձնաւորւած տեսնում:

— Մի՞թէ... վաղը ուրեմն թո՛ղ Սինանը ինձ բերէ Նէզիմի դիւանը, իսկ այսօր քեզ կը տամ մի քանի գագէլներ, որ նոր եմ գրել, միւս օր կը խօսինք դրանց մասին: Ապա հայեացքը ուղղելով վենետիկցի նկարչին, ասաց.

— Ի՞նչ նոր բան ունիս նկարած, իմ սիրելիս... Հռչակաւոր վարպետը ցոյց տւեց մի պատառ, որի վրայ նկարած ունէր Յովհաննէս Մկրտչի կտրած գլուխը: Սուլթանը հիացած գովեց նկարի վառ գոյները, ապա հարեւանցի ասաց.

— Սակայն պարանոցի այս կտոր միսը, որ դեռ նրկատում է կտրած գլխի վրայ, իրականին չի համապատասխանում:

Նկարիչը զարմացած նայում էր Սուլթանին.

— Այո, — շարունակեց Սուլթանը, — երբ մէկը զլխատում է, պարանոցը իսկոյն ոչնչանում է, որովհետեւ նրա մկանունները մորթերի, ջղերի եւ երակների հետ անմիջապէս քաշւում - կծկւում են գլխի եւ իրանի մէջ:

Եւ նկատելով նկարչի կասկածանքը՝ հրամայեց պալատական զինավառ դռնապան - պահակին, որ մի ստրուկ բերէ: Ստրուկին դահլիճ բերին. Սուլթանի ակնարկի վրայ պահակը թրի մի հարուածով թուցրեց ստրուկի գլուխը

ներկաների սարսափած աչքերի առջեւ. յետոյ Սուլթանը հրաւիրեց նկարչի ուշադրութիւնը կտրած գլխի վրայ :

— Ճշմարիտ չէ՞ ասածս, սիրելի Բելլինի :

— Այո՛, իսկ եւ իսկ, իմաստուն Սըբայ :

Մինչ այդ, Սերայի մինարէից հնչեց միւշկնի երեկոյեան աղօթքը. Սուլթանը վեր կացաւ, քայլերն ուղղեց դէպի Սերայի միւս յարկաբաժինները, ապուստի եւ աղօթքի համար :

Սուլթանի աչքին՝ սողալով երեւցաւ Ղզլար - Աղասին, մեծ ներքինապետը. Սուլթանը խորհրդաւոր ձայնով շնչաց նրան եւ ներքինապետը աչքերին քսեց Սուլթանի ջիւլպայի քղանցքը գոհունակ ժպիտով եւ հեռացաւ :

Բոլոր ներկաները սոււերների պէս իրար յետեւից՝ երերուն քայլերով՝ դուրս եկան իմաստութեան եւ ոգիի դահլիճից . . .

1920

## “ՁԵՐ ԽՆԴՐԱԾԸ ԻՄ ՈՏՆԵՐԻ ՏԱԿՆ Է,,

Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյեան ծովախորշի արծաթէ ջրերի վրայ մակոյկով ձնմելիս՝ հարբած գեղեցկի հրեղէն գինով, իրեն ծովն է նետել՝ ալբեների վրայ քայլող լուսնեակը բռնելու, — եւ անդարձ սուզել է այնտեղ :

Ես չեմ պատմում եւ այն բանաստեղծի մասին, որ կախարդաւոր բլբուլի հէքիաթական երգով՝ ջանգեալների անծայր անտառներն է մտել՝ բռնելու նրան, — եւ անդարձ կորել է այնտեղ :

Ես պատմում եմ Շիրազի այն բանաստեղծի մասին, որ միշտ ճշմարիտն է խօսել եւ քարկոծել է ճշմարտի համար :

Մեծ Զրադաշտն ասել է. «Ճշմարիտը խօսիր աներկիւղ այս աշխարհի հզօրների առջեւ» :

Եւ Մուսա-Շիր-Ալին, Շիրազի բանաստեղծը, հրապարակների վրայ, դարբանների առջեւ, թէ իշխանաւորների երեսին միշտ ճշմարիտն է ասել եւ չի վախեցել :

«— Չար են ձեր գործերը եւ ձեր սրտերը՝ կեղծ. Աստծու անունով խաբում էք խեղճերին եւ սիրոյ դիմակով զրկում մերձաւորին :

— Դու՛ք ներբողում էք բուռնցքն իշխողի, որբի եւ այրիի դատն էք պաշտպանում՝ ծեծելով ձեր քար կուրծքը արիւնոտ ձեռքերով :



— Դո՛ւք սէրն ու զգւանքը առնում էք եւ ծախում, փէշէրիդ տակ դանակ սրած՝ իրար համբոյր էք տալիս...»

Այսպէս էր ասել միշտ Մուսա - Շիր - Ալին :

Եւ բոլորը հալածել են նրան. բարեկամը ողջոյն չէ տւել եւ ընկերը երես է պահել նրանից. հրապարակներից անցնելիս ծաղրել են նրան եւ նրա հացը արցունքով թրջել. սակայն ամբոխի զայրոյթը դէպի նա ա՛յնքան է յորդացել եւ իր զայրոյթը մէջ ա՛յնքան է զազանացել ամբոխը, որ խեղճ Մուսա-Շիր-Ալին հազիւ է մազապուրծ փախել-ազաւել ամբոխի ճիրաններից:

Եւ օր ու զիշեր հանապարհ կտրելով՝ պատմուհանը անապատների տատասկներով զգզգւած եւ մուհակները առապարհների քարերով քրքրւած՝ յոգնած հասաւ նա մի օր Բուխարայի պարիսպների տակ :

Արդե՛օք ներս մտնի քաղաքը, թշնամիների բանակը, ճշմարտութեան խօսքն ասելու, թէ՞ զնայ անապատ բորենիների հետ սեղան նստի: Մի վայրկեան վարանելուց յետոյ, նա ներս մտաւ քաղաքը եւ մոլորեց փողոցից փողոց :

Եւ նա տեսաւ մշակներին՝ կորացած մէջքերով, ծանր բեռի տակ. նրանք յոգնած քայլերով տանում էին բեռները եւ մեծատան շտեմարանները լցնում. իսկ մեծատունը թանկագին պատմուհանի մէջ փաթաթւած՝ տեսնելով իր հարստութիւնը, շփում էր կարմիր մօրուքը եւ մրմնջում — Փա՛ոք քեզ, Ալլահ...»

Տեսաւ Մուսա - Շիր - Ալին մուրացիկների շարանը, որ դռնէ դուռ էին անցնում. մի տեղ հալածում էին նրանց եւ նրանք ուրիշ դուռ էին բախում :

Եւ տեսաւ նոյնպէս թէ՛ ինչպէս մեծատունը մի սեւ

դրամ տւաւ մի ծեր աղքատի եւ ինքը ծերունու օրհնութեան տակ քայլում էր հպարտ եւ մեծաշուք, հիացած իր բարութեամբ : Եւ հանապարհին աջ ու ձախ խոնարհ ողջոյն էին տալիս նրան եւ մեծատունը ողորմածօրէն ընդունում էր ողջոյնները :

Տեսաւ եւ նոյնպէս թէ՛ մեծատունը ինչպէս խոնարհ զլուխ տւաւ եւ ճկեց մէջքը մինչեւ գետին՝ մի աւելի հարուստ մեծատան առջեւ, որն հազիւ նշմարեց նրա ողջոյնը...

Նորից ոլորեց փողոցից փողոց հալածական երգիչը եւ տեսաւ դարձեալ մարդկային այն բոլոր արարքները... ինչ որ տեսել էր Շիրազում...

Օրը երեկոյանում էր...

Խիստ յոգնած էր Մուսա-Շիր-Ալին եւ շատ անօթի:

Ձեռքը տարաւ գրպանը, հանեց մի ոսկի փոքրիկ դրամ, վերջին դրամը, որ մնացել էր մօտը, եւ ափում բռնած քայլեց դէպի շուկան հաց զնելու:

Բարձր մինարէից հնչեց մօլլայի երեկոյեան էգանը. բարեպաշտ մօսլիմանները խումբ-խումբ ուղղեցին հրապարակը եւ ծնրադէր նամազի կանգնեցին:

Բանաստեղծը զնաց այնտեղ, կանգնեց հրապարակում, եւ դիտում էր իր շուքը :

Բարձր հնչում էր մօլլայի աղօթքը եւ փուռում քաղաքի վրայ :

— «Մէկ է Ալլահը եւ Մուհամմէդը նրա մարգարէն է:

Ողորմած է Ալլահը եւ նրա ողորմութեանը սահման չկայ: Ծովը կը ցամաքի, բայց նրա գութը անսպառ է իր օրդիների համար :

Փա՛ոք Ալլահին, նրա բաշխած շնորհների եւ բարիքների համար:

Ո՛վ Ալլահ, ներող եղի՛ր քո անհուն բարութեան մէջ մարդկանց մեղքերի հանդէպ եւ տո՛ւր մեզ քո ամենօրեայ հացը»:

Մուսա-Շիր-Ալին այդ իսկ միջոցին ձգեց ափի ոսկին իր ոտներին տակ, տրորեց մաշւած մուհակով, կանգնեց նրա վրայ եւ հրապարակով մէկ՝ բարձրածայն գոչեց.

— Ո՛վ մօլլա, ո՛վ մարդիկ, դուք ինչ որ խնդրում էք Աստծուց, - ան՛ա այստեղ է, ճշմարիտն եւ ասում ձեզ, - ձեր խնդրածը իմ ոտների տակն է...

Նրա ձայնը թաւալեց եւ փռւեց հրապարակի վրայ, դիպաւ աղօթողների բարեպաշտ ականջներին եւ բարձրացաւ վեր, մինարէի գլուխը եւ ընդհատեց մօլլայի հոգեբուխ էզանը...

Տիրեց մի պահ լուսթիւն, եւ մէկ էլ խուլ մռնչաց ողջ հրապարակը. բոլոր աղօթողները ոտքի կանգնեցին.

— Ի՞նչ է ասում այս Գեափուրը, ո՛վ է սա:

— Ի՞նչպէս է յանդգնում Աստծու դէմ խօսիլ:

— Ո՞վ է սրբապղծում մեր հաւատքը...

Հազար բերան մռմռում էին ամէնքը՝ օղակ կապելով Մուսա - Շիր - Ալու շուրջը:

Կատաղութիւնն աչքերի մէջ՝ վրայ հասաւ մօլլան.

— Ո՛վ Ալլահի հաւատացեալներ, ի՞նչ էք կանգնել, քարկոծեցէք այս գեափուրին:

Եւ առաջին քարը վերցրեց մօլլան, ուժգին թափով արծակեց Մուսա - Շիր - Ալու վրայ. քարը շխլով գնաց եւ դիպաւ բանաստեղծի հակատին. արիւնը ցայտեց եւ օրօրեւեց բանաստեղծն ու փռւեց գետին:

Մօսլիմանները հետեւեցին մօլլային, եւ կատաղի ցատումով մեծ ու փոքր քարեր էին շարտում նրա վրայ: Ար-

դէն մեռել էր նա, բայց նորից շահում էին քարերը եւ բլրանում նրա վրայ:

Այդ իրարանցումի մէջ՝ ամբոխը յանկարծ նկատեց թշուառ բանաստեղծի ոսկի փոքրիկ դրամը, որ փայլում էր քարերի միջեց. ամէնքը իրար հրելով վրայ պրծան, սակայն մօլլան, որ բոլորից մօտիկ էր կանգնած՝ յետ մղեց նրանց եւ ասես, խելակորոյս, ընկաւ գետին, ոսկին յափշտակեց եւ ամուր բռնած գոչեց ուրախացած.

— Ո՛վ Ալլահ, փառքդ շա՛տ լինի, մեծ է քո ողորմութիւնը. ամէն տեղից հատուցանում ես քեզ օրհներգողին:

— Մեծ է Ալլահը, ասին ուրիշները, արդարի որդիները անհաց չեն մնայ, փա՛ռք քեզ յաւիտեան, փա՛ռք քեզ...

Ճշմարիտ էր ասում Շիրազի բանաստեղծը. — Ով մօլլա, քո երկնքից խնդրածը նրա ոտների տակ գտար: Ճշմարիտ են խօսել միշտ բանաստեղծները. — Ո՛վ մարդիկ, ձեր խնդրածը նրանց ոտների տակն է...

1909

## ԳԱՐԻԲԱԼ ԴԻՍԿԱՆԸ

Սրանից տարիներ առաջ Օտեսայում, այն տանը, ուր ես էի ապրում, իմ սենեակի դէմ ու դէմը կենում էր մի ծեր իտալացի կօշկակար, իր թուլակազմ, եղնիկի պէս վախկոտ, տաս-տասերկու տարեկան աղջիկ-թոռնիկի հետ :

Դրացիները նրան անւանում էին Ջիօվաննի :

Ծերունի Իտալացին տնից սակաւ էր դուրս գալիս. նստակեաց, գլխաքարշ, աշխատանքից եւ կեանքի բեռից կորացած մէջքով նա երբեմն զնում էր շուկայ եւ թեւի տակին մի բան դրած վերադառնում տուն: Եւ ապա մինչեւ երեկոյ լսում էր նրա խցից մուրճի թրխկոցը...

Յիշողութեանս մէջ կենդանի պատկերանում է նա հիմա,— բարձրահասակ եղած պէտք է լինէր. տխուր էր դէմքը եւ մտախոհ, բայց ամենագրաւիչը նրա աչքերն էին — մի երագուն, մարմանդ կրակով աչքեր, որ մի անգամից վստահութիւն էին ներշնչում հանդիպողին եւ գուրգուրում:

Բարձր հակատի տակից բարութեամբ ժպտում էին այդ աչքերը ծանօթների դիմաց, իսկ ձայնը սրտազին էր եւ բարեկամական :

Այդ հոգեթով աչքերը ինձ քաշեցին դէպի իրենց եւ ես մի օր ներս մտայ նրա մօտ. նա կռացած էր մի հին կօշիկի վրայ, որ սեղմել էր ծերացած ծնկների մէջ եւ կրունկին մեխեր էր խփում: Եւ քթի տակ մեղմիկ մրմնջում էր «Մարսէլէզի» յաղթական քայլերգը:

Ես բարեւեցի նրան, գլուխը բարձրացրեց եւ սիրաւիր ժպտով բարեւս առաւ. մենք դուրսն իրար պատահելիս, իբրեւ հարեւաններ, միմեանց միշտ բարեւում էինք :

— Հը, ի՞նչ կայ, հարեւան, գալդ բարի :

— Դէ՛հ, հարեւաններ ենք, եկայ, որ զրոյց անենք, խնդրում եմ որ դուք էլ մէկ մէկ գաք ինձ մօտ, ասացի ես:

Նա ժպտաց եւ շարունակեց ընդհատւած աշխատանքը:

— Հիմա սա կը վերջացնեմ, բարեկամս, կը սկսիք հանգիստ զրոյց անել. դուք ասէ՛ք, ի՞նչ նորութիւններ կան:

Ես ասացի, որ նորութիւն չունիմ, եւ սկսեցի զննել սենեակը. — մի շատ աղքատիկ, անգարդ եւ նոյնչափ էլ մութն ու փոքր սենեակ էր. մի դուռ բացւում էր դէպի մի ուրիշ սենեակ, ուր բնում էին պապ ու թոռ:

Այս անշուք, մերկ սենեակի մէջ աչքի էր ընկնում ոսկեգօծ շրջանակի մէջ Գարիբալդիի մեծադիր պատկերը, որ կախւած էր ծերունու գլխի վերեւը. — ես մտածում էի, խնդ՞ծ ծերունի, գոյութեան կուր անողոք ալիքները նրան քշել, զգել են հայրենիքից հեռու այս ափերը՝ աղքատ ու միայնակ. բայց նա չէ մոռացել ազգային հերոսին հետը վերցնել. ի՞նչպէս սիրում են Իտալացիք այս մարդուն :

Ծերունին հանեց ինձ մտածմունքից .

— Ինչո՞ւ լուռ ես, հարցրեց նա:

— Հայր Ջիօվաննի, սիրո՞ւմ ես դու Գարիբալդիին :

— Օ՛, ի՞նչեր ես ասում, բարեկամ, զարմացած հնչեց նրա ձայնը, մարդ էլ չըսի՞րէ Գարիբալդիին. նա հոգի էր, հոգի. ա՛յդպէս մարդ չի եղել ու չի լինի. ո՞վ որ նրան տեսել է, էլ ուրիշ բան չի ուզում տեսնի :

— Բայց դու նրան ինքդ աչքով տեսն՞ել ես, հարցրի ես :

— Ի՞նչեր ես ասում, նորից զարմացած՝ լայն-լայն բացեց աչքերը. — Դ՛նց թէ ես նրան տեսել եմ. մի՞թէ դու

չգիտես, որ ես նրա զինւորներից մէկն եմ եղել. ես էլ «Ալպիան որսորդների» բանակի քաջերից մէկն էի, նրա «Հազարեակի» մշտական կամաւորներից. քանի՛-քանի՛ անգամ ինքը Գարիբալդին անունս տուել է եւ ուսիս խփել :

Եւ յանկարծ շտկեց տարիներով կորացած մէջքը, ճակատը պայծառացաւ, եւ աչքերը հուրհրացին :

— Զուգէ՛ պպէ Գարիբալդի, Զուգէ՛ պպէ Գարիբալդի... ահա՛ իմ փառքը, իմ անչափ հարստութիւնը, ահա՛ իմ բախտը, որով ապրում եմ շատերից երջանիկ. նրա սուրբ հոգին գլխիս վերեւն է միշտ սաւառնում եւ ասում է ինձ. «Մի ընկճելիք, Զիօվաննի, օտար երկրում մի ընկճելիք. դու միշտ քաջ ես եղել եւ քաջ էլ մնա՛ մինչեւ մահ. մեռնելուց յետոյ միշտ ինձ մօտ կը լինիս :

Ուժգին թափով ղողանջեց նրա ձայնը. դէն շարտեց մուրճը եւ հայեացքը բեւեռեց վրաս :

Ես թախանձեցի, որ ինձ պատմէ Գարիբալդիի մասին իր տեսածն ու ապրածը :

Նա յարգեց իմ հետաքրքրութիւնը. բարի աչքերը ձգեց վրաս, ապա ձեռքը տարաւ ճակատը, կոշտ մատներով, ասես, հարթել ուզեց կնճիռները եւ մի փոքր մտածելով. երեւի, գեղեցիկ դէպքերով հիւսւած իր անցեալից մի յարմար թել էր որոնում պատմութիւնը սկսելու համար.

— Սրանից մօտ քառասուն տարի առաջ մեր հայրենիքը, աշխարհների ամենագեղեցիկը, Մայր-Իտալիան օտարազգի թշնամիների ոյժի տակ հեւում էր՝ շղթայակապ եւ ստրուկ. բոլոր լաւ, առնասիրտ Իտալացիները ամօթահար էին եւ վրէժխնդիր. բայց ամէնից շատ արիւնտուում էր հայրենիքի վշտով Գարիբալդիի մեծ սիրտը, եւ նրա վրէժը մեր ծովերից խորն էր եւ ուժեղ :

Նա շատ անգամ էր դուրս եկել կուրի դաշտ, թէ մեր

հայրենիքի եւ թէ ուրիշ ճնշւած հայրենիքների համար. եւ այս անգամ էլ ձայն տուեց Գարիբալդին եւ կանչեց հայրենիքի այն բոլոր քաջերին, որոնք ուրախութեամբ կ'ուզէին կուել եւ մեռնել հայրենիքի համար :

Այն ժամանակ ես մի քսան եւ հինգ տարեկան երիտասարդ էի. Երբ լսեցի նրա մարտահրաւէրը, սիրտս թնդաց, թողեցի ճնողներիս, զինավառեցի եւ բազէի պէս թռայ նրա մօտ. նա այն ժամանակ Լամբարդիայի դաշտումն էր, Թուրինոյի մօտ :

Երբ նրան ներկայացայ, քաղցրութեամբ հարցրեց անունս. այն ատեն մի փոքր ալիխառն էր նրա մօրուքը, ծ'հ, ինչ գեղեցիկ էր նա — իսկական տղամարդ, առոյգ եւ ուժեղ. իսկ հայրական զթով լի աչքերը փայլում էին հայրենիքի սիրով եւ վրէժով :

Նրա գլխի վերեւ ծփծփում էր սուրբ հայրենիքի դրօշակը. այդ դրօշակի տակ ես ուխտեցի կուել ու անձնագրեւել հայրենիքի համար, ազատութեան համար, Գարիբալդիի եւ ընկերներիս համար :

Մեր «Ալպիան որսորդներին» զինավառ, հայրենասէր վաշտերը ուրախ երգելով անցնում էին Լամբարդիայի ծաղկոտ դաշտերով, մենք բոլորս քաջ տղերք էինք, թռած-եկած ծայռոտ կղզիներից, Ապենինեան կատարներից, Կապոյտ ծովի ափերից :

Ախ, ինչքան լաւ է, վեհ է կուել հայրենիքի համար լաւ ընկերների հետ մէկտեղ, մեռնել հայրենիքի համար լաւ ընկերների գրկում...

Ախ, անցած, անգին օրեր. գիտե՞ս, մենք ինչպէս էինք սիրում իրար, զինւորներս. մի տան պէս էինք. քաղց ու ծարաւ, ցուրտ ու անձրեւ, անբուն գիշերներ սիրով էինք տանում եւ մեր վէրքերով պարծենում էինք :

Ի՛նչպէս էին սիրում մեզ իտալացի գիւղացիները. գրկաբաց էին ընդունում մեր յաղթական կտորիճներին :

Էնէ՛յ Գարիբալդի, ի՛նչպիսի սիրտ ունէր. հօ հրամայող չէր, այլ մեր ընկերն էր, մեր հաւասարը. մեզ հետ տանում էր ամէն դժարութիւն, եւ աւելին, նոյնիսկ. կուէի ամենատաք տեղը ինքն էր առաջ նետում. ա՛խ, նա որ երեւում էր մեր շարքերում, կրակ էինք կտրում եւ առիւծ դառնում. մարդ զարմանում է, թէ ի՛նչպէս նրա բարի, գթոտ աչքերը մեզ խրախուսում էին փշրել, սպանել, կոտորել թշնամուն :

Եւ մենք միշտ յաղթող էինք. մեր առաջ միշտ կանգնած էր լինում ինքը — Գարիբալդին սուրը բռնած. եւ կուռում էինք գլխապատառ-սրտապատառ. ու մնունելիս աչքներս ձգած նրա վրայ՝ «Կեցցէ Իտալիա, կեցցէ Գարիբալդի» գոչելով հանգչում էինք նրա գրկում, նրա ոտների տակ: Եւ նա բոլորի համար արցունք ունէր:

Քանի-քանի անգամ մենք ճակատ մտանք թշնամու հետ, որոնց ոչխարների վախկոտ հօտի պէս քշում էինք, մաքրում Լօմբարդիայից: Մենք թւով շատ չէինք. թշնամին մնզնից տասնապատիկ աւելի էր. բայց թիւս ո՞րն է. մեր մի տղան հարիւր էր, հազար էր:

Գարիբալդիի հետ մենք արծւի պէս մխուռւմ էինք թշնամու բանակի սրտի մէջ. խփում-ծակում էինք եւ փոթորկի ուժով քշում նրանց աշնան տերեւների պէս — այդ կանոնաւոր, թնդանօթաւոր, աւստրիական - կայսերական բանակները:

Եւ նրանց քշեցինք մենչեւ Վենետիկի լագունները. պէտք է բոլորին ծովը թափէինք, բայց Ֆրանսիայի կայսրը չգիտեմ ինչ՞ու, նամակ գրեց Գարիբալդիին եւ արգելեց առաջ գնալ. ինքը՝ Գարիբալդին, զայրացած, պատուեց կայ-

սրի նամակը եւ պատուած կտորները ետ ղրկեց նրան, իբրեւ պատասխան :

Այդ մենք բոլորս տեսանք մեր աչքերով. բայց երբ մեր թագաւորը նամակ գրեց Գարիբալդիին, որ դադարեցնէ արշաւանքը, Գարիբալդին լսեց, եւ մենք ետ դարձանք սուրբ Մարկոսի քաղաքի մօտերըից :

Այնուհետեւ մենք քանի-քանի կուիւ ունեցանք Հռոմի մարդագայլի հետ — Պապա Ռօմայի հետ, որը իշխանների եւ կարդինալների հետ ծծում է գիւղացուն եւ մորթեցնում է մարդկանց:

Ես ութ-ինն տարի շարունակ Գարիբալդիի կամաւորների բանակումն էի. եւ ընկերներով մէկտեղ շատ վէրքեր ստացանք, որոնցով եւ լաւացաւ հայրենիքի մեծ վէրքը:

Իմ սիրելի ընկերներից շատերը ընկան կուի սուրբ դաշտում. փա՛ռք նրանց. լուսաւորւի նրանց հոգին. ես էլ կ'ուզէի մեռնել նրանց հետ, Գարիբալդիի աչքերի առջև. բայց բախտը ինձ ուրիշ բան էր կամեցել:

Նրա մեծ սրտի իղծը կատարեց. ազատեց սիրելի Իտալիան, միացաւ, զօրեղացաւ... Վերջացան մեր կուի-Իտալիան, միացաւ, զօրեղացաւ... Վերջացան մեր կուի-Իտալիան, միացաւ, զօրեղացաւ... Գարիբալդիի հետ ապրած փառաւոր օրերի յուշերը :

— Սհա՛ աչստեղ է ապրում նա-իմ սրտի մէջ, — այս ասելով խփեց նա իր ոսկրացած կրծքին. — եւ նրա պատկերը կրծքիս վրայ է. — եւ նա դողդոջուն ձեռքով քանդեց կեճկոնի կոճակները եւ հանեց պարանոցից կախած մի փոքր նկար — Գարիբալդիի գլուխը... — Այս փոքրիկ նկարները դուք կը գտնէք ամէն մի աղքատ Իտալացու կրծքի վրայ — գիւղացիների, հովիւների... ինձնից անբաժան պիտի մնայ այս նկարը, եւ գերեզմանիս մէջ, յախտեմն...

Այստեղ ծերունին կանգ առաւ, նայեց ժամացոյցին, ապա եւ իմ հիացած երեսին:

— Երջանիկ ես դու, հայր Զիովաննի, որ Գարիբալդիի բազէնիցն ես եւ պարտքդ կատարել ես դէպի հայրենիքդ, բայց ների՛ր, մի հարց տամ. ի՞նչը ստիպեց քեզ քո վերջերով առողջացած այդքան թանգագին Իտալիայից հեռանալ, ընկնել այս օտար աշխարհը, անծանօթ մարդկանց մէջ:

— Էհէ՛յ, բարեկամ, բարեկամ, հառաչեց նա եւ նրա մի փոքր առաջ ոգևորւած աչքերի թարթիչներէն երկու կաթիլ արցունք կախուեցին. մի չլաւացած վէրք կար ծերունու սրտի մէջ, որին ես անզգուշութեամբ դպայ:— Ես ապրեցի երկար ժամանակ իմ հայրենի օճախի տակ, եւ աչքովս տեսայ Իտալիայի մեծութիւնը. յուզարկաւորեցի դէպի անմահութիւն Գարիբալդիի սրբազան աճիւնը... Ա՛խ, մարդ չի հասկանում, ի՞նչու են մեռնում այդպիսի մեծ մարդիկ... բայց ի՞նչ ասեմ... այնքան թանգ արիւններով դրսի թշնամիներից, օտար տէրերից ազատւած Իտալիան ընկաւ մի նոր տեսակի գերութեան մէջ— մեր արիւնակից տէրերի ճանկն ընկաւ, հարուստների եւ կառավարութեան պաշտօնեաների հարուստները սակի շղթայով կապեցին-կաշկանդեցին Իտալիան եւ իրենց ծանր թաթը դրին իտալական չարքաշ ժողովրդի սրտին եւ ննչեցին. աղքատ է շատ մեր գիւղացին ու բանւորը. իմ որդին սպանուեց մեր կառավարութեան զինւորների ձեռքով, մի բանւորական գործադուլի ժամանակ, իսկ հարսս՝ գործարանի ծանր աշխատանքից թորախտով մեռաւ. ես զայրացայ ապերախտ հայրենակիցներին դէմ, լացեցի ընկերներին արիւնով ծաղկած հողի վրայ եւ որք թողիս վեր առայ, հեռացայ այն դաշտերից, որոնց վրայով ես էլ, հազարների հետ, յաղթական անցել էի մի ժամանակ. ես չցանկացայ ստրուկ լինել մեր ազատւած հայրենիքում. Է՛հ, մենք էլ մարդ ենք, հպարտութիւն ունինք:

Նաւ նստեցի եւ եկայ այստեղ. միեւնոյն է, մի տեղ պէտք է գնայի... Եւ ես քանի ողջ եմ, չեմ վերադառնալ նորից ստրկացած հայրենիքս. հիմա ո՛չ Գարիբալդի կայ, ո՛չ էլ ուժ ունիմ կուելու... Բայց կ'ուզենայի գոնէ աճիւնս թաղէր իմ հայրենիքում, որ տարիներ յետոյ, երբ վերջնականապէս Իտալիան իր ստրուկ, չարքաշ ժողովրդով ազատէր հարստահարութեան լուծից. — յաղթական ժողովրդի ազատ ծայները լսէի, ինչպէս լսեցի երիտասարդ օրերումս...

Բայց ո՞վ է տանելու մի աղքատի աճիւնը այդքան հեռո՞ւ...

Է՛հ, թող ազատի Իտալիան, հեռւից էլ կ'ըսեմ...

Ես ապրում եմ հիմա իմ թողիս համար. Աստուած կեանք տար ինձ այնքան, մինչեւ որ թողիս իր սեփական ոտների վրայ կանգնեցնէի, յետոյ մեռնէի. ուրիշ ոչ մի իղձ չունիմ հիմա. ի՞նչ է լինելու թողնիկիս վիճակը, եթէ ես շուտ մեռնիմ... Բայց Գարիբալդիի մեծ ոգին, որ միշտ զլսիս վերեն է, խրախուսում է ինձ, եւ արդէն նրա ոգով եմ ես մխիթարւում այս աշխարհում. երբ օրս հասնի, օ՛հ, այն ժամանակ ես Գարիբալդիի մօտը կը լինեմ, այնտեղ երկնքում...

Խզեց ծիրունու ծայնը. աչքերը բարձրացրեց վերեւ, եւ ապա կանգ առաւ երկար ու երկար Գարիբալդիի նկարի վրայ...

Տիրեց մի երկիւղած լուծիւն...

Ես չուզեցայ խանգարել նրա հոգեսլացումը, որ վեհ էր եւ նւիրական:

Այդ ժամանակ ներս մտաւ թողնիկը. եւ վախվսելով բարեւեց ինձ ու մտաւ միւս սենեակը. ես վեր կացայ, համբուրեցի ծերունու կոշտացած, սեւացած ձեռքը, զլուխ տուի եւ հեռացայ:

Տարիներ յետոյ, երբ ոտքս նորից ընկաւ Օդեսա, շա՛տ որոնեցի ծերունուն, բայց չգտայ. կարօտով նայեցի նրա վաղեմի բնակարանին եւ մէկիկ-մէկիկ յիշեցի նրա բոլոր խօսքերը եւ շարժումները:

Ո՞վ գիտէ, ո՞ր է նա հիմա. արդեօ՞ք նորից՝ հոգին շքեղ երազների մէջ զրկել է ու ամուր սեղմել մանր ու ճնշին մարդկանց կօշիկները իր առնացի, հերոսական սրտի վրայ եւ համբերութեամբ կարկատում է՝ իր վերջին պարտքը կատարելով դէպի թոռնիկը, թէ՞ գոյութեան կռւի դաժան ալիքները, որ այնպէս զօրեղ են աղքատներին փշրելու, որ այնպէս գռեհիկ են դէպի մեծութիւններն ու գեղեցկութիւնները, վերջնականապէս խորտակել են այդ չքնաղ բեկորը եւ հողերին հաւասարացրել ու որբուկին թողել ապերախտ հայրենիքից դուրս, նիւթապաշտ մարդկանց մէջ՝ խեղճ ու անօգնական...

1907



## ԼՈՌԻԹԵԱՆ ԱՍՊԵՏԸ

Նորմանդիա, իր հայրենական հինաւուրց դղեակում ապրում էր քաջահոգակ ասպետ Լանսէլօն: Նա երիտասարդ հասակում զինուորել էր Խաչակիրների բանակին, արիաբար կռուել էր սպարապետ Կոնֆրիտի հետ կողք-կողքի, յաղթանակով ներս էին մտել Երուսաղէմ, եւ Կոնֆրիտի հետ միասին վար էին դրել Մահմէտականների արիւնով կարմրած իրենց սուրբերը Քրիստոսի սուրբ գերեզմանի վրայ, լուծելով միանգամայն իրենց սրբազան ուխտը:

Այժմ փոթորիկը հանդարտել էր նրա արեան մէջ, եւ նա խաղաղ եւ բախտաւոր՝ հանգչում էր իր սիրած կնոջ մօտ՝ վայելելով սէր եւ յարգանք բոլորի կողմից:

Լանսէլօն մի հատիկ տղայ ունէր, գեղեցիկ եւ կտրին Արտիւրը, որին սիրում էր աչքի լոյսից աւելի:

Մի օր, երբ Արտիւրը դղեակից դուրս հայրական դաշտերում զբօսնում էր մենակ՝ երիտասարդական շքեղ երազների մէջ սլացած՝ մայրը կամացուկ մօտեցաւ նրան, քնքուշ ձեռքը գուրգուրանքով դրեց նրա ուսին, եւ, նայելով նրա վնիւտ աչքերին՝ ասաց մի զսպւած ձայնով:

— Սիրելի տղաս, մի գաղտնիք ծանրացել է սրտիս վրայ, եւ վճռեցի քեզ ասել, բայց դու ուրիշին այն երբեք եւ երբեք չպիտի ասես, — լինի դա անձնէր ընկեր թէ՛ քեզ անհուն սիրող կին. — մէկ օր, ում գաղտնիքդ ասես, կիսով չափ յաղթւած ես եւ կը դառնաս նրա գերին. երկրորդ օր, ոչ ո՞ք կարող է գաղտնիքդ պահել. ընկերը կարող է իր կեանքը վտանգել քեզ համար, բայց գաղտնիքդ անկարող է պահել:

Մայրը ընդհատեց խօսքը, եւ հարցական հայեացքը բեւեռեց որդու աչքերի մէջ, որոնք ներքին մի սարսափից պղտորել էին: Բիչ լուծիւնից յետոյ մայրը շարունակեց .

— Գիտեմ, ծանր է գաղտնիքի բեռը, տես, ես էլ չկարողացայ ծածկել, գիտեմ, դժբախտ պիտի զգաս այս գաղտնիքի մէջ, բայց աւելի դժբախտ՝ եթէ ասես — լաւ իմացի՛ր, եթէ անգամ կեանքդ զոհես ընկերի համար, նա նորից անգոր է գաղտնիքդ պահելու, արեգակը դեռ չի տեսել այն բախտաւորին, որը գտած լինի մի այդպիսի գաղտնապահ ընկեր... .

— Իսկ եթէ գտնեմ մի այդպիսի ընկեր... . դողդոջուն ծայնով հարցրեց որդին :

— Այն ատեն, վրայ բերեց մայրը, դա կը լինի մի հրաշք եւ դու կը լինես աշխարհիս մէջ միակ բախտաւորը, որ գտել է անփոխարինելին... .

Եւ ապա անհնարին ճիգ դնելով իր յուզմունքի վրայ՝ հագիւ լսելի շնչիւնով մայրն ասաց.— Դու ասպետ Լանսէլոյի որդին չես. քո հայրը մի թափառական ասպետ էր, որ Լանսէլոյի բացակայ օրերում հիւր եղաւ մեր դղեակում. քաջ էր նա եւ գեղեցիկ: Կարճատեւ յափշտակեց նա իմ սիրտը եւ գնաց Սուրբ Երկիրը պատերազմելու եւ այլեւս չվերադարձաւ.

Արտիւրի ծնկները ծալեցին. նստեց մի քարի վրայ՝ գլուխն առած ափերի մէջ, նա այլեւս չէր լսում, գունատւում էր եւ աւելի գունատուում եւ դողդողում էր, ասես, թէ մեռնում էր... .

Մայրը լալագին ասաց.— Ների՛ր ինձ, ների՛ր, հոգիս, ես չէի կարող ծածկել. ես պարտական էի ասել... . Եւ արագ քայլերով շտապեց դէպի դղեակը... .

Երբ ուշքի եկաւ Արտիւրը, արդէն երեկոյանում էր, տոները, ասես, շղթայի զարկած, հագիւ քարշ տալով, ծանր ու դանդաղ քայլերով գնաց դղեակը. որպէսզի չհանդիպի Լանսէլոյին, խելագարի պէս վազեց մտաւ իր սենեակը :

Ոչ ճաշարահ գնաց ընթրիքի եւ ոչ մարդ ընդունեց մօտը. խորտակւած ընկել էր անկողնու վրայ, լալիս էր, եւ նորից լալիս: Արցունքով այրող աչքերի առջեւ պատկերանում էր ազնիւ, հայրագութ Լանսէլօն, որին ինքը սիրում էր որդիական իր հզօր զգացմունքով, բայց որ հիմա թւում էր օտար, եւ հեռացած-հեռաւոր մէկը. եւ մի նոր, սուր ու անհանգիստ զգացմունք զարթնել էր նրա հոգում, որը տենչում էր գտնել, տեսնել, գոնէ պատկերացնել այն թափառական անյայտ, քաջ եւ գեղեցիկ ասպետին, որ գնացել է եւ այլեւս չի վերադարձել:

Եւ զգալով, որ այլեւս անհնարին է մնալ օտար յարկի տակ մի ահաւոր գաղտնիքի հետ միասին, վճռեց հեռանալ դղեակից, հեռանալ իսկոյն եւ անպայման, որովհետեւ կարող էր պատահել՝ որ մի օր նա խոստովանէր Լանսէլոյին այս գաղտնիքը, որով մահի հարւած կուտար ազնիւ եւ ծերունի Լանսէլոյին: Արտիւրը խորագին խոցում էր Լանսէլոյին, որի կեանքը եւ յոյսը ինքն էր— անհայր Արտիւրը :

Կամքը երկաթի պէս ամրացրեց նրա որոշումը. անյապաղ թռաւ անկողնուց, սրբեց աչքերը, մի նամակ թողնելով Լանսէլոյին ուղղած, ուր նա յայտնում էր՝ թէ գնում է արկածներ եւ փառք գտնելու, խնդրելով չօրոնել իրեն մինչեւ իր յաղթական վերադարձը:

Իջաւ բակը, ախտուից հանեց իր նժոյգ ձին, շտապով հեծաւ եւ ընկաւ ճանապարհ՝ մի հզօր վճիռ հոգու մէջ,—



դառնալ իր անյայտ հօր նման թափառիկ եւ անտուն, սակայն գտնելու համար մի ընկեր, որ կարող լինի պահել իր սոսկալի գաղտնիքը:

Մեկուսի թողնելով մեծ եւ բանուկ ճանապարհները, նա ընտրեց նեղ արահետները, հետքը կորցնելու համար. զնաց անտառներով ու շուանցքներով օրեր շարունակ: Եւ մի օր լեռնային մի անձուկ կիրճում նա տեսաւ, որ երեք աւազակ յարձակել էն մի երիտասարդ ասպետի վրայ, նկատեց, որ մի աւազակ արդէն սպանւած ընկած է գետին, մնաւոր ասպետի աջ ձեռքը վիրաւորած է, սուրբ փշուած, միայն վահանով է պաշտպանում իրեն օրհասական հարւածների դէմ: Արտիւրը մի ուտումով թռաւ աւազակներին վրայ, նիզակի մի հարւածով ծակեց մէկի մէջքը եւ վահանի մի հօր թափով ջնջխեց միւսի գլուխը, այնինչ երրորդը սուրը մխրճելու վրայ էր ուղղակի Արտիւրի սրտի մէջ, երբ նժոյգը ծառս ելաւ, վրիպեց հարւածը. եւ Արտիւրը մազապուրժ ազատեց. աւազակը բարի համարեց փախչել, զարհուրած՝ ընկերներին հասած վիճակից. եւ երբ Արտիւրը դարձրեց ձիու գլուխը՝ փախչողին հետապնդելու, վտանգից զերծած ասպետը ճիգով մօտեցաւ Արտիւրին, իջաւ ձիուց, եւ բռնելով Արտիւրի ձիու սանձիցը, ասաց — Ո՛վ քաջդ եւ ազնւասիրտ ասպետ, հոգուս ընկեր, դու փրկեցիր իմ կեանքը վերահաս մահից, հրամայիր, ինչ որ կը ցանկանաս, անեմ քեզ համար. մինչեւ մահս պարտական եմ քեզ:

Արտիւրը նոյնպէս իջաւ ձիուց եւ բռնելով ասպետի վիրաւոր ձեռքը, պատասխանեց. Ես միայն իմ պարտքս կատարեցի, եւ քեզից մի խնդիր ունիմ— լինենք իրար անդաւաճան, մտերիմ ընկերներ. սրանից մեծ վարձ չեմ կարող ունենալ իմ ջնջին արարքի համար, ինչպէս դու ասիր, ով ազնիւ ասպետ— հոգու ընկերներ:

Եւ նրանք իրար երեք անգամ գրկնցին, եւ երեք անգամ համբուրեցին— դառնալով ընկեր:

Ապա նրանք հեծան ձիերը եւ զարթ սրտով ընկան ուղի դէպի ընկեր ասպետի, Միլոնի դղեակը: Ճանապարհին Արտիւրը ներկայացրեց իրեն, իբրեւ որդին քաջահուշակ, խաչակիր Լանսլոյի, որի համբաւը լսել էր ամէն ականջ. ապա երբ նրանք մի երկու յաղթական արկածներից յետոյ մտան Միլոնի հողը, Արտիւրն ասաց.

— Միբելի Միլոն, հոգու ընկեր, բանի որ մենք մի հոգի ենք դարձեալ, ես քեզից չպիտի թաքցնեմ մի ծանր եւ սու գաղտնիք, որը լինելու է նոյնպէս քո գաղտնիքը՝ թաղւած սրտիդ մէջ, իբրեւ մի սրբազան մուկ:

— Ի՛նչ կասկած, երդում եմ, թո՛ղ Աստուած պապանձ դարձնէ իմ լեզուն այն օրը, երբ ես ասեմ ուրիշին այդ սրբութիւնը:

Եւ Արտիւրը աւանդեց նրան իր գաղտնիքը:

Նրանք մօտեցան դղեակին, սպասաւորները առաջ եկան նրանց, եւ մեծ շուքով տարան Արտիւրին ամենաճոխ հիւրասենեակը, լւացին եւ հագցրին նոր, ընտիր զգեստներ: Գիշերը ջահերով լուսավառւած էր Միլոնի դղեակը եւ բուրգերի պատուհաններում եւ պարիսպների կեռիքների վրայ, բազմաթիւ կաւէ ճրագամանների մէջ բոցերը լուսէ ծաղիկների պէս թրթռում էին:

Ջարդարւած էր սիւնակապ մեծ դահլիճը եւ փարթամ սեղան յարդարած:

Միլոնի նազելի օրիկնոջ աջ կողքին նստել էր Արտիւրը. երաժիշտները երգում էին եւ նաժիշտները պարում գիսակները ծաղիկներով պնւած, մանկլաւիկները թիթեռնիկի պէս ճախրում էին հազար կողմերով, մատուակները ան-

դուր բերում էին հինաւուրց զինիները, դատարկում էին զինու արծաթեայ սափորները եւ նորից լցում:

Ասպետ եւ սպասաւոր խմում էին Արտիւրի արեւշատութեան եւ նրա ազնիւ քաջութեան համար, խմում էին երկու անդաւաճան ընկերների սիրոյ անվախճանութեան համար:

Սյապէս, շաքաթներով, խնճոյքների մէջ անցան զիշերներ եւ ցերեկներ, ասպետական շքեղ մրցահանդէսներով ու ձիարշաւներով:

Մի օր, երբ Արտիւրը պարտիզում, զբօսնում էր մինակ, յանկարծ ականջին հասան ծառերի տակ թագնուած նաժիշտների շշուկները. նրանցից մէկն ասաց.

— Գիտէ՞ք, աղջիկներ, ինչո՞ւ է ասպետ Արտիւրը այսպէս տխուր, երէկ տիրուհիս ասաց, որ նա անյայտ հօր տղայ է...

Արտիւրը այլեւս ոչինչ չուզեցաւ լսել, փոթորիկի պէս շտապեց դղեակը, զինուեց, դուրս քաշեց ախոռից ձին, թռաւ դարբասից դուրս, եւ կամուրջի զլխին կանգնած՝ կատաղօրէն հարւածեց նիզակով վահանին. վազեցին եկան դրանիկները:

— Գնացէ՛ք ասացէ՛ք Միլոնին, որ ես նրան մենամարտի եմ կոչում:

Դրանիկները զնացին. յուզւած եկաւ Միլոնը:

— Զէնքերդ առ եւ եկ մենամարտի, — հրամայեց Արտիւրը:

— Պատճառը, սիրելի Արտիւր...

— Պատճառը յետոյ կ'իմանաս, ասպետը իրաւունք չունի պատճառ հարցնել, երբ նրան մենամարտի են կոչում:

Միլոնը մեկնեց եւ վերադարձաւ զինւած ու ձիաւորւած:

Ապա երկու ասպետները յետ-յետ զնացին եւ նորից կատաղօրէն վերադարձան եւ այնպիսի ուժգին թափով դէպան իրար, վահան՝ վահանի, եւ նիզակ՝ նիզակի, որ Միլոնը տեղաշարժ եղաւ վարաւանդից եւ փուեց գետին: Արտիւրը մէկ ականթարթի մէջ թռաւ ձիուց եւ ոտքը դրեց Միլոնի կրծքին:

— Դաւաճա՛ն, ուխտադրուժ, թող պապանձուի քո լեզուն այսուհետեւ, ինչպէս որ դու երդուեցիր:

Եւ յանկարծակի եկած սարսափահար թիկնապահների առջեւ Արտիւրը բացեց Միլոնի բերանը, բռնեց լեզուն եւ սրով կտրեց լեզւի ծայրը, ասպա շտապ հեծաւ ձին, եւ հողմի պէս սլացաւ, ջախջախելով եւ հրավառելով ճանապարհի մէջ ընկած քարերը, ու իր ետեւից թողնելով փոշին՝ ծուխի նման:

Նրան հետեւեցին Միլոնի զինուորները. շրջապատեցին նրան մի ձորի մէջ. քաջաբար կուռեց Արտիւրը, մեն-մենակ, գետին տապալեց մի քանի զինուորներ, բայց վերջը՝ գերի ընկաւ, շղթայ զարկեցին նրա ձեռքերին, կապեցին ձիու վրայ եւ հետնեղն առան տանելու Միլոնին ընծայ:

Ճանապարհին մի քանի արկածասէր ասպետներ, իրենց թաքստոցից տեսան այս, վրդովեցին՝ գտնելով այս հակառակ ասպետական աւանդներին, որ մի երիտասարդ ասպետի այսպէս խայտառակ վիճակի մէջ՝ գերի են վարում զուհիկ զինուորները. մէկ խօսք արին, յանկարծակի յարձակեցին խմբի վրայ. ահաբեկւած զինուորները թողին Արտիւրին եւ ցրիւ եկան, փախս տալով: Մի քանի ասպետներ շտապեցին կտորելու Արտիւրի շղթաները. Արտիւրը խորին յուզումով շնորհակալութեան խօսքեր էր թողնում:

— Ազնիւ անծանօթ ասպետ, մեր պետը քաջ եւ վե-

հանձն Արնուղին է, նրան յայտնիր քո ասպետական զգացումները :

Եւ մատնացոյց արին մի շքեղ ասպետի վրայ, որ կանգնած էր իր ընկերների մէջ :

Արտիւրը քայլեց դէպի նա, գլուխ տալով ասաց.—

— Քաջ եւ վեհանձն Արնուղ, դու փրկեցիր մենաւոր ասպետին, խաչակիր Լանսլոյի որդուն, անարգ մահից: Կեանքս պատրաստ եմ պատուով նւիրելու քո կեանքին. սակայն այդ քիչ է,— ես կը լինեմ քեզ համար անփոխարինելին— քո հոգու ընկերը :

— Պանծալի Լանսլոյի ազնիւ որդի, ինձ համար ամենամեծ պատիւն է ընկեր կոչել քեզ... :

Եւ նետեց ձիուց վար, երեք անգամ գրկեց Արտիւրին եւ երեք անգամ համբուրեցին. ապա հանեց իր դամասեան պատուաւոր սուրը եւ կախեց Արտիւրի մէջքից : Թափառիկ ասպետները խումբը, Արտիւրին իրանց ընկեր ունենալով, շարունակեցին իրենց արկածալից, զւարթ կեանքը. մի օր այս լեռան լանջին էին, միւս օրը մի փառաւոր դղեակում, որպէս հիւր, մէկէլ օրը դաշտում, յաղթական արկածից յետոյ, բացօթեայ ուրախ խնճոյքի նստած :

Ամէնը սիրում էին նրան. բայց ամէնից շատ սիրում էր Արնուղը :

Մի օր Արտիւրը սիրտը բաց արաւ Արնուղին անհուն հաւատքով դէպի նա, ինչպէս անդաւաճան հոգու ընկերին, իր հոգու կէսին :

— Ի՞նչ կասկած, հոգիս, ասաւ Արնուղը, երդում եմ, թող Աստուած պապանձ դարձնէ իմ լեզուն այն օրը, երբ ես ուրիշին յայտնեմ այդ սրբազան գաղտնիքը :

Անցաւ բաւական ժամանակ նոյն թափառական արկածների եւ ուրախ խնճոյքների մէջ :

Մի օր ասպետներից մէկի մօտ զինարբուք էր. Արտիւրը նրանց հետ էր. սակայն շատ տխուր էր ու մռայլ. որքան խմում էր զինին, այնքան աւելի էր մռայլուում : Մի հարբած ասպետ գոչեց .

— Լի՛ց գաւաթդ, խմենք կենացդ, սիրելի Արտիւր. գուր մի՛ տխրիր. իրապէս ոչ ոք զիտէ իր իսկական հօր անուկը... :

Արտիւրը օձից խայթուածի պէս իսկոյն թռաւ վրանից դուրս, գնաց զինեց, նստեց ձին եւ եկաւ կանգնեց Արնուղի վրանի առջեւ եւ որոտաց .

— Արնուղ, զէնքերդ առ եւ ել մենամարտի :

— Պատճառը, սիրելի Արտիւր, հարցրեց շփոթուած Արնուղը, վրանից դուրս գալով :

— Պատճառը յետոյ կ'իմանաս, ասպետը իրաւունք չունի պատճառը հարցնել, երբ նրան մենամարտի են կոչում :

Արնուղը շտապով զինեց եւ ձիաւորեց : Վրաններից դուրս թռան ասպետները, մոլոր ու անտեղեակ անցուդարձին :

Ապա երկու ասպետները յետ-յետ զնացին եւ նորից կատաղօրէն վերադարձան ու ժգին թափով դիպան իրար վահան՝ վահանի՛, նիզակ՛ նիզակի, որ Արնուղը տեղաշարժ եղաւ վարաւանդից եւ փուլեց գետին :

Արտիւրը մի ակնթարթի մէջ թռաւ ձիուց եւ ոտը դրեց Արնուղի կրծքին :

— Դաւաճան, ուխտադրու՛ժ, քո երդումի համաձայն ես արդար էի կտրելու քո լեզուն, ինչպէս կտրեցի մի ուրիշ ասպետինը. բայց քանի որ դու փրկել ես իմ կեանքը, երախտիքով ներում եմ քեզ :

Այս խօսքերի վրայ ամօթահար թողնելով Արնուղին , Արտիւրը խթանեց ձին , եւ կայծակի պէս սլացաւ , ջախջախելով ու հրավառելով ճանապարհի վրայ ընկած քարերը ու իր ետեւից բարձրացնելով փողին՝ ծուխի նման :

Այս անգամ մեկուսի թողնելով նեղ արահետները՝ նա ընտրեց մեծ ճանապարհները եւ գնաց օրեր շարունակ :

Օրեր շարունակ գնալուց յետոյ , լեռնային բաւիղից դուրս գալուց նա յանկարծ նկատեց մի բլրակի վրայ կառուցւած մի սիրուն դղեակ , որ պաշարւած էր սոււար զինւորներով , մօտեցաւ եւ հարցում արաւ առաջին պատահած զինւորին՝ իմանալու պաշարման պատճառը :

— Այս դղեակի տիրուհին գեղեցիկ Իզուրն է , որին սիրում է մեր աւատապետը . մեր տիրոջ սէրը մերժեց այդ հպարտ աղջիկը . ապա մեր հօր տէրը զայրացած եւ այս թոյլ կնոջից անպատուած զգալով իրեն Ֆրանսայի բոլոր ասպետների մէջ , եկաւ պաշարեց , որ բռնի տիրէ թէ դըղեակին եւ թէ նրա տիրուհուն : Երրորդ օրն է , մենք կըռուում ենք , բայց անշուշտ յաղթանակը մերն է :

— Ո՞վ է այդ աղջկայ հայրը կամ նրա պաշտպան ասպետը ,— հարցրեց Արտիւրը :

— Նա ոչ հայր ունի , ո՛չ եղբայրներ եւ ո՛չ պաշտպան ասպետ . կըռում են նրա հօր հաւատարիմ ծառաները .— պատասխանեց նոյն զինւորը :

Արտիւրի սիրտը լցւեց արդար զայրոյթով դէպի անարգ եւ բռնակալ ասպետը , որ յանդգնել էր , հակառակ ասպետական բոլոր ազնիւ աւանդներին , նեղել մի անպաշտպան , թոյլ կնոջ : Առանց երկար խորհելու , խթանեց ձին դէպի բռնադատողի վրանը . ձեռնոցը նետեց վրանի դրան առջեւ , սուրը մերկացրեց եւ կանգնեց խրոխտ :

Կատաղած ցուլի պէս վրանից դուրս նետեց նա , յաղթանդամ եւ չարադէմ մի ասպետ , եւ գոռաց ամպի պէս .

— Ո՞վ է այն ստահակը , որ յանդգնում է ինձ մենամարտի կոչել : [Եւ արհամարհանքով չափեց Արտիւրին գլխից մինչեւ ոտքերը :

— Ստահակը նա է , որ կուլի է մտնում թոյլ արարածի դէմ . ասպետական վսեմ օրէնքների համաձայն՝ քեզ մենամարտի եմ կոչում . յաղթւողը պիտի հնազանդի յաղթողի պայմանին :

Մանկլաւիկները բերին աւատապետի զէնքն ու զրահը եւ պարաւանդած ձին : Ապա երկու ասպետներ յետ-յետ գնացին եւ նորից կատաղօրէն վերադարձան ու այնպիսի ուժգին թափով դիպան իրար վահան՝ վահանի , նիզակ՝ նիզակի , որ աւատապետը տեղաշարժ եղաւ վարաւանդից եւ փուեց գետին : Արտիւրը մի ակնթարթի մէջ թռաւ ձիուց եւ ոտքը դրեց պարուածի կրծքին :

— Զօրքերդ հաւաքի՛ր եւ հեռացի՛ր քո հողը :

— Յօժար եմ , համաձայն ասպետական տւած խօսքիս : Փչեցին նահանջի շեփորները , զինւորները հաւաքեցին վրանները եւ հեռացան գլխիկոր :

Եւ երբ Արտիւրը ուզում էր շարունակել իր ուղին , յանկարծ բացւեցին դղեակի դարբասի փեղկերը . կամուրջը կախեցին խրամատի վրայ , վազէ-վազ եկան իշխանուհու ծառաները , գլխաբաց կանգնեցին Արտիւրի ճանապարհի առաջ . խոնարհ բռնելով նրա ձիու սանձը , ասացին միաձայն .

— Մեր տիրուհին ջերմապէս խնդրում է քաջ եւ ազատարար ասպետիդ՝ բարի լինէք իր մօտ հիւր լինելու , որ պէսզի նա կարողանայ իր շնորհակալութիւնները մատուցանել :

Արտիւրը՝ հնազանդ տիրուհու կամքին, ձիու ընթացքը ուղղեց դէպի դղեակը :

Գեղեցիկ Իզոլդը եւ նրա մայրը առաջ եկան նրան մինչեւ կամուրջը. ասպետը ձիուց թռաւ ներքեւ եւ սաղաւարտը ափն առած՝ ասպետին վայել յարգանքով համբուրեց մօր եւ Իզոլդի ձեռքերը :

— Ազնիւ եւ արի ասպետ, դուք ազատեցիք դուստրս մի անարգ մարդու ստոր պահանջումից, ինչո՞վ կարող ենք երախտահատոյց լինել ձեր անգնահատելի վեհանձնութեան համար :

— Ո՞վ ազնիւ տիրուհի, ես միայն իմ պարտքս եմ կատարել, եւ վարձքս ստացել եմ արդէն՝ կատարելով ասպետական աւանդները, մեզմ եւ համեստ ծայնով պատասխանեց Արտիւրը :

Այն ինչ Իզոլդը լուռ էր. բայց արտասուալից եւ բազմախօս հայեացքով նայում էր Արտիւրին, կարծես, ուզում էր ասել, թէ՛ դու ինձ փրկեցիր, ես քոնն եմ հիմա :

Վեհանձն ասպետ, շարունակեց մայրը. բարի եղէք հիւր լինել մեզ մօտ, ինչքան կամենաք, դուք շատ յոգնած էք երեւում եւ, աւա՛ղ, փոշիների մէջ կորած :

— Ծատ եւ շատ շնորհակալ եմ, պատասխանեց ասպետը. ցաւում եմ, որ պիտի մերժեմ ձեր վեհանձն առաջարկը. ես մի նպատակ ունիմ, որին ուզում եմ վաղորօք հասնիլ :

Եւ քնքուշ աչքերով նայեց Իզոլդին, որը թէեւ լուռ էր, բայց արտասուալից եւ բազմախօս հայեացքը կարծես, ուզում էր ասել, թէ՛ մնացի՛ր ինձ մօտ, դու ինձ փրկեցիր, ես քոնն եմ հիմա: Եւ Արտիւրի երիտասարդ արիւնի մէջ կրակը բորբոքեց. այլեւս առանց հակառակելու՝ տաւ ձին ծառաներից մէկին եւ իրեն յանձնեց դղեակի տիրուհիների կամքին :

Սպասաւորները առաջնորդեցին Արտիւրին մի շքեղ սենեակ, լողացրին նրան, օծեցին անուշահոտ իւղերով, հազցրին ամենագեղեցիկ զգեստներ: Գղեակը լուսավառած էր. զարդարւած էր սիւնակապ մեծ դահլիճը, եւ փարթամ սեղան յարդարած. Արտիւրը նստած էր երկու տիրուհիների մէջտեղը. երաժիշտները երգում էին, նաժիշտները պարում, եւ մատուակները բերում էին հինաւորց գինիները :

Այսպէս տեսց մի քանի օր. սակայն երբ Արտիւրը մտածեց շարունակել իր ճանապարհը, տեսաւ որ սիրտը կապւած է գեղեցիկ Իզոլդի հետ, եւ անզօր է բաժանուել :

Նոյն գիշերը դղեակում հարսանիք էր : Ազնիւ եւ քաջահամբաւ Լանսլոյի որդին ամուսնանում էր գեղեցիկ եւ հարուստ, միամօր դուստր Իզոլդի հետ: Ոչ ոք չէր կարող նրանցից աւելի բախտաւոր լինել աստղերի նախանձօտ աչքերի տակ :

Եւ մի օր Արտիւրը մեղրալուսնի քաղցրութիւնը դեռ շրթունքին՝ քնքուշ զգւելով, սակայն կրակէ համբոյրները վառելով Իզոլդի շրթունքին՝ շնչաց նրան իր գաղտնիքը...

— Ոհ, իմ հազար սիրելի, իմ անգին, իմ հոգի եւ լոյս Արտիւր, այդ ոչինչ, ես քեզ եմ սիրում, եւ ոչ թէ քո ծագումը, սէրն է քեզ ծնել, սիրով եմ ես քեզ տիրել. քո գաղտնիքը— իմա է, երդւում եմ. թող Աստուած պտպանձ դարձնէ իմ լեզուն այն օրը, երբ ես ասեմ ուրիշին այդ սրբութիւնը :

Եւ նրանց շրթունքները ձուլեցին իրար հետ՝ մոռանալով գաղտնիքը, եւ անցեալը եւ ներկան, եւ ապագան :

Ոչ ոք չէր կարող նրանցից աւելի բախտաւոր լինել ցաւերով ու չարով լի այս երկրում :

Եւ մի օր, երբ Արտիւրը դուրս գալով Իգօլի սենեակից՝ նոր խմած համրոյրի զինին շրթունքների վրայ դեռ թաց՝ ուզում էր ձիով մի զբօսանք կատարել, անցաւ զօքանչի սենեակի դռան առջեւից, պատահաբար լսեց խոստովանայր քահանայի ձայնը:

— Տիրուհի, բախտաւոր է արդեօք դուստրդ՝ Իգօլը ազնիւ Արտիւրի հետ: [Մորին հառաչանքով պատասխանեց զօքանչը .

— Չեմ կարող կարծել, սուրբ հայր, որ դուստրս բախտաւոր լինի, քանի որ, խոստովանանք լինի առաջի Աստծու, Արտիւրը Լանսէյտի որդին չէ, հապա...:

Արտիւրի գլխին փուլ եկաւ երկինքը, աչքերը մթագնեցին, ու ժգնապէս պատեանից մերկացրեց սուրբ. սակայն մի վայրկեան խաւարած զլսի մէջ փայլատակեց այն միտքը թէ՛ ասպետը սուր չլիտի քաշէ կնոջ վրայ. մի փոքր ժամանակ շարած մնալուց յետոյ, խելագարի պէս թռաւ ախոռը, ցատկեց անպատրաստ ձիու մէջքին, սաղաւարտը քաշեց մինչեւ ականջները վահանը կախեց մէջքից՝ ինչպէս անում են նահանջի մէջ փախչող ասպետները՝ մէջքից հարւած չընդունելու համար, եւ մերկ սուրբ ձեռքին՝ հողմի պէս սլացաւ դղեակի դարպասներից դուրս. պահապան եւ դրանիկ սարսափած վազեցին դէպի կամուրջը, եւ կարկամած նայում էին փոշու մրրկի մէջ կորած Արտիւրին, որ արշաւում էր՝ որպէս դիւահալած: Քառատրոփ, սանձակոտոր եւ քրտինքի մէջ ծովացած վազում էր ձին. Արտիւրը վազրի պէս կառչել էր անվարաւանդ ձիու մէջքին, որի աջ ու ձախ կողմից կաթկթում էր արիւնը Արտիւրի հզօր լսթաններից վիրաւոր. կայծակի պէս մխրճում էր ձին անծայր տարածութեան մէջ, երկաթէ պայտերով փշրելով կամուրջ ու սալաքար:

Ճանապարհորդները ահաբեկւած՝ փախչում էին նրա առաջից, եւ ամուր սիրտ ունեցողները միայն յանդգնում էին նայել սուրող խելակորոյս ասպետի ետեւից, որի զլսից թռել էր սաղաւարտը եւ հողմը քաշքշում էր իր երկար մազերը. հուրհրում էր նրա մերկ սուրբ եւ վահանը մէջքի վրայ որոտում:

Գիշերը վրայ հասաւ, եւ շնչակտուր ձին կանգ առաւ մի լճի ժայռաբարձ ափին. այստեղ Արտիւրը ուշքի եկաւ, յետ դարձրեց ձին լճափից, եւ հանգիստ քայլերով, մոլոր ու մոլորուն ընթացաւ անշաւիղ դաշտերով ու հերկւած արտերով, քարքարոտ առապարներով. գնում էր առանց մի նպատակի:

Եօթներորդ օրը նա մի անտառի լուսթեան լսորքում պատահեց մի ծերունի մարդու, որ նստել էր իր հիւղակի դրան առաջ, արեւկող, տաքանալու համար: Արտիւրը մթագնած աչքերը յառեց ծերունու վրայ եւ ողջոյն աւեց, ձին կանգնեցնելով:

— Ողջոյն. որդեակ իմ, սիրալիր պատասխանեց ծերունին, — դու յոգնած ես, քաղցած եւ ծարաւ, անշուշտ. իջեւանիր մօտս, կտրիր իմ հացի պատառից եւ հանգիստ առ:

Արտիւրը հնազանդեց ծերունուն. իջաւ ձիուց եւ նստեց ծերունու կողքին: Յոգնած մարմինը հացով ու ջրով կազդուրելուց յետոյ, հառաչանքով նայեց ծերունուն:

— Ի՞նչն է հալածում քեզ, որդեակ իմ, զօրովով հարցրեց ծերուկը:

Արտիւրը մի պահ խորհելուց յետոյ, պարզեց իր ճակատի կնճիռները եւ մէկ-մէկ անվերապահ պատմեց բարի ծերունուն իր զլսին եկած արկածները: Ծերուկը կշռելով իր ամէն խօսքը, բարի եւ քաղցր հայհացքը ուղղելով Արտիւրի պղտոր աչքերի մէջ, նոյնքան բարի եւ քաղցր ձայնով ասաց.

—Ամենից առաջ, սիրելի որդեակ իմ, մարդ պիտի այն-պիսի բան անի աշխարհքի վրայ, որ կարողանայ սրտաբաց պատմել բոլորին. սակայն դառնանք քո մասին. ուրիշի լեզուն կտրելուց առաջ, պիտի կտրէիր քո իսկ լեզուն. քանի որ, դու ինքդ, որ քո ամենահաւատարիմ եւ անդաւաճան ընկերն ես, չես կարողացել քո գաղտնիքը պահել, ի՞նչպէս կարող ես պահանջել այն՝ քո ընկերից, որն ունի եւ իր ընկերը, որին կը հաղորդէ. եւ սա էլ ունի իր ընկերը, եւ այսպէս անվերջ :

Դու թէեւ քաջ ես, բայց ամենամեծ քաջութիւնը իր սեփական լեզուն զսպելն է : Այս անտառի ծայրում կայ մի վանք, ուր մենակեացները շատ են խորհում եւ բնաւ չեն խօսում, զնա՛ այնտեղ եւ եթէ երեք տարի կարողացար լռել, ապա դու կը լինես ամենայաղթ քաջը, որ տիրել ես քո լեզւին. այն ժամանակ կարող ես նորից մտնել աշխարհ, մարդկանց մէջ, եւ ունենալ թէ կին, թէ ընկեր...

Այսպէս ասաց ծերունին :

Արտիւրը երախտիքով համբուրեց ծերուկի աջը, նստեց ձին եւ զնաց՝ հաշտ եւ հանգիստ: Հասաւ վանքին, ձին կապեց դրան մօտիկ մի ծառից, սուրն ու վահանը նետեց զետնին եւ երեք անգամ հարւածեց վանքի դրան մուրեք. ներս ընդունեց, վանահօրից իրաւունք ստացաւ մենակեաց համարելու, եւ համր ու լռիկ մտաւ իր մենաւոր խուցը եւ ամփոփեց լուծեան մէջ :

1917



ՀՀ Ազգային գրադարան



NL0331884

32859

ՄԱՏԵՆԱՇԱՐ “ՀՐԱԶԴԱՆ,”



- |  |    |
|--|----|
| 1.— Կեանքի եւ Մահուան Երգեր (Մ. Զարիֆեան)              | 50 |
| 2.— Սուլամիք (Սողոմոն Թազաւորի Կեանքէն<br>(Ա. Կուպրին) | 25 |
| 3.— Արձակ էջեր (Ա. Իսահակեան)                          | 60 |
| 4.— Միւրիճա, Անտիպ Վեպ (Փիկո Միլ)                      | 40 |



ԴԻՄՆԼ.— Հայկազէն Գրատուն, Չամբախըլար, Յակոբեան  
հան, քիւ 9, Կ. ՊՈԼԻՍ